

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 1-12

ՅՈՒՆՈՒԱՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՃԼԴ. ՏԱՐԻ 2020

ԷԶԵՐ ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԱԻՈՒՇԵՑՈՒ ՄԱՏԵՆԱ- ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԻՑ

Յակոբ Զտուեան

Հայ եկեղեցական մատենագրութեան պատմութեան մէջ իր ուրոյն և հաստատուն տեղն է զբաղեցնում ԺԲ.-ԺԳ. դդ. վաստակաշատ հեղինակ Վանական վարդապետ Տառուչեցին: Մեծ և բազմաշերտ է նրա հոգևոր, գիտամշակութային գործունէութիւնը. եկեղեցավարչական, մանկավարժական, մատենագրական: Նրա ջանքերով հիմնադրուած Խորանաշատ վանքը (1215-1220) շուտով դառնում է Արևելեան Հայաստանի ուսումնագիտական կարեւորագոյն կենտրոններից մեկը: Իր եռանդուն կազմակերպչական գործունէութեամբ նա ոգին ու գլուխը դարձաւ մի բովանդակ դպրոցի¹, որի սաները (Վարդան Արևելցի, Տէր Իսրայէլ, Կիրակոս Գանձակեցի, Գրիգոր Ակնեցի և ուրիշներ) հիմնաւոր գիտելիքներով ծանրաբեռն մուտք գործեցին հոգևոր ասպարէզ՝ իրենց անուրանալի նպաստը բերելով միջնադարեան մտքի տարբեր ոլորտներ: Վանական վարդապետը մասնաւոր հետաքրքրութիւն է

ցուցաբերել նախնեաց հոգևոր ժառանգութեան նկատմամբ. նա խնամքով հաւաքել է նրանց վաստակը եւ դրանով նպաստել դրա պահպանութեան գործին: Անցեալի աստուածաբանական ժառանգութեան նկատմամբ ակնածոտ վերաբերմունքը, ինչպէս երեւում է, նրա դպրոցի ուսումնագիտական աւանդի գլխաւոր առանձնայատկութիւնն էր:

Ստորեւ հրապարակուող մատենագրական միաւորները ներկայացնում են առանձին էջերը Վանական վարդապետի մեկնողական, ճառախօսական, հանրագիտարանային ժառանգութեան: Ներկայացուող առաջին միաւորը՝ Նախերգան [աւտե-նակա՞ն]՝ ոչ այլ բան է, քան տեսական աստուածաբանութեան նախադրութիւն:

Այստեղ հեղինակը խորհրդաբանական ամփոփ, բայց խօսուն համադրումներով արձանագրում է բացարձակի եւ յարաբերականի, ընդհանուրի եւ մասնաւորի, մասի եւ ամբողջի յարաբերակցութեան, ընդհանուրի մէջ մասնաւորի եւ մասնաւորի մէջ ընդհանուրի ներկայութեան իրողութիւնը:

1 Տե՛ս Հ. Հ. Ոսկեան, Յովհաննէս Վանական վարդապետ եւ իր դպրոցը, Վիեննա, 1922:

Սա օգնում է բնութեան տեսանելի , մասնաւոր փաստերի, սահմանաւոր առարկաների մէջ նշմարել ընդհանուրն ու անսահմանը, այն է՝ աստուածայինը: Եթէ բացարձակը՝ աստուածայինը բնութեամբ էապէս անմատչելի է, ապա նիւթական առարկաները՝ մատչելի: Սակայն այդ մատչելիութիւնն էլ խիստ յարաբերական է: Ըստ այսմ, եթէ նիւթական իրականութեան օրինաչափութիւնների ընկալումն իսկ խիստ դժուար է, էլ ո՞ր մնաց, դիցուք, բանականութեան համար լիովին անհասկանալի Աստուծոյ Որդու անճառելի ծննդեան պարագան: Այս հանգամանքը ցոյց տալու համար Վանականը վկայակոչում է ոչ միայն Աստուածաշունչը, այլև Արիստոտելի իմաստասիրի թուղթ առ Ալեքսանդրոս, երկի միջոցով, Էմպեդոկլին (Ն.Ք. 490-430) և Անաքսագորին (Ն.Ք. 500-428):

Այսուամենայնիւ հեղինակը, վերադառնալով իր կանխադրոյթին, լիովին չի բացառում նիւթի միջոցով աննիւթի ընկալումը. իր մօտեցումը նա հիմնաւորում է պօղոսեան այն մտածումով, թէ՝ Անէրեւոյթն Աստուծոյ յերեւելեացս յայտնի ճանաչի (Հռոմ. Ա 2): Այս հաստատելու համար նա դիմում է հայրախօսական ժառանգութեանը՝ Գրիգոր Աստուածաբանին և Գրիգոր Նիւսացուն, ըստ որոնց «այսու աւրինակաւ փոքու աշխարհի մեծի վերականգնել լինիմ»: Եւ սրան կարելի է հասու լինել «բանին առաքինութեամբ», այն է՝ թափանցելով աստուածաշնչական խօսքի խորքերը: Եւ քանի որ էաբանական դիտանկիւնից Աստուած «անորակ» և «անքանակ» է, ուստի նրա բնութիւնն աղամորդուն մնում է լիովին անմատչելի: Բայց դիմելով արիոպագիտեան եզրաբանութեանը, աստուածաբան հեղինակն այսուամենայնիւ համարում է, թէ Աստուծոյ գոյութիւնը «[անտ]եսական տեսակին եւ անձեւին ձեւ իմանի», այսինքն՝ նիւթական աշխարհի ձեւերն ակնարկ են պարու-

նակում «անձեւ», «անորակ», «անքանակ» Աստուածութեան մասին:

Վանականի աստուածաբանակա ատենախօսութեան միւս կարեւոր դրոյթը վերաբերում է սուրբգրային խօսքի բացարձակ հեղինակութեանը: Որպէս ինքնաբացարձակ գոյաբանական զօրութիւն այն գերազանցում է նոյնիսկ մեռելների յարութեան փաստին: Այս առարկայօրէն ցոյց տալու նպատակով Յորի գրքի մեկնութեան հեղինակը բերում է նրա Թէպէտ հուճքն Աորա հատցի Ա վերուստ, բուճն Աորա ի քարի պահեսցի, ի հոտոյ ջրոյ ծաղկեսցի եւ արասցէ հուճս (ԺԴ 8-9) խօսքը: Դարձեալ ի մտի ունենալով մասնաւորով ընդհանուրը մատնացուցելու վերաբերեալ գաղափարը՝ Վանականը նկատում է, թէ այստեղ ծառը (հուճք) ոչ թէ սոսկական ծառի իմաստով է կիրառուած, «այլ մի գուցէ այլաբանեալ է», եւ հիմնուելով Ս. Գրոց ու Հերակլիտեսի վրայ, հաստատում, թէ այն ակնարկում է մարդու բնութիւնը: Չնայած այդ ծառը կարող է վերելից հատուել, սակայն նրա բունն ու արմատը քարի մէջ պահուելով, ջրի հոտից իսկ ծաղկելու և հունձք է տալու: Եւ դա, հակառակ բնութեան օրինաչափութեան, տեղի է ունենալու ոչ թէ յորդառատ անձրեւների, տեղական ոռոգումների և հողի խոնաւութեան, այլ սոսկ ջրի «հոտի» միջոցով: Քանի որ իրականութեան մէջ ջուրը բուսականութեան վրայ ներգործում է իր նիւթական, շօշափելի բաղադրութեամբ, ուստի «ի հոտոյ ջրոյ» հասկացութիւնը պատկանում է վերնիւթական, վերտրամաբանական մեկ այլ դաշտի, որ տարածքն է բացառապէս հաւատի: Այս հիմամբ այդ ջուրն իբրեւ հոգեւոր կենսանիւթ գուգորդում է ինչպէս հինկտակարանային մի շարք տեղիների (Սղմ. ԽԱ 2, Ես. ԾԵ1), այնպէս էլ նորկտակարանեան յայտնութիւնը բովանդակող Կենաց ջրի՝ Քրիստոսի անձի հետ (Յովհ. է 37): Ըստ այսմ աստուածաբան հեղինակը յորդորում է խորշել նիւթական

աշխարհի պարտադրած մարդելոյզ օրէնքներին, «ի վնասաւղ որոճիցն հոտոյ խուսել», որպէս զի «մի՛ անգիտութեամբ անգիտացեալ» ենթարկուել անհաւատներին վիճակուած տուժին, այլ «խոստովանութեամբ Գրոց հաւատով՝ անգիտանալ աւելորդ եւ վայրապար» գիտելիքից և հաւատով ըմբռնանել ջրի հոտը, որ նոյն ինք՝ փրկութեանաբեր Սուրբ Երրորդութիւնն է:

Մարդու կեանքը նմանեցնելով ճանապարհի՝ հեղինակը դրա մէջ զատորոշում է երեք պահ. բոլոր ճանապարհները չէ, որ մեր կամքով են. «է ինչ, որ ի մեզ է, եւ է, որ ոչ է ի մեզ, եւ է, որ սկիզբն ի մեզ է եւ կատարումն ի նախախնամութեան են»: Այն, որ մեր կամքից է կախուած, ենթադրում է ընտրութեան լայն հնարաւորութիւն, այն է՝ մեկը միւսին բացառող վիճակներ՝ «գնալ [չգն]ալ, զգործեալն եւ չգործեալն»: Երկրորդ պահը դուրս է մարդու կամքից, որն ինքնին մատնացոյց է անում աստուածայինի ներկայութիւն: Երրորդ պահի մէջ ներկայ են նախորդ երկու կացութիւնները, որոնցից առաջինը վերաբերում է մարդկայինին, իսկ երկրորդը՝ նախախնամութեանը, այսինքն՝ աստուածայինին: Իբրեւ աստուածային նախախնամութեան տիպար բերուած է եկեղեցու օրինակը: Նրա աստուածահիմն լինելու պարագան խորհրդաբանօրէն հաստատագրում է սուրբգրային զուգորդումների օգնութեամբ (նոյեան տապան, վարսաւոր արմաւենի, շուշան և ձիթենի, պարտէզ փակեալ և այլն):

Երկր շարադրելիս Վանական վարդապետն օգտուել է Արիստոտելի «Ստորոգութիւնք», «Յաղագս աշխարհի», Նեմեսիոս Եմեսացու «Յաղագս բնութեան մարդոյ», Դաւիթ Անյաղթի «Սահմանք իմաստասիրութեան», Հերմես Եռամեծի «Առ Ասկղեպիոս Սահմանք», Գրիգոր Նիւսացու «Տեսութիւն ի մարդոյ կազմութիւն» աշխատութիւններից, Իզնատիոս Անտիոքացու թղթերից (տե՛ս բնագրի տողատակ):

Հրատարակում է երկը պարունակող միակ՝ թիւ 2273 ձեռագրի (1ա-9բ) հիման վրայ: Գրչագրի վնասուածութեան հետեւանքով ցաւօք բնագիրը մի շարք տեղիներում դարձել է անընթեռնելի:

Մատենագրական միւս միաւորն («Յաղագս վեցաւրեայ արարչութեան») ունի արարչաբանական բնոյթ: Բովանդակում է վեցօրեայ արարչութեան խորհրդաբանական մեկնութիւնը: Երկի նախադրութեան մէջ հեղինակը հարկ է համարում նկատել, թէ ինչպէս մարմնաւոր ախտերից բուժուելու համար կանխորոշուած դեղաբոյսերի արմատները պէտք է հաւաքել ոչ թէ «ի փողոցս գիւղից եւ ոչ յանցս ճանապարհաց կամ ի մակատեղս անասնոց եւ յորջս գազանաց, այլ յայլ բարձրագահ անապատացեալ եւ յազատաբնակ ապահովացեալ տեղիս», ճիշտ այդպէս էլ հոգեւոր բժշկութիւն չի կարող կատարուել ապականութեամբ և աղտով լեցուած գազանների որջերում, մակաղատեղիներում, այն է՝ ատելութեամբ և ստորին բնազդներով խճողուած հոգիներում, այլ միայն աստուածաբնակ հոգիներում և մտքերում, որոնց համար են դեղաբոյսերի արմատները՝ սաղմոսները, աղօթքները, հոգեւոր երգերը «եւ որոճումն մշտակայ աստուածային պատգամաց, որոց ի ձեռն արտասուած թոր պաղատանացն առ ի վերուստ իջանեն ցաւդ աստուածային եւ արբուցանեն ի միտս անդր զծաղիկս հոգեւորս», որոնք դառնում են «դեղ կենաց, եւ անդեղեալ փրկութեան եւ բժշկութեան աստուածասիրաց անձանց»:

Բայց քանի որ, ինչպէս նկատում է հեղինակը, մենք՝ մեղաւոր աղամորդիներս զրկուած ենք բնական այս առաքինութիւններից, և չենք կարող «յանձնէ եւ ի մտաց ճառել ինչ», ուստի պարտաւոր ենք հետեւել եւ ուկնդրել Աստուածաշունչ մատենից հայրերի դուրս բերած պատգամներին. «ի կենդանական ձայնից հոգեկիր եւ իմաստայեղձ վարդապետաց մերոց»:

Արարչութեան վեց օրերի մեկնաբանութիւնը կատարուում է Հին և Նոր կտակարանների խորհրդաբանական համադրութեամբ, և համապատասխանաբար արարչական և քաւչարար իմաստների շեշտումով: Այսպէս, արարչութեան առաջին օրը նշանաւորուում է լոյսի արարումով և խաւարի մերժումով, որին համապատասխանում է փրկաբանական երկու կարգի հեռանկար՝ Քրիստոսի յարութիւնը և երկրորդ գալուստը:

Աշխատութեան մէջ յստակօրէն դրսեւորուում է Վանական վարդապետի բացասական դիրքորոշումը մարդանմանութեան (անդրոպոմորֆիզմ) գաղափարի նկատմամբ: Բացատրելով ըստ պատկերի եւ ըստ Ամանույթեան մերում (Ա 27) խօսքը՝ նա նկատում է, թէ «նմանել Աստուծոյ եւ պատկեր նմա լինել մարդկան զարհուրելի է: Եւ դարձեալ ձեռս եւ ոտս ասել Աստուծոյ անման իմն եւ բազմաց տարակուսելի է, վասնզի արարածոց նման զարարիչն Աստուած ոչ մարթի ասել եւ հողոյն պատկեր լինել եւ յաւդուածով ձեռս ունել... այլ կերպարան այն է իմանալ զօրութիւն հոգւոյ, եւ «պատկեր» գանախտութիւն մտացն, եւ «նմանութիւն»՝ գանազան առաքինութիւնս», ինչպիսիք են ողորմածութիւնը, հեզութիւնը, խոնարհութիւնը, մարդասիրութիւնը, պարկեշտութիւնը եւ այլն: Սրանով հեղինակը զատորոշում է «պատկեր եւ նմանութիւն» եզրերը. առաջինին նա տալիս է գոյաբանական բացատրութիւն՝ ցոյց տալով Աստուծոյ եւ մարդու բնազանցականազգակցութիւնը, իսկ երկրորդին՝ իմացաբանական բացատրութիւն՝ շեշտելով Աստուծոյ նմանողութեամբ ձեռք բերուող առաքինութիւնները:

Ճառը շարադրելիս Վանականն աչքի առնել է ունեցել Բարսեղ Կեսարացու Վեցօրեայ արարչագործութեան մեկնութիւնը:

Բնագիրը հրատարակուում է ըստ Մաշտոցի անուան Մատենադարանի թիւ 5411 (5բ-9ա) ձեռագրի:

Յաջորդ՝ «Ի ՃԳ. սաղմոսն. Այս ծով մեծ» մեկնողական ճառը նախորդի նման աչքի է ընկնում արարչաբանական ուղղուածութեամբ: Այստեղ գիտութիւնն ու արուեստը ստորաբաժանուում է արարչականի (աստուածայինի) եւ արարածականի (նիւթականի կամ եղականի): Հեղինակը մասնաւոր դիտաւորութեամբ կանգ է առնում երկրորդի վրայ: Ըստ նրա, երկրորդն իր հերթին բաժանուում է երկու մասի՝ իմանալի եւ զգալի: Իմանալին բաժանուում է բանականի եւ անբանի, իսկ զգալին՝ տեսանելիի, իմացականի եւ գործնականի: Տեսանելին մատչելի է աչքի, իմացականը՝ ականջի, հոտոտելիքի, իսկ գործնականը՝ բերանի, ձեռքի եւ ոտքի համար: Իմանալի բանականի պարագային միտքն է տեսնում, ինչպէս հրեշտակները, այն կարող է զգալ հոգին՝ գտնուելով մարմնի մէջ:

Տեսնելու այսօրինակ կարողութեամբ օժտուած են բացառապէս սրբերը, որոնք խորհրդի մէջ թափանցում են մտքի աչքով, եւ գիտակցում, որ մարդկային լեզուով չի կարելի խօսել վերմտային իրողութիւնների մասին: Մինչդեռ շարքային մահկանացուներին այն մատչելի կարող է լինել տեսանելիքի եւ հոտոտելիքի շնորհիւ, եթէ միտքը ձերբազատուի նիւթական ունայն խորհուրդներից: Արարչութեան մասին իմաստասիրողը կամ աստուածաբանողը, ինչպէս Պլատոնն է ասում, պէտք է իրեն դնի արարչութիւնից դուրս, եւ հոգեւոր հայեացքով դիտի այն:

Ճառը շարադրելիս հեղինակն օգտուել է Բարսեղ Կեսարացու Վեցօրեայ արարչութեան մեկնութիւնից, Հերմէս Եռամեծի «Առ Ասկղեպիոս սահմանք» երկից եւ Հարանց վարքից:

Բնագիրը հրատարակուում է ըստ թիւ 2273 (54ա-57ա), 1398 (335ա-340բ), 2195

(316բ-321բ), 1267 (324բ-327 բ) ձեռագրերի: Սրանցից առաջին երեքը լիովին համընթաց են իրար, մինչդեռ վերջինը՝ թիւ 1267 ձեռագիրը առաջին երեք ձեռագրերին համընթաց է մինչեւ «թէ եւ զգիրս Արիստոտէլի ի ձեռն առեալ խարդախելով որսան զայլս» բառերը: Դրանցից յետոյ, սակայն, այն շարունակուում է այլ բառերով եւ միայն տեղ-տեղ բառացի համապատասխանում եւ բովանդակութեամբ նմանւում առաջին երեք ձեռագրերի բնագրին: Եթէ խնդրոյ առարկայ մասում առաջին երեք ձեռագրերում զետեղուածն ունի գերազանցապէս աստուածաբանական-մեկնաբանական բնոյթ, ապա թիւ 1267 ձեռագրում առկայ բնագիրն յատկորոշւում է աւելի բնագիտական ուղղուածութեամբ: Այստեղ առկայ տուեալներն, ինչպէս երեւում է, քաղուած են Բարոյախօսից եւ կենդանիների վարք ու բարքի մասին խօսող տարբեր աղբիւրներից: Ուստի թիւ 1267 ձեռագրի այս հատուածը (325բ-327բ) զետեղում եմ «Տարընթերցումներ», բաժնում: Բնագիրը թերի է. «...եւ ոտք փղացն///»: Ինչպէս նկատում է Փ. Անթաբեանը, այս ճառի ազդեցութեան հետքերը կան Վանականի աշակերտի՝ Վարդան Արեւելցու Սաղմոսաց մեկնութեան մէջ²:

Միւս՝ «Վասն սաղմոսիս. Քաջանայք թո զգեսցեն զարդարութիւն» ճառը բովանդակում է քաջանայական հանդերձանքի խորհրդաբանական բացատրութիւնը: Նախ խօսւում է երեւոյթի մասին առհասարակ, վերհանւում են այն պատճառները, որոնք թելադրել են հասարակական տարբեր խմբաւորումների ընտրել իրենց պատշաճ հանդերձանք. «Արդ, զի գործք եւ արուեստ բաժանաբար սկսան մարդիկ, նոյնպէս եւ ըստ այնմ պիտոյ է ձեւ հանդերձի»:

Տեսնելով Կայէնի հետեւորդների՝ իրենց վարքութեամբ յարմար հանդերձանքի

ձի ձեւը՝ ենովքը որդեգրեց ապաշխարութեանը վայել հանդերձանք, որ էր «Հանդերձ սգոյ եւ ձեւ գծծութեան եւ պատկառանաց»: Սակայն նրա մահից յետոյ այն աղաւաղուեց: Ուստի Աստուծոյ հրամանով Մովսէսը գրով արձանագրեց զգեստների տարբեր ձեւերը, որոնք պէտք է անխախտ պահպանուէին: Սա առաւելապէս վերաբերում էր ահանայական հանդերձանքին, որովհետեւ քաջանան լինելով Աստուծոյ եւ մարդու միջնորդ, հարկ էր, որ այդ միջնորդութեանը վայել հանդերձանք կրէր, «զի յայտ լիցի, թէ քաջանայն աստուածազգեաց է եւ ի մարդկանէ փառաւորեալ»: Քաջանայական պաշտօնի աստուած մարդկային հանգամանքը պէտք է արտացոլուէր հանդերձանքի մանրամասների մէջ. «պճղնաւորի» կապոյտը ակնարկ է արփիից մինչեւ երկիր եղած օդի կապոյտի, ծիրանին՝ ջրի, կարմիրը՝ կրակի, սպիտակը՝ վուշի՝ երկրի, քողը՝ ժողովրդի «անմոռաց» յիշատակութեան: Թերեւս աչքի առջեւ ունենալով Ս. Եպիփան Կիպրացու անունով յայտնի «Յաղագս ականց՝ պատուականաց» երկը³՝ տալիս է քաջանայական լանջապանակի 12 քարերի (ըստ Յակոբ Նահապետի 12 որդիների) բացատրութիւնը (Սարգիսն՝ Ռուբեն, տպագիրն Շմաւոն եւ այլն): Հանդերձանքի այսօրինակ խորհրդաբանութիւնը թոյլ է տալիս հեղինակին հաստատել, թէ «քաջանայական որպէս թէ զարարածքս զամենայն զերկինս եւ զերկի առաջի Արարչին նուիրէր որպէս Որդի առաջի Հաւր»: Հինկտակարանեան քաջանայութեան այսօրինակ խորհրդաբանութեանն անհրաժեշտապէս հետեւում է դրա քրիստոնէական վերացարկումը. իւրաքանչիւր աղամորդի, անկախ իր հանգամանքից, Քրիստոսի տուած շնորհով պէտք է քաջանայագործի՝ հազնելով արդարութեան հանդերձանք:

2 Փ. Անթաբեան, Վարդան Արեւելցի. Կեանքն ու գործունէութիւնը, Գիրք Ա, Եր., 1987, էջ 134:

3 Տե՛ս տպ. աշխ. Հ. Ղ. Ալիշանի. «Բազմալէպ», 1856, էջ 46-50, նաև՝ M. E. Stone. «Harvard Theological review», 82; 4, 1989, p. 473-474:

Ճառն իր ձեռքի տակ է ունեցել Գրիգոր Տաթեւացին. իր Հարցմանց գրքում նա պատշաճ է համարել վկայաբերել ճառիս «Խորհուրդք ծերոց զքարինս պատառեն» բազմանշանակ արտայայտութիւնը⁴:

Ճառը հրապարակուում է ըստ Մաշտոցի անուան Մատենադարանի թիւ 2273 (թ. 50ա-54ա) ձեռագրի:

«Վարդապետի Վանականի յարմարումն ի սաղմոսաց մեկնութենէ» ճառի խորագիրն իսկ յուշում է, որ այս, ինչպէս եւ Սաղմոսի տարբեր տեղիները բացատրող նախորդ ճառերը, ամենայն հաւանականութեամբ մասերն են Վանականի ամբողջապէս մեզ չհասած Սաղմոսաց մեկնութեան: Մեկնողական այս ճառում Վանականը խօսում է Ս. Հոգու վերժամանակային, խորհրդական գործունէութեան, Ադամի (Աստուծոյ պատկերով ստեղծուած լինելու), Աբէլի (պատարագի), Նոյի (արդարութեան), Աբրահամի (հաւատի), Քրիստոսի (Յորդանանում Աստուած հռչակուելու) բնութեան եւ գործունէութեան մէջ ունեցած տիրական ներկայութեան մասին: Եւ սա առաւելագոյնս պարզ է դառնում եկեղեցու սահմանակարգած «բանական եւ հոգեւոր իմաստից»-չնորհիւ: Ճառի նախադրական մասին հետեւում է Սաղմոսի համապատասխան տեղիի բացատրութիւնը: «Ինձ յոյժ մեծարոյ եղեն բարեկամք քո, Աստուած» խօսքում Աստուծոյ բարեկամներ են նկատուում նախ հինկտակարանեան անձինք՝ «աբրահամեան եւ մովսիսեան իշխանքըն», իսկ յետոյ այդպիսիք են համարուում նորկտակարանեան անձինք՝ առաքեալները: Սակայն «բարեկամներ» են նաեւ «երկնաւոր եւ անմարմին» էակները՝ հրեշտակները, որոնք եղական են: Այս առիթով հեղինակը հերքում է մեկեսիանոսեան (=մծղնեական) եւ պաւլիկեան՝ հրեշտակաբանութիւնն, ըստ որի հրեշտակներն են արարել աշխարհը: Ի

դէպ, Վանականը, հակառակ կենցաղավարող կարծիքի⁵, սպասաւոր հրեշտակների հետ է նոյնացնում նաեւ Աբրահամի երեք հիւրերին:

Ճառը հրատարակուում է ըստ Մաշտոցի անուան Մատենադարանի թիւ 2273 (թ. 9բ-14ա) ձեռագրի:

«Վասն հոգոյ՝ ի Վանական վարդապետէ հոգացեալ». փոքրածաւալ մի երկ է, որը թերեւս աստուածաբանական մի ընդարձակ աշխատութեան մասն է: Վարդապետական նրբին դիտումներով հետախուզուում է մարդկային հոգու բնոյթն, ըստ պողոսեան սահմանումի («ՁԱԵՐ ԲՈՂԻ, ՇՈՒՆՆ ԵՎ ՉՄԱՐՄԻՆ»): Եփես. Դ. 4): Ներկայացուում է մարդու եռամասն բաղադրութիւնն՝ հոգին որպէս բանական մաս, շունչը՝ զգայական, մարմինը՝ տնկական: Մարմնի մահից յետոյ այս զօրութիւնները չեն մեռնում: Այսպէս, տնկական մասը «կերակրի յիշատակաւ եւ գիտութեամբ եւ փառաւք»: Իբրեւ «խաւսք եւ բանք» յարատեւում է նաեւ մարդու բանական մասը՝ հոգին: Այն իր երեք «սեռական» (միայն իրեն յատուկ) բաղադրամասերով, «բազմատեսակ զաւրութեամբ եւ անուամբ եւ բնութեամբ մեզ անգիտելի է»: Հոգին իբրեւ աննիւթական սկիզբ թափանցում է մարմնի բոլոր 60 մասերի մէջ, ինչպէս լոյսը օդի մէջ, կրակը՝ երկաթի եւ Աստուած՝ իր արարածների: Եւ քանի որ այն իմացական բնոյթ ունի, չի ամփոփուած մարմնի որեւէ մասում, այլ, չնորհիւ իր թափանցական զօրութեան, ներգործում է ըստ պատշաճի: Իր «երկրիմի» բնոյթով նա միջնորդ է երկնաւորի եւ երկրաւորի. իր երկնային բնոյթով նա միտում է նմանուել Աստուծոյ, իսկ երկրայինով՝ խոնարհուել: Հոգու ընդունակութիւնն ու ընտրելու կարողութիւնը շեշտելու համար հեղինակը վկայակոչում է Սաղմոսները, Դիոնիսիոս Արիոպագացու, Գրիգոր Նիւսացու երկերը,

4 Տե՛ս Գիրք Հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 377:

5 Տե՛ս Եղիշէ, Մեկնութ. Արարածոց, ՄՀ, Ա, էջ 821 [14-15]:

որոնց մէջ հոգին բնորոշուում է իբրեւ «արգանդ», «մայր»:

Ճառը հրատարակուում է ըստ Մաշտոցի անուան Մատենադարանի թիւ 1770 (թ. 398ա - 399ա) ձեռագրի:

«Ի սուրբ իմացն փրկչական...». ներբողական բնոյթի գրութիւն է, ուր ամփոփ խտացումներով արտացոլուած է Հին եւ Նոր կտակարանների տիպաբանական մեկնութեան դարաւոր աւանդութիւնը: Այս դիտանկիւնից առաւել բնութագրական են ներբողի հետեւեալ տեղիները. «Եհար Մովսէս զվէմն կատարատաշ գաւազանաւն, եւ ել ի նմանէ վտակ երկոտասան՝ նշանակելով զվէմն ճշմարիտ Քրիստոս, որ ել ի նմանէ ջուրն կենաց երկոտասան վտակաւք սրբոց առաքելոցն: Էջ մանանայ ի յամպոյ կերակուր ժողովրդեանն Իսրայէլի եւ ուսոյց զաշխարհս, թէ հացն կենաց յերկնից իջանէ եւ կեանք տայ աշխարհի...», «Տարածումն ձեռացն Մովսէսի յաջ եւ յահեակ զաւրն ողջոյն քարոզէր զտարածումն ձեռաց Որդւոյն Աստուծոյ ի երայ իմաչին լրման աւուրն Որբաթու...»: Քաղուածքներն աստուածաբանօրէն աղերսուած են Բառնաբասի նամակի եւ Անդրէաս Կրետացու իմաչի ներբողի համապատասխան դրուագներին⁶:

Ներբողեանը հրատարակուում է համաձայն Մաշտոցի անուան Մատենադարանի թիւ 5511, թ. 9ա-11ա:

Հրապարակուող մատենագրական վերջին միաւորը՝ «Հարցումն Վահրամայ իշխանաց իշխանի եւ պատասխանիք Վանական գերալոյս վարդապետի»՝ համառօտ տարբերակն է Վանականի նշանաւոր Հարցուպատասխանի⁷:

Իշխանաւոր աշխարհականի եւ հոգեւորականի այս հարցուպատասխանին առաջինը չէր իր տեսակի մէջ: Բանն այն է, որ հայ եկեղեցական մատենագրութեան մէջ այս ժանրն ունէր իր նախընթացը. բաւական է յիշատակել Սամուել Կամրջաձորեցու «Պատասխանի մեծի եւ փառաւոր իշխանին, որոյ մականունն Ոսկիձեռն կոչի», «Լուծումն Արտաւաստայ Մազազունեաց տեառն, զոր բացայայտեաց սուրբ պատուիրանաւք ի հրամանէ տեառն Ատոմայ Անձեւացեաց իշխանի», «Գրեցաւ թուղթս այս առ Ատոմ Անձեւացեաց իշխան զոր կալեալ առաջի Թովմայի սրբազանքահանայի եւ ուղղափառ վարդապետի...», «Տիրանոյ հայոց վարդապետի պատասխանի հարցմանց թագաւորացն Աղուանից Ատրներսեհի եւ Փիպէի»⁸:

Հանրագիտարանային ժանրի պահանջների համաձայն այստեղ իրենց արտացոլումն են գտել միջնադարեան մտքի զանազան բնագաւառներին վերաբերող խայտաբղետ իողութիւններ, որոնք վերաբերում են աստուածաշնչական մեկնութեանը, հայրախօսական ժառանգութեանը, պարականոն գրականութեանը, դաւանաբանութեանը, եկեղեցական աւանդութեանը, ազգային պատմութեանը: Այսպէս, աստուածաշնչական մեկնութեան մէջ հեղինակը կիրառում է խորհրդաբանական բացատրութեան եղանակը, որի բնորոշ օրինակը Երկու աղան ի մի երկամս, միմն առցի եւ միւսն թողցի (Մտթ. Ի 41) տեղիի մեկնութիւնն է: Աղացում աղողները ներկայացնում են տրամագծօրէն հակառակ երեւոյթներ ու հասկացութիւններ, որոնց տրուած է համապատասխան արժեւորում. «Յառաջնոցն յայտնի է սրբոցն բանք, զի Բ (2) իցեն աղքատ՝ ոմն որպէս Ղազարոս եւ ոմն թողեալ որպէս այն, որ հանդերձ

6 Տե՛ս և հմմտ. Բառնաբասի Ամմակ, ԺԲ, 2-4 («Գանձասար». Ը, 2010, էջ 191-193), Անդրէաս Կրետացի, Ներբող Սուրբ Իմաչի.- Էջմիածին, 2011, է, էջ 90:

7 Տե՛ս ՄՄ, ձեռ. 5511, թ. 25բ-82ա, Երուսաղեմ, ձեռ. 587, էջ 8-83, 1288, էջ 2-142:

8 Տե՛ս Մատենագիրք հայոց, հտ. Ժ, էջ 762-770, 849, 852-860, 957-996:

Հարսանեաց ոչ ունէր, եւ որպէս այն, որ ոչ եւղն բաւական ունէր ճրագին...»:

Ինչպէս դժուար չէ տեսնել մեկնիչ հեղինակը լայն առումով զատորոշում է երկու կարգի աղքատութիւն. նիւթական եւ հոգեւոր, որոնց սպասում է տրամագծորէն երկու հեռանկար: Երկինք են յափշտակում նիւթապէս աղքատները, մինչդեռ երկրի վրայ են մնում հոգեւորապէս աղքատները: «Բ. աղան ի մի երկայն. թեփ եւ ալիւր. թեփ՝ աւրէնքն եւ նաշիհ՝ Աւետարանն, ըստ այնմ, թէ Ասիս խոտն եւ հասկն, եւ ապա ծաղիկն եւ ցորեանն ատաք ի հասկին (Մրկ. Դ. 28)... աւրէնքն անգործ որայ, Աւետարանն՝ սուրբ ցորեանն, առաքեալքն՝ կորկոտիչք, Յոհան եւ այլքն՝ աղալ ի նաշիհ, իսկ ժամանակին՝ վարդապետքն սեղանակազմ»: Ըստ այսմ զատորոշում են հին եւ նորկտակարանային արժէքները. հինը բնորոշում է իբրեւ թեփ, իսկ նորն՝ ի բրեւ ազնիւ ալիւր՝ «նաշիհ»: Առաքեալներն ազում են առաքինութիւն հաստատող «նաշիհ»-ը, իսկ ժամանակ անց այն մատակարարում են վարդապետները:

Հարցուպատասխանի մէջ արտացոլում է Հայրախօսական ժառանգութեան հետ ունեցած կենդանի կապը: Այսպէս, պատասխանելով այն հարցումին, թէ՛ «Աւետարանչացն անմիաբան գրելոյն պատճառ ի՞նչ էր»՝ Վանականը գրում է. «Կարի աւգուտ արար Հոգին, զի մի կարծիս առցեն, թէ բան եղեալ ընդ միմեանս՝ ակն առեալ վարդապետին իւրեանց գրեցին»: Այս պատասխանը վարդապետական արձագանքն է այն բացատրութեան, որ տրուած է ս. Յովհան Ոսկեբերանի Մատթէի Աւետարանի մեկնութեան մէջ, ուր, մերժելով Աւետարանների հակասականութեան վերաբերեալ շրջանառուող թիւր տեսակէտը, նա գրում է, թէ՛ «Այն իսկ է մեծ աւրինակ ճշմարտութեան, զի եթէ զամենայն ամենեցուն միաբան ճշդիւ էր ասացեալ մինչեւ ցրանս եւ ցժամանակս եւ ցտեղիս, ոչ ոք ի

թշնամեաց առնոյր յանձն հաւատալ, եթէ ոչ ի մի վայր եկեալ՝ մտեալ ի դաշն ընդ միմեանս, մարդկեղէն մտաւք գրեցին, զոր ինչ գրեցինն: Նա եւ ոչ ընծայութիւն անմեղական միաբանութեանն երեւէր: Իսկ նա աւանիկ կարծեալն սակաւութեամբ զմիաբանութիւնն աղատեցուցանէ յամենայն կարծեաց, եւ լուսաւորագոյն քան զմիաբանութեանցն առնէ պատասխանի»⁹:

Դաւանական աստուածաբանութիւնը եւս իր պատշաճ տեղն է զբաղեցնում Հարցուպատասխանիում: Ս. Աթանաս Աղեքսանդրացու եւ կապադովկեան Հայրերի երրորդաբանութեան հետ է յստակօրէն աղերսուած Ս. Երրորդութեան անձանց անունների անշփոթելի, ինքնաբացարձակ լինելու վերաբերեալ գաղափարը. «Զի՞նչ է, որ Հայր Որդի չասի եւ ոչ Որդի Հայր եւ ոչ Հոգի՝ Հայր կամ Որդի» հարցումին տրուած է հետեւեալ պատասխանը. «Զի եզր եւ միջոց ոչ է եւ ոչ է հնար մտաց, որ ի ներս բան գտանէ կամ բաժանումն փոփոխէ. վասն զի Աստուածութիւն փոփոխի ոչ եւ ոչ այլայլի»: Այս գաղափարը վաւերացում է դրան յաջորդող մտածումով. «Հարցումն. Ո՞ր է անուն Աստուծոյ ի վեր քան զամենայն անուն: Պատասխանի. Հաւրն՝ Հայր եւ Որդւոյն՝ Որդի, Հոգւոյն՝ Հոգի Սուրբ»: Այսու մարդկային մտքի համար միանգամայն անհասկանալի է Ս. Երրորդութեան բնութեանական միութեան եւ անձնային տրոհուածութեան համաժամանակեայ լինելը:

Հարցուպատասխանի մէջ նշմարելի է բովանդակային աղերսը Վանականի միւս երկերի հետ: Այսպէս, պատասխանելով «Ուստի՞ է սկիզբն աբեղայութեան» հարցումին՝ Վանականը գրում է. «Յենովքայ, որ սկսաւ ապաշխարել, արար այսու աւրինակաւ ինքեան հանդերձ սգոյ եւ

9 Տե՛ս Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսապետի յԱւետարանագիրն Մատթէոս, գիրք Կրկին, Վեցերորդ, 1826, էջ 5:

ստացաւ վարս պարկեշտս զայն ձեւ եւ փոխեցին ի հնումն, եւ ի նորումս քահանայիցն եւ կրօնաւորաց զարդ, եւ պատերազմողաց զէն եւ ի պճնումն արեղայից, որպէս սուգ սգաւորաց»։ Այս պատասխանը համերաշխ է «Վասն սաղմոսիս. Քահանայք քո զգեսցեն զարդարութիւն» ճառի այն տողերին, ուր ասուում է, թէ Ենովքն «առնէր ինքեան հանդերձ սգոյ եւ ձեւ գծութեան եւ պատկառանաց»։

Վանական վարդապետ

Հարցումն. Որպէ՞ս արար զգինին։

Պատասխանի. Գոյնն ջրոյ, եւ համն եւ ուժն գինոյ։

Հարցումն. Է՞ր էր այն։

Պատասխանի. Իւր աւրինակ, զի կերպով մարդ, Բանին միութեամբն Աստուած։

Հարցումն. Աւազակն, որ յաջմէն։

Պատասխանի. Դեմաս։

Հարցումն. Ազգաւ։

Պատասխանի. Հեթանոսէր, բայց խոստովանութիւն՝ բուն հրէի արահամեան։

Հարցումն. Ո՞ր յահեկէն։

Պատասխանի. Թէպէտ հրէայ է, այլ տրտունջն անհաւատ հեթանոսի. անունն Կեստաս։

Հարցումն. Ո՞ր ապտակեաց։

Պատասխանի. Մաղքոս։

Հարցումն. Ո՞ր եթուք։

Պատասխանի. Ոչքոր։

Հարցումն. Ո՞ր զլեղին եբեր։

Պատասխանի. Ռոքոս։

Հարցումն. Ո՞ր խոցեաց։

Պատասխանի. Դունկիանոս։ Ասեն, թէ մի ակն կոյր էր։ Հրամայեաց խոցել, թէ սուտամեռուկ չլինի։ Ասացին, թէ ել արիւն եւ ջուր։ Նա խնդրեաց զտէգն եւ շաւշափեաց, եւ զարիւն յակն հասոյց եւ ի լոյս երեկ, որպէս եւ գրեալ է, ետես եւ հաւատաց։

Հարցումն. Սամարհոյն անունն, յորմէ

Վանականի Հարցուպատասխանիի վայելած լայն ճանաչման մասին է վկայում այն փաստը, որ այն կիրառուել է յետագային մատենագրութեան մէջ։ Այսպէս, Վարդան Արեւելցին իր Ժղլանքում բառացի վկայաբերել է մի ամբողջ հատուած իր ուսուցչի տուեալ երկից։ Այդ է ցոյց տալիս հետեւեալ համադրումը.

Վարդան Արեւելցի

Այլ գիտեա, զի գինոյն գոյնն, զոր արար Տէրն, ջուր երեւէր. բնութիւն ջրոյն փոխեցաւ եւ համն եւ ոչ գոյնն։

Նշանակ, զի առեալն ի Տեառնէ մարդն մնաց թանձրութեամբն եւ գունով, բայց բնութիւն աստուածացաւ միաւորելով ընդ Աստուծոյ՝ ոչ կորուսեալ, այլ՝ միաւորեալ։

ՄՄ, ձեռ. 750, Թ.37ա

Աւազակքն, որ ընդ աջմէն էր, դաւանեաց զՏէր մեր տէր եւ իշխան արքայութեան, Դեմաս է անուն, եւ որ ի ձախմէն, անուն Կեստաս, որ տրտնջէր, թերեւս լուեալ հրէիցն իջուցեն զնա։ Ասեն, թէ բարեմիտ աւազակն ազգաւ հեթանոս էր եւ հայհոյիչն՝ հրեայ։ Զառաջինն երկոքինն հայհոյէին, ապա ծագեաց նշոյլ երկնաւոր ի սիրտ միոյն, զի գոյր ի նմա մասն բարոյ, որ խնդրէր նմա կեանա։ Եւ էր այն սքանչելիք որ յետոյ փոխեաց զբանն, որ շասեն, թէ աշակերտէր նմա, եւ բան դրած էր, որ դաւանէր զնա Տէր ի խաբել զմարդիկ։

Որ ապտակեաց զՏէրն՝ Մողոքոս անուն։

Որ եթուք՝ Ոչքոր անուն։ Դունկիանոս հարիւրապետն խոցել ետ զինուորին, եւ ել զարիւն եւ ջուր, եւ խնդրեաց զտէգն արիւնոտ, եւ համբուրեաց։ Եւ ասեն, թէ միականի էր, շփեաց յաչան եւ բացաւ, եւ այս է ասելն, թէ, որ ետեսն, վկայեաց։

Սամարհոյն անունն, յորմէ ջուր խնդրեաց Տէրն Լիւսիանեայ անուն՝ յիշեղով զանունն ի բարեխաւսութիւն աշացաւութեան աւգնէ ողջութեամբ։

զըռլըն խնդրեաց Տէրն:

Պատասխանի. Լուսինա:

Հարցումն. Տեոատեսին:

Պատասխանի. Փոտինա:

Հարցումն. Քանանուհւոյն:

Պատասխանի. Վերինէ:

Հարցումն. Դպիրն, որ էհարց. «Ո՞ր պատուիրան մեծ է»:

Պատասխանի. Նիկոմիկոս, զոր պէտս կոչեն, որ է փրկիսոփա, որ թարգմանի էակաց, իսկից դիտող: ԺԱ (11) արուեստ է. բանական, քերական եւ քերթող եւ ճարտասան եւ այլքն: Իսկ փրկիսոփայն ամենայնի զլուխ:

Վանականի Հարցուպատասխանին իր ձեռքի տակ է ունեցել նաև Գրիգոր Տաթեւացին, ով իր Հարցմանց գրքում, առանց հեղինակի անունը տալու, գրեթէ բառացիորէն, վկայաբերել է հետևեալ Հարցուպատասխանին.

«Հարցումն. Աղաւթքն, որ Յովհաննէս ուսոյց աշակերտաց իւրոց:

Պատասխանի. Ասեն, թէ այս էր. Հայր սուրբ, ուսո մեզ զբան քո, Որդի սուրբ ցոյց մեզ զերեսս քո, Հոգի Սուրբ սրբեա զմեզ սրբութեամբ քո: Եփրեմի ներբողեանն այլ ցոյց զայս իտալ, թէ դահիճն ետես ի բանտին, զի այսպէս աղաւթէր»:¹⁰

Բնագրերը հրապարակուած են ըստ Մաշտոցի անուան Մատենադարանի հետևեալ ձեռագրերի.

2273. Ժողովածոյ: Վայր՝ Խորանաշատ: Ժամանակ՝ 1252 թ.: Գրիչ՝ Գրիգոր քհն.:

Ստացող՝ Ստեփանոս քհն.: Թերթ՝ 364: Նիւթ՝ թուղթ. արևելեան: Մեծութիւն՝ 17 X

Տեոատեսին անունն Փոտինեա:

Քանանացի կնոջն, որ զփշրանա մանկանց խնդրէր, Վերինէ անուն:

Դպիրն, որ էհարց. «Ո՞ր պատուիրան մեծ է», եւ սիրեաց Տէրն, Նիկոմիկոս անուն: Թ.38 Բ -39բ:

12: Գրութիւն՝ միասիւն: Գիր՝ բոլորգիր (տարբեր, խառն): Տող՝ 26-28¹¹:

2195. Ժողովածոյ: Ժամանակ՝ ԺԳ դար: Գրիչ, ծաղկող՝ Յովհաննէս: Թերթ՝ 412: Նիւթ՝ թուղթ: Մեծութիւն՝ 17,3 X

1398. Ժողովածոյ: Ժամանակ՝ ԺԴ դար: Թերթ՝ 473: Նիւթ՝ թուղթ: Մեծութիւն՝ 16,8X 12,4: Գրութիւն՝ միասիւն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 26¹²:

1267. Ժողովածոյ: Վայր՝ անյայտ: Ժամանակ՝ ԺԵ դար: Գրիչ՝ Գէորգ երէց, Պետրոս: Ստացող՝ Գէորգ վրդ.: Թերթ՝ 363: Նիւթ՝ թուղթ: Մեծութիւն՝ 27,5X19: Գրութիւն՝ երկսիւն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 39¹³:

1770. Ժողովածոյ: Ժամանակ՝ 1589: Գրիչ՝ Աստուածատուր դպր.: Ստացող՝ Հայրապետ Զուղայեցի: Թերթ՝ 399: Նիւթ՝ թուղթ, արևելեան: Մեծութիւն՝ 20,7X 14,8: Գրութիւն՝ միասիւն: Գիր՝ նոսրգիր (տար-

10 Տե՛ս Գիրք Հարցմանց, էջ 659:

11 Տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. է, Եր., 2012, էջ 751-758:

12 Տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Դ, Եր., 2008, էջ 1163-1167:

13 Տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Դ, էջ 779-782:

բեր), բոլորգիր: Տող՝ 21-26¹⁴: 1764. Ժողովածոյ: Ժամանակ՝ 1651-1654: Վայր՝ Համիթ: Գրիչ, Ստացող՝ Սարգիս արղ.: Թերթ՝ 389: Նիւթ՝ թուղթ, արևելեան: Մեծութիւն՝ 19,6X 13: Գրութիւն՝ երկսիւն: Գիր՝ բոլորգիր, նոտրգիր: Տող՝ 33¹⁵:

5411. Ժողովածոյ: Ժամանակ՝ 1817: Վայր՝ Բարձրահայեաց Սուրբ Աստուածածին վանք: Գրիչ՝ Յակոբ արղ.: Թերթ՝ 114: Նիւթ՝ թուղթ. լուսագծերով: Մեծութիւն՝ 24,5X18: Գրութիւն՝ միասիւն: Գիր՝ նոտրգիր: Տող՝ 29¹⁶:

14 Տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Ե, Եր., 2009, էջ 1118-1126:

15 Տե՛ս նոյն տեղում, էջ 1139-1150:

16 Տե՛ս Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Բ, Եր., 1970, էջ 101:

ՎԱՆԱԿԱՆԻ [...] ՆԱԽԵՐԳԱՆ [ԱՏԵՆԱԿԱՆ՝] /// ԵՂՈՂ ԵՒ ԶԻ ԵՐ ՆԱ ՅԱՅՍՍ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՅՏԱՌ ՔԱՆ ԶԱՐԵԳԱԿՆ¹

Բաղձանք բանի բնաւորեալ յոգի բանական զնա գործէ յամենուստ անվայրափակսդ եւ բարձակ ելանել [եւ] լեառնանալիցն աւդապար, քանզի զնալ (՝) ի վեր արփին երկնագնացս ի հոյ[...]՝² ի մէջ հոգեղէն զնդիցն մտան թէ եւ յանդար կալն հնչմանց հրճուիլ... ելանել գալ... աւնայլ ի լայնագոյնս եւ ի խոր առ ծովուն ընդարձակեալ ընդ լաւական մ...աթիւնսն ի ջուրն թռչել եւ ընդ խոպացողի... խայտալ նրբահայեաց եւ սրահատես ի...³ կարծրանիւթսն թափանցանել: Եւ այս երկն[ային] աւդային թեւաւք մեղուագործ արուեստ... ծաղկաժողովե ի խորշ վեցաշարս⁴... ի բջիջ բնութեանս ամաւել... անդ սարդիոն...⁵ ունկն դիւրալուր զպաս... զականս պատուականս եւ զբ[աղցր] զմեղեր զխորիսխ: Եւ արդ, առ այսու բաւականիցի ունել զգանձս զայս յամանս խեցեայ (Բ Կորնթ. Դ 7) հասեալ իցէ յակն ծովու եւ զհ[ատակս անդն]դոց շրջել՝ զջուրս ծովու չափեալ ախտվ (Ես. Խ 12), զհողմ ի գոգս ժողովել (Առակ. Լ 4) եւ զաւդ շնչել կամ [ա]ւազս թուել (Երեմ. ԼԳ 22) եւ զարեւ ի բիբս ամփոփել:

Եւ թէ յայտքիկ զգալի նիւթ տեսակացեալք այդքան դժոխքմբեր եւ ծանրալուր, որ յարինին զամենայն արհեստ արհեստից, որ ոչ կշռին ոսկւոյ եւ արծաթոյ եւ ընդ եղնգ ական պատուականի, որում լի գորոսակն⁶ եւ տպագիրոն եթովպացի ընդ խիճս համարի, որոյ տեղին անյայտսն ձգել քան զներքսագոյնսն, զի [...]սէ ոչ ընդ իբրեւ եւ անդունդք ո՛չ առ իւրոյ նիստ կայանին ընդ Հաւր իւրում է՞⁷, զի անծանաթ ծնուն է նա ծածուկ ծոցոյ ծնաւդին իւրոյ, որոյ շաւիղն անծանաթ է թռչնոց եւ սրատես անգեղակամ (Յոբ ԻԸ. 7), ան-

կոխ խրոխտ առեւծու եւ անգնալի ոտից մեծամիս⁸ մարդոյ, որով ամենայն, որ էր եւ որ է եւ որ լինի ըստ բնականին էմպեդոկլեայ⁹ եւ ըստ իմաստութեան Յոհաննու եւ Պաւլոսի. [Ի սկզբանէ էր Բանն եւ ամ]ենայն ինչ նովաւ եղել (Յովհ. Ա 1,3), եւ թէ՛ Նովաւ [եկաց] բովանդակն (Կողոս. Ա 17), զոր եւ մահ եւ ընկեր [Լ]ուան միայն զփառաւորութիւն [...]՝¹⁰ ոչ են աւուր թէպէտ ճանապարհ նորա արձակմամբ բարբառոյ գտեալ եւ ասացեալ ցմարդ զաստուածապաշտութիւն եւ զմեկնեալն ի շարեաց (հմտ. Յոբ Ա 8), այլ ի գինս նորա պատուականք, որ հր[ա]մաքուրք, եւ ո՞ պարծեսցի սիրտ ունել ի ...կանչ, թէ եւ մի ար իցէ ի վերայ երկրի կեանքն [...]՝¹¹, զի բարձր է երկին, խոր է երկիր (հմտ. Յոբ. ԺԱ 8), եւ մարդ՝ սխալանաւք անկեալ ընդ մահուամբ զի՞արդ ելանիցէ, քանզի ամենեքեան ընդ մի պարսպաւ փակեալ կեամք՝ մահուամբ, ըստ Անաքսագորայ, վասն որոյ «բազումք խնդրեն, վասն բազում բանից խնդրեն, եւ ոչ առնուն, վասն զի շարաշար խնդրեն» (Յակ. Դ 3). զպատիւ, եւ զփառսն կամին, եւ ծայրի մատին, ի բեռինս աշխատութեան հպիլ ոչ կա[մին], կամ քանզի ոչ է աւգուտ, զի ոչ որ կամին եւ ոչ որ ընթանայ, այլ որ ողորմի աստուածաւրէնն¹², յիրաւի, ասէ, որ նախ քան զստեղծանիլն ծանուցաւ, եւ յառաջ քան զեկանելն իւր յարգանդէ սրբեցաւ Երեմիաս (տե՛ս Երեմ. Ա 5), թէ՛ մարդոյ ոչ իւր են

1 Աղբիւր՝ ՄՄ, ձեռ. 2273, թ. 1ա-9բ

2 1-2 բառ անընթեռնելի

3 1 բառ անընթեռնելի

4 2իք ՆԲՀ

5 2 տող անընթեռնելի

6 2իք ՆԲՀ

7 Ո՞ եզրիտ գտեղի նորա, զի անճառ է նիստ նորա ընդ Հաւր.- Մխիթար Գոշ, Մեկնութիւն համառատ մարգարէութեանն Երամիայի, աշխ. Ա. Բողոյեանի,- ՄՀ, հտ. Ի, էջ 388 [39]:

8 2իք ՆԲՀ

9 «Քանզի երկին եւ որ գեր ի վերոյ քան զաւդ, ամենայն ինչ եւ որ ի վերայ երկրի եւ որ ինչ ի ջուրս են, գործք Աստուծոյ գոլ ճշմարտապէս ասացեալ լինին, այնմ, որ զաշխարհ արարեալ է, եւ շարունակէ ըստ բնականին էմպեդոկլեայ զամենայն որ էրն եւ էս եւ որ իցեն յետոյ...». «Արիստոտելի իմաստասիրի թուղթ առ Ալեքսանդրոս թագաւոր. Պատմութիւն յաղագս աշխարհի». տե՛ս «Կորին վարդապետի, Մամբրէի Վերծանողի, Դաւթի Անյաղթի մատենագրութիւնք», Վեներիկ, 1833, էջ 624:

10 1-2 բառ անընթեռնելի

11 1 բառ անընթեռնելի

12 ձեռ. աստուածութեան

անապարհ իւր, զի ի ծննդենէ մինչեւ ի մահ, որպէս ի ճանապարհի եմք: Եւ ամենայն ճանապարհն ոչ է ի մեր կամաց. եւ է ինչ, որ ի մեզ է, եւ է, որ ոչ է ի մեզ, եւ է որ սկիզբն ի մեզ է եւ կատարումն ի նախախնամութեան են. ի մեզ է, զոր կարէ [...]»¹³ զինքն եւ զհակակա՞(զհակառակ՞) նորին որպէս գնալն, [չգն]ալն, զգործեալն եւ չգործեալն եւ այլ, որ պարտ է տեսանի, զի ուր սկսաք եւ ընդ ուր եկաք նախախնամութեամբքն Աստուծոյ հասեալ, կամ յեկեղեցիս մեծ եւ յաթոռս ծերոց արհնիմք եկեղեցի, որ յերկրի երկնային էր դրախտ եկեղեցոյ՝ կենաց փայտ ի մէջ ալեաց, շաւել զգուշաւոր, ի հոմատարած ջրհեղեղ բնութեանս նոեան տապան, անպտղութեան աւուրս գաւազան ծաղկեալ (հմմտ. Թիւք Ժէ 8, Եբր. Թ 4), վարսաւոր արմաւենի տնկեալ ի գաւիթս Աստուծոյ (հմմտ. Սղմ. ՂԱ 13-14), խնձոր ի փայտս անտառի (հմմտ. Եբգ. Բ 3), շուշան եւ ձիթենի պտղալից ի մէջ փշոց (հմմտ. Եբգ. Բ 2), պարտէզ փակեալ եւ աղբիւր շնորհաց (հմմտ. Եբգ. Դ 12), որոյ գործ իւր բազում որդիս ի փառս ածեալ, յոր դիմեալքն մխիթարին մխիթարութեամբն, որով մեք մխիթարիմք ի սմա, եւ ոչ միայն այս, այլ եւ զայս մխիթարեալ յորդորիմք:

Նախերգան [իմաս]տից

Իդձ ցանկութեան իմաստից ի միտս կալեալ թեթեւ գնա գործէ դիւրասահ սլացմամբ երագոտն անքայլ գնացիւք այծեմն երես յարաշարժութեամբ¹⁴ ի լերինս Բեթելայ եւ ի բլուրս խնկաբերս կնդրկոյ (հմմտ. Եբգ. Դ 6) եւ ուղեղ կաակութեամբ (՞) խայտողական վազիւք կոխել ըստ նմանութեան գեղեցիկ եղբորորդոյն եղջիւրագնաց¹⁵ ի լեռնացեալ բլուրս մարգարէահրաման¹⁶ բարոիւք՝ հայել յերկինս ի վեր եւ հպիլ ծայրիւ մատին մտաց զփիլաք եւ որ ընդ արդին, եւ իջանել յարարածս մինչեւ յանհատս եւ ի սոցունց իմաստասիրել զԱրարիչն, ըստ առաքելական ասիցն, թէ՛ Ամերեւոյթն Աստուծոյ յերեւելեացս յայտնի ճանաչի (Հռոմ. Ա 20): Ի մեծութեան է սորա անբաւութիւն նորա, ի կառութեան է սորա իմաստութիւն նորա, ի պիտանութեան է

սորա բարերարութիւն նորա. եւ այսու նմանել այնոցիկ իմաստուն թռեցելոցն, որ յայսոսիկ պանծաբաքն¹⁷ են: Եւ է, զի բուռն հարկանեն զտարերացս, որ են սկզբունք քննութեանս զմաղասոյ եւ զարենէ զխարտեաշ եւ զսեւ մաղձոյ, եւ իջանել մինչեւ ի նմանամասունսն, եւ այսու նմանել զաշխարհս¹⁸ եւ զբնութիւն մարդոյս, զի գոյացականքն ոչ զանազանին, որպէս յասելն «զլեռն փոքր եւ զկորեակ մեծ»¹⁹, եւ Սոկրատ աւելի ոչ գոյ քան զմրջիւն, զատ ի բան վասն որոյ ոմանք յարտաքնոցն կոկոզանաւք փոքրիկ աշխարհ²⁰ ասացին զմարդն²¹, եւ յարմարեցին այսպէս զայս արինակ. երկին՝ զլուսն, լուսաւորք՝ աշքն, հուր՝ ջերմութիւնն, աւղ՝ շունչն, որոտ՝ բարբառն, անձրեւ՝ շիթք բերանոյն, տարի՝ յաւդուածքն, ամիսք՝ անդամքն, ջուր՝ մաղասն, երկիր՝ սեւ մաղձն, քարինք՝ ոսկերքն, փուխ[ը] քարինք՝ կակուղ ոսկերքն, աղբիւրք եւ գետք՝ երակքն, ոսկի եւ այլ նիւթք բուսականք՝ ատամունքն եւ ըղնգունքն, ծառք՝ ջիղքն, խոտ՝ հերք եւ մազն, ծով եւ ծովաինք՝ փորոտիքն, կենդանիք կայտառք՝ զգայարանքն²², թռչունք՝ խելացն արծարծմունքն: Այլ ի յայսոսիկ հանդիսանալն ոչ արարեալ եւ ոչ եւս երանելի առնէ [...]տաւղան, ըստ Պղատոնի, ոչ գոյ գովելի զոքնագէտն եւ ոչ

17 Զիք ՆԲՀ

18 «Նմանեցուցանենք երկրի գետաւ մաղձ, եւ ջրոյ՝ զմաղաս, օդոյ՝ զարիւնն, եւ հրոյ՝ խարտեաշն մաղձ, եւ է որպէս խառնուած տարերցս՝ կամ կարծր կամ խօնաւուտ կամ օդ». տե՛ս ՆԵՄԵՍԻՈՍ ԵՄԵՍԱԳԻ, Յաղագս բնութեան մարդոյ, Վեմետիկ, 1889, էջ 58:

19 Ստորոգութիւնք Արիստոտելի. տե՛ս «Կորին վարդապետի, Մամբրէի Վերծանողի եւ Դաւթի Անյաղթի մատենագրութիւնք», Վեմետիկ, 1833, տե՛ս ՆԲՀ, Ա, էջ 1119 («կորեակ»)

20 «Վասն որոյ ոմանք...աշխարհ» հատուածը լուսանցից:

21 Նկատի ունի Հերմէս Եռամեծի «Արդ, է փոքրիկ աշխարհ մարդ ըստ անձին եւ շնչոյ» միտքը. տե՛ս «Հերմէայ Եռամեծի առ Ասկղեպիոս Սափմանք», աշխտ. Յ. Մանանդեանի, «Բանբեր Մատենադարանի» թիւ 3, էջ 299 [1-2], հմմտ. «Ի մարդում իբր ի փոքր աշխարհում, ըստ Դիմկրիտոսի»,- Սափմանք իմաստասիրութեան, Ժ, տե՛ս Դաւիթ Անյաղթ, Երկասիրութիւնք փիլիսոփայականք, աշխատ. Ս. Արեւշատեանի, Եր., 1980, էջ 71:

22 ձեռ. սգայարանքն

13 1 բառ անընթեռնելի

14 ձեռ. յերաշարժութեամբ

15 Զիք ՆԲՀ

16 Զիք ՆԲՀ

որ դիւրաւ ի բերան ա[ռ]նուցու յոլովս, բայց թէ սրբական վարս ընծանցուցէ²³՝ հոգի մարմնով վարել եւ է...ն անելով խոկալ զմահ²⁴, դաստիարակել զակն՝ ոչ ննջել զքուն հեշտութիւն՝ յարատ հայելով զեղբայրն մահու, այլ զի լուսաւոր առնիցէ զլոյս գիտութիւն եւ զունկն ոչ մարմաշելով թուլանալ, այլ խրատու Տեառն բանալ եւ լսելի առնել զցնծութիւն եւ զուրախութիւն առաւատու եւ զոնգունս ոչ իգացուցանել, փոշէգած²⁵ լինել ի շոգոլիս, այլ՝ հոտ անուշ առ Քրիստոս (հմմտ. Բ Կորնթ. Բ 15), զի մանաւանդ զՔրիստոս ի մեզ ընդունիցիմք։ Եւ զբերանն ոչ պոռնկեցուցանել, յառնուլ յաճախ զմահկանացուն եւ յելս անմահին, բայց թէ բանիւ Աստուծոյ բանալ եւ ձգել զհոգին եւ ընդարձակել եւ լնուլ հոգիով, եւ լեզու ոչ հուր զարդ անիրաւութեան, սուսեր սուր եւ ածելի սրել, այլ ցնծալ յարգարութիւն եւ լինել կնտընոց փառաբանութեան, եւ զատամունս ոչ զեն եւ նետս խոցոտիչ որդոց մարդկան փոխանակ սպասաւորելոյ անգործ երեւել բանին մանրաղաց ծասկեալ ի պէտս աստուածեան ընդուն[ն]ակութեան եկեղեցոյ։ Այսպէս եւ զայլն ամենայն զնեռս (՝) ի գործ ուղեղ եւ ի տուրս պիտեցել[ոց...] աւթս սուրբ յառից եւ յարենէ եւ ի շաղ...նց զոտս պատուիրանաւ ընթանալով ժամանել ի դրունս Երուսաղէմի զսիրտ սուրբ եղիցի, որով տեսանի Աստուած (Մտթ. Ե 8), զգործ ի շնչոյն ի լա[ռ]...րոյ հաստատուն եւ անխզելի, զլեարդ [գ]րկանս փափկութեան ի պատմել ուղեղ. Տէր Աստուած մեր, որ է տեղի ի խթան ընդոստուցիչ

յաստուածային գ[ործ]ն եւ ի պահպանութեան ի վնասելն փ[րկեց]ելոցն, զփայծաղն ի ստուգութեան [...ութեան], եւ զերկամունս ի հանճար պ[...]տականս, զորովայնն՝ ոչ աստուածային ցուցանել (հմմտ. Փիլիպ. Գ 19), այլ զի ի ներքս ընդունիցի զբանն, եւ իմացմամբ ի վեր տայցէ եւ զեղեցկապէս ցուցանիցի յաղազս նորոյս Իսրայէլի։ Այսու աւրինակաւ փոքու աշխարհի մեծի վերակացեալ լինիմ, արդ, բանին առաքինութեամբ, որպէս հաճոյ թուի հրաման Արարչին աստուածայնոց արանց Գրիգորի Աստուածաբանի, Գրիգորի Նիւսիայ։ Այս է իմաստութեան եւ այս է իմաստասիրութեան. այսքան ծանր եւ դժուար առ ի բաւել, եւ այնչափոյս աւգտակար²⁶ եւ քաղցր։ Իսկ մեք անզաւրացեալ եւ տարտամ։ Վասն որոյ ահիւ ըմբռնեալ թերեւս իցեմք, եթէ ոչ նշխար ինչ փշրան շնորհիցի փոխ տուել մեզ բարեկամք աղաւթից ձերոց հացիցդ²⁷։

Եւ մարմինն ի մարմնոյս ըմբռնիլ²⁸ անհնար է²⁹, եւ ասի. Բանքն ուսուցանեն տեսասիրացն, զի ունի եւ ոչ եթէ կալեալ լինի։ Եւ այս յայտ անտի է, զի ոգի կալեցող մարմնոյ մեկնեալ ի նմանէ թողանի մեռեալ եւ լուծեալ քահի³⁰։ Զի եթէ լոյսս այս ունի զճրագ, որպէս զերկաթն՝ հուր, մանաւանդ ցրտով մխեալ, ուրեմն ճշմարիտ է դաւանութեան հաւատոյ արարիչ Բանն բուռն հարեալ զզաւակէն Աբրահամու ան[ըմբռն]եալն մարմնով ըմբռնիլ, որ եւ յաւետ ըմբռնեալ մարմինն յԱստուածուն Բանն աղբիւր սիր[ոյ...]ահ եւ մշտական, որով միապետեալդ³¹ պ[ատրաս]տեաց զաշակերտս Աւետարանին։ Իսկ առ այս ո՛ր բաւական իցէ, զի ոչ եթէ, զի մեք սիրեցաք զնայ, այլ զի նա նախ սիրեաց զմեզ (Ա Յովհ. Գ 10)։ Եւ յաւետ եւս, վասն զի սէրն հասարակաց է, եւ ոմանց եւս պատուոյ շնորհ է տեսակ, յորոց մասին թուիմք այժմ եւ մեք, եթէ աշտիճա՞ն պարտիցէ ասել եւ թէ՞ սպասաւորութիւն։ Եւ արդ, զի՞նչ արդեւք իցեմք. ոչ եթէ մեք, այլ՝ շնորհքն Աստուծոյ եւ ձիր եկեղեցւոյ իւրոյ, եւ

23 Միտքը, որ կենցաղավարում է Պլատոնի «Հիպպաս մեծ» (286 a-e), «Պետութիւն» (VII, 527a-531 c) երկերում (տե՛ս Դաւիթ Անյաղթ, Երկեր, թարգմանութիւնը, առաջաբանը և ծանօթագրութիւնները Ս.Ս. Արեւշատեանի, Եր., 1980, էջ 304, ծմթ. 15), քաղուած է Դաւիթ Անյաղթի Սահման-քից. պր. Ա. Երկասիրութիւնը Փիլիսոփայականը, էջ 35:

24 Միտքը քաղուած է Դաւիթ Անյաղթի «Սահմանք»-ից. պր. Զ. «Քանգի ի Փեդոնի» 64a, 82 c-d) տրամաբանութեան երեւի Պլատոնի ասել զիմաստասիրութիւն խոկումն մահու, որով, ասէ, տագնապին, որք միանգամ հանդիպին ուղղորդաբար մերձեցեալ յիմաստասիրութիւն, մոռանալ զնոսին իսկ զհնքեանս եւ զայլսն՝ ոչ այլ ինչ խոկալով, քան եթէ զմեռանելն եւ զմահանալն». տե՛ս Դաւիթ Անյաղթ, Երկեր, էջ 70, ծմթ. 42, Երկասիրութիւնը փիլիսոփայականը, էջ 57-58:

25 Զիք ՆԱՀ

26 ձեռ. ակտակար

27 ձեռ. հացիցս

28 ձեռ. ըմբռնիլ

29 Միտքը քաղուած է Դաւիթ Անյաղթի Սահման-քից. պր. Ա. տե՛ս Երկեր, էջ 42-44, նաև՝ Երկասիրութիւնը փիլիսոփայականը, էջ 35-37:

30 թերեւս՝ քայքայի

31 ձեռ. միապետեալս

յաւժարութիւն եւ աղաւթից նպաւորութիւն³² հոգեւոր հաւր մերոյ եւ հաւատարիմ եղբարց մեր ի Քրիստոս: Եւ այս ամենոյ հասարակ մեր արմատոյ անուանակիր անեղ Հոգոյ վարդապետի մեծ եւ հոյակապ անուն եւ ի նմանէ լուսընկալ եւ լուսաբեր գանկանակաց³³ եւ յԱստուած յուսով աղաւթեւք ձեր, եւ բարէխաւսութեամբ ամենայն սրբոց, ի Հոգւոյն առաջնորդեալ եկեսցուք ի բանս եւ ի խորհուրդ տաւնիս:

ԶԱստուած [ասեն] զանորակն, զանքանակն³⁴ առ որս մեզ ասէ գոլ իմանալ զանազան [...] ³⁵ ինքն իսկ Պաւղոս հազարապետն խելացի եւ արագ ետ, որ յԱստուծոյ, որով եւ Քրիստոս խաւսէր (հմմտ. Բ Կորնթ. Բ 22). եւ այն ոչ վասն էութեան բնութեանն, զի այս անհնար է, եւ ասի ուսուցանեն աստուածաբան տեսասէր հոգեպարակքն³⁶ ոչ տես[անելով] ոչ տեսանել ումէք կարող (տե՛ս Յովհ. Ա 18): Նոյն ինքն առաքել[ալն] աղաւթէ ներհուն լինել աշակերտելոց ի լայնութիւն եւ բարձրութիւն, երկայնութիւն եւ խորութիւն (հմմտ. Նիքեո. Գ 18), առաւելութիւն սիրոյ նորա ի սուրբս իւր, որով տա մտառու լսասիրաց հաւատով դնել ի սիրտս անսկիզբն եւ անվաղձան, անբաւ եւ անհաս, ըստ յատկութեանն, որոյ գոյութիւն [անտ]եսական տեսակին եւ անձեւին ձեւ իմանի: Սէր, ըստ Յոհաննու ձայնին, թէ՛ Աստուած սէր է (Ա Յովհ. Գ 16), որում ոչ գթոյ յերկարձգութեամբ տեղեկանի, որպէս ասի եւ «լոյս»՝ ոչ որ յաւդ ցնդի, եւ աչաց տեսանել տայ, եւ ինքն է տեսանելեացն գեղեցկագոյն: Եւ ընդ

այս ոչ է հիացումն, զի թէ վասն զի ամենայն մարմին եռակի տարրորոշ է, եւ անմարմին հոգի ընդ նմա եռակի տարրորոշ ի բանն, ի ցասումն եւ ի ցանկութեանս՝³⁷ ի սոյն ի մեզ ելով հոգի, եւ ոչ ինչ գիտեմք տեղեկութեամբ, ըստ Պաւղոսի, զի ասէ. Ես ոչ [համա]րիմ զանձն, եթէ հասու իցեմ (հմմտ. Բ Կորնթ. Ժ 14, որպէս զի եւ զորակ եւ զքանակ, այլեւ զթիւ իւ[...])ական եւ իմանալի գոլ ասացին իմաստասէրքն, որում հաւանել իմաստուն եւ մարթուշ, որ է արքն³⁸: Պայքար մաքառման տուեալ այնու ընդդէմ քննող [...] հաւատոյն եւս, այլ ինչ ի յայսոսիկ [կամի]մք ցոյց մեծանձնութիւնդ ձերում փոյթ ի մտի եղեալ պատուիրանապահ երեւեալ գոնեա միոյս այս տէրունական հրամանացն, թէ՛ Քննեցէք զԳիրս (Յովհ. Ե 39), եւ առաքելոյ գրեցելոյն առ Տիմոթէոս. Մի՛տ դիր Գրոց մխիթարութեամ (Ա Տիմոթ. Գ 13), զոր եւ ի կարգ [...]ութիւն առեալ ասէ՝ ի մանկութենէն գիտել (Բ Տիմոթ. Գ 15): Եւ զի է սա արհեստ արհեստից, մակացութիւն մակացութեան, զոր գործելով ուսանիմք, նոյնպէս ուսանելով գործել հրամանիմք, զի տեսութեամբ լսելն հաւատարիմ գոյ, ըստ աւրինացն, զի յայսմանէ թերի, զի մի՛ ասացից, թէ ամենեւին պատուհասեալ: Եւ արդ, ան առեալ զաղաւթս ձեր՝ բուռն հարցուք զբնաբանութենէս, զի շնորհք Հոգւոյն ի ներքս մտեալ, որ ոչ երբէք թողու զխնդրողս հեղութիւն, գթութիւն եւ մարդասիրութիւն նորայ, եւ աններելի զայրանա մեղապարտ հայհոյողացն, որ ողորմութեամբ լցեալ զառազաստ մտաց մերոց հասուցանէ ի նաւահանգիստ ճառիս:

Թէպէտ³⁹ հունձքն նորայ հատցիմ⁴⁰ ի վերուստ, բունն նորա ի քարի պահեսցի, ի հոտոյ ջրոյ ծաղկեսցի եւ արասցի հունձս (Յոբ ԺԴ 8-9): Ժշմարիտ են բանք ամենայն սրբոցն, որ ի Գիրս հաստատեալ է ի Հոգւոյն Սրբոյ առաւել քան ի մեռելոցն յարուցելոց:

Վկայէ հայրն հաւատոյ Աբրահամ՝ ասելով առ մեծատունն. Որդեակ, եթէ Մովսիսի եւ մար-

32 Զիք ՆԲՀ. Թերես՝ նպաստաւորութիւն

33 Զիք ՆԲՀ

34 «Եթէ պարզ է Աստուած բնութեամբ եւ անմիւս, անքանակ [անորակ] եւ անմեծութիւն, անշարագիր», տե՛ս Ս. Գրիգոր Նիսացի, Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն (Յաղագս կազմութեան մարդոյ), աշխ. Ս. Վարդանեանի, Ս. Էջմիածին, 2008, էջ 160, «մարմին աստուածային անորակ, անքանակ, աներբ...» (Եղիշէ, Վարդապետութիւն ըստ Յովհաննու սիրելոյ ի չարչարան Տեառն.- Սրբոյ հօրն մերոյ Եղիշէի մատենագրութիւն, Վեմետիկ, 1859, էջ 306) «զանքան եւ զանորակ աստուածութիւնդ». Բեցիկ վարդապետ, Աղօթագիրք. տե՛ս ՆԲՀ, Ա, էջ 254 («անքանակ»):

35 1 բառ անընթեռնելի

36 Զիք ՆԲՀ

37 Տե՛ս Նեմեսիոս Եմեսացի, «Յաղագս բնութեան մարդոյ», էջ 28

38 Տե՛ս և հմմտ. «Փիլոնի Յաղագս նախախնամութեան. Ա.

39 Ի լուս. (թ.7ա) բնագրային եմթամասի նշան:

40 Ընկալեալ թրգմ.անկցիմ] հատցիմ:

գարեիցն ոչ հաւատասցեն, եւ ոչ եթէ ի մեռելոց որ յարիցէ, հաւատասցեն (Ղուկ. ԺԶ 31): Եւ յի-րաւի է, զի որ մեռան, զի մարդ է, ի յառնելն նոյն մարդ է: Իսկ Գիրքն Աստուծոյ բան, ըստ իմաստ-նոյն. Իմ բանք յԱստուծոյ խաւեցեալ են, որ-դեալ (Առակ. ԼԱ 1). զոր եւ ամենայն մարգա-րէքն հանդիսանան՝ ցուցանել յԱստուծոյ գոլ տա-նիլ ազդումն եւ պատգամ, եւ թ՝ Այսպէս ասէ Տէր, Սուրբն եւ Բարձրեալն (հմմտ. Ես. Մէ. 15), որոց մի եւ երեւելի նահատակ յաղթող եւ մարգարէ համբերատար, սքանչելին Յոբ կարգաւոր բանսն ընդ բարեկամն իւր առակաւոր զայ ձեակեր-տեալ⁴¹. «Թէպէտ հունձքն նորա անկանին ի վե-րուստ, բանն նորա ի քարի պահեսցէ» եւ այլն: Ընդ որ սքանչանալ արժան է, զի ընթանուր ծառք ոչ այսպէս բնաւորեալ են լինել, զի ահա են, որ արմատաքի խլին ի հողմոյ եւ որ այլ իմն պատ-ճառէ, եւ է, որ հատեալ ոչ պահի, այլ, փտեալ ապականի, եւ կամ մնացեալ փորի եւ բնակու-թեան մեղուաց գլտանի, որպէս մայրն: Եւ թէ գոյ ազգ փայտ, որ հատմամբ ծաղկէ եւ մա-հուամբ գոյացեալ աճէ որպէս առասպելացեալ⁴² այն, որ ընդ հրոյ եւ ընդ ձեռին մարտուցեալ ասի մասամբ զբոլորն ոչ է հաստումն (՝) զարդարեալ, բայց ընթանուր բոլորին՝ զմասնաւորն:

Ապա ուրեմն ոչ վասն փայտի է բանս, այլ մի՛գուցէ այլաբանեալ է. «փայտ» զբնութիւնս կո-չէ, ըստ հրամանի Տեառն. Թէ ընդ փայտ դալար զայս արարի՞ն՝ ընդ չորն զի՞նչ առնիցեն (Ղուկ. ԻԳ 31): Ուստի յայտ է, թէ բնութիւնս իմանի ծառ, ըստ Հերակլիտեայ, իսկ զհնձոց հատումն՝ զբա-րերարին պատուհասն, թէ՛ Հող էիր եւ ի հող դարձցիս (Մնդ. Գ 19), որով ամենեքեան մեռա-նիմք: Բունն պահեալ յայնմ վիմի, որովն Հայր արկ ի նմա հաստահողոյսն. այն եւ բազմապա-տիկ վէմն, որ թէպէտ ի մարդիկ շինողաց անար-գեալ եղեւ (հմմտ. Մտթ. ԻԱ 42), այլ ի հաւատով յուսողացն ընտիր եւ պատուական է, որով դար-ձեալ ծաղկեալ տա պտուղ կատարեալ ի ժամա-նակի յարութեան: Բայց ոչ ինձ առաւել սքանչա-նալ է, այս է՝ ոչ ասաց՝ անձրեւել կամ յոռոգեալ ջրոյ կամ տամկանալ կամ նամել, այլ ի «հոտոյ» որ անհնարին երեւի, զի որպէս զխնկոյ ճառէ եւ

ոչ զջրոյ, վասն զի որ զէիցս բնութեան կամեցան քննելութեամբ իմանալ զջուր իգական եւ կրա-կան ասել, ոչ համարին ամալթ, այլ եւ զջուր քան զջուր ալոց եւ անալոցագոյն⁴³ ասացին, եւ ի հա-մոյ եւ ի հոտոյ անորակ գոլ հաստատեն:

Վեց, ասեն, սեռ համոյ. քաղցր եւ դառն, թթու եւ կծու, աղի եւ գէր, զոր բազմապատիկ արարեալ գտցես զիրաքանչիւրսն յատկացեալ երեք հարիւր ութսուն եւ չորս: Իսկ հոտ յԳ (3) բաժանի տեսակ. անոյշ եւ ժահ եւ միջակ, եւ իւ-րաքանչիւրսն յանհատս տրամատիլ ունին կամե-ցաւորն: Եւ յայսցանէ ջուր, եւ ոչ մի համ եւ կամ հոտ, բայց թէ՛ ի տեղւոյն եւ յամանէ. եւ այն բնութիւնն ոչ է, որ եւս զարմանալ բերէ զհոտ ներ-գործական, մանաւանդ, որ երեւի արուեստի եւ աւելոյ բնութիւն, որպէս երեւի զայլ իմն ընպելոյ, յայտ առնէ եւոջ զայս սովորակ ջրոյ, յորմէ կեն-դանի շնչաւորք եւ տունկք սնանին եւ սերմանք, որ ի դրախտին յորդառատ բխեալ քառահոլով գետահետեւք զմայլեալ զուարճանէրն Ադամ, որում զծարան խոստովանի Դաւիթ՝ ծարաւի, ասելով, անձին, ըստ ծարաւկոտ եղջերոյ (տե՛ս Սղմ. ԽԱ 2), յոր հրաւիրէ Եսայի. Որպէս որ ծա-րաւիդ էք, երթալք ի ջուր (Ես. ՄԵ 1) որ եւ ինքն իսկ Զուրն կենդանի աղաղակաւ կոչէր առ ինքն ի տաճարին (տե՛ս Յովհ. է 37): Այս է ջուր հոտովն յատուկ գհատեալ բունն կենդանի առնէ. Սա Զուր կենդանի եւ կենսատու:

Սուրբն Իգնատիէ աղաղակէր եւ խն-դրէր, զի ընդունողաւքն խաղասցէ ի կեանսն յաւիտե-նից⁴⁴: Սա առ Եղիսէիւ փոխեալ փոխատրեալ ջրոյ յեղհեղեալ (տե՛ս Գ Թագ. ԺԸ 41-46) եւ թա-փեալ բուրմամբ՝ լնլով զ[ը]նդունողացն կիրթ զգայութիւնսն, զոմանս առ ինքն ձգելով, որպէս Իսահակի⁴⁵ հոտոտիլն ի հանդերձ որդոյն, որպէս ի հոտ աւնդիոյ լիոյ, զոր արհմեաց Տէր (Մնդ. Իէ 27), որ է դրախտն: Զի յորմէ հետէ լուաւ Ադամ զձայն գնալոյ ոտինն Աստուծոյ (տե՛ս Մնդ. Գ 8) իմացաւ զանփոփոխումն ախորժելի հոտ խնկոյ եղոյ Տեառն. Ոչ մնաց հոգի՞ն ի մարդիկ վասն լիմելոյ մարմին (Մնդ. Զ 3), վասն զի դար-

41 Զիք՝ ՆԲՀ

42 Զիք՝ ՆԲՀ

43 Զիք՝ ՆԲՀ բայց՝ ալոցագոյն. ՆԲՀ, Ա, էջ 14:

44 Տե՛ս Ս. Իգնատիոս Ամտիրացի (Աստուածագ-գեաց), Թուղթ առ Հռոմ. գլ. Գ, [է]:

45 ձեռ. Իսահակի

ձաւ փշուճն առ վերայ փշողն իւր: Իսկ Աբրահամ ընդառաջ ել (տե՛ս Ծնդ. ԺԸ) եւ Իսահակ⁴⁶ հոտոտեաց (տե՛ս Ծնդ. ԻԷ 27), բայց աւագակն զհետ ձգեալ եմուտ անդրէն ի դրախտն (տե՛ս Ղուկ. ԻԳ 43): Այլ Պաւլոս ամենեւին լցեալ ոչ կարէր ունել յեռալն ի նմա եւ փորձիւ խաւսելն կամէր (հմմտ. Բ Կորնթ. ԺԳ 3) ընթան[ալ]... մատակարարեալ հոտ անուշ գոլով (հմմտ. Բ Կորնթ. Բ 15) [...] եան եղոյ եւ Աւծելոյն եւ Աւծողին Քրիստոսի ոմանց հոտ մահուանէ ի մահ եւ ոմանց կեանաց ի կեանս (Բ Կորնթ. Բ 16) ի մէջ տիմոթեանցն եւ տիտոսեանցն, փիլիպեանցն եւ հիմինեանցն, որոց զանազանութիւնքն յաղանին եւ ի փնդիւն ճանաչի. եղիցի մեզ լինել ի սակ ի տիմոթեանցն զուարթացեալ եւ ի մեղացն մեռելութենէ կենդանացեալք վերստին սկսանել զգործս բարեաց, որ է հոգեւոր կենդանութեան, այլ եւ եղ սին հաստատուն տան հարսին եկեղեցւոյ զուարթարար, ըստ Երեմիայի. Հոգի երեսաց մերոց Տէր Քրիստոս (Ողբ Դ. 20):

Սա գինի անուշ արկ կուսից, ըստ Զաքարիայի (տե՛ս Զաք. Թ 17), լի հնձան կոխեալ ուրախարար հաւատով ըմպողացն: Սա է հաց կենդանի յերկնէ իջեալ (տե՛ս Յովհ. Զ 51)՝ հաստատաւ զսիրտս բեկեալս խոնարհութեան իմաստնիւք: Հայելով ի փայտն բարձրացեալ, ո՛վ թէ որքան է խորք հոտոյ այսմ ջրոյ ըստուգապէս անդունդք անդնդոց շնչէ սաստիւ, եւ առաքումն իւր առնէ դրախտ Աննեանց (Երգ Դ 13)՝ զուստն եւ զուրն ոչ եղեալ ընդ խորաւք, եւ ոչ ունել անդնդոց, դիւրաւ ընծայեալ, գտեալ եւ ասացեալ՝ մարդկան պաշտաւն տանել, զի մի՛ անգիտութեամբ անգիտացեալ ի տոյժ անկցին անհաւատից, այլ խոստովանութեամբ Գրոց հաւատով՝ անգիտանալ աւելորդ եւ վայրապար, եւ ի վնասաւ որոճիցն հոտոյ խուսել, եւ եղոյ հոտոյ այսմիկ հասցուք ի վաեյս կատարելագոյն հասման հանդերձելոցն. զի թէ մանանայն, որ ինչ եւ ինչ ինչ եւ սնոտեաց⁴⁷ կոչել ապերախտին Իսրայէլի, կարէր ի համս եւ ի հոտ ամենայն նիւթական կերակրոյ փոխարկիլ, այլ եւ զջրոյս տալ զճաշակ մտառուաց՝ եղիցի մեզ փոխարկիլ զաւրութեամբ հոտոյս եւ ի ճաշակ սորա սուրբ, որ է ինքն իսկ աղբիւրն բարեաց՝

Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգին, որում ամենայն գոհութիւն եւ փառք այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

ՆՈՐԻՆ ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՅԱՂԱԳԱՎԵՑԱՐԵԱՅ ԱՐԱՐՉՈՒԹԵԱՆ . «ԶԱՍԵՆԱՅՆ ՉՈՐ ԱՐԱՐ ԵՒ ԱՅԱ ԲԱՐԻ ԵՆ ՅՈՅԺ. ԵՒ ԵՂԵՒ ԵՐԵԿՈՅ ԵՒ ԵՂԵՒ ՎԱՐՈՐԴԵԱՆ՝ ԱՐ ՎԵՑԵՐՈՐԴ» . ԾՆ Ա 28(=31)⁴⁸:

Եթէ ոք կամեսցի բազմազան եւ երջանիկ ծաղկանց հոգ տանել առ ախտացելոցն բժշկութիւն, զի կարող լիցի ի վերայ հասանել ախտիցն զանազանութեան: Որք ի լուսոյ են զրկեալ կամ խելապատակ ուղղոյն ապականեալ եւ կամ թէ ոտիցն եւ ձեռացն ուղղութիւն թիւրեալ իցէ, պարտ է զվայրս եւ զտեղիս քննել, որք հմուտ են գործոյն, եւ յայտ է, զի լսեն, թէ ոչ գոն արմատք ծաղկանց ի փողոցս գիւղից եւ ոչ յանցս ճանապարհաց, կամ ի մակաղատեղս անասնոց եւ յորջս գազանաց, այլ յայլ բարձրագահ անապատացեալ եւ յազատաբնակ⁴⁹ ապահովացեալ տեղիս:

Նմանապէս է իմանալ այժմ ապա եւ զհոգեկան բժշկութեան արուեստաւորաց ձայնս, որք ոչ գոլ ասեն զհոգեւորական անդեղաիցն աւճառսն ի մակաղատեղս եւ ճարակս գազանաց եւ ցրուց, այսինքն՝ ի միտս եւ յոգիս ճարակ եւ կոխան խլեալ սրտմտական ատելութեան եւ ցանկութեան եւ այլոցն ախտից այլ ոգիս եւ ի միտս աստուածաբնակս եւ հոգեզարդ բողբոջեալ զուարթանան եւ աճեն նոքա, որոց արմատք են սաղմոսք, աղաւթք եւ երգք հոգեւորականք եւ որոճումն մշտակա աստուածային պատգամաց, որոց ի ձեռն արտասուաթոր պաղատանացն առ ի վերուստ իջանե ցաւղք աստուածային եւ արբուցանեն ի միշտ անդր զծաղիկս հոգեւորս, եւ սնուցանեն ուխկք⁵⁰ կենդանականք քաղցրաշունչ հոգւոյն հնչմունք առ ի լինել դեղ կենաց, եւ անդ եղեալ փրկութիւն եւ բժշկութիւն աստուածասիրաց անձանց: Այլ զի մեք յայսպիսի բարբերողիս մտաց եւ առաքինասէր վարուց աւտար եւ որիշ

46 ձեռ. Իսահակ

47 ձեռ. սնոտիեաց

48 Աղբիւր. ՄՄ, ձեռ. 5411, Թ. 5բ-9ա:

49 Զիք ՆԲՀ

50 ձեռ. ոխկք

գտաք առ ի մերոց վատավան⁵¹, պղերգք եւ թոյլ անձանց: Վասն որոյ եւ ոչ ընդ գրով արկանել եւ կամ յանձնէ եւ ի մտաց ճառել ինչ իշխեցաք, այլ զոր ինչ միանգամ յաստուածաշունչ գիրս հարքն սուրբ հաստատեցին, եւ լուաք ի կենդանական ձայնից հոգեկիր եւ իմաստայեղձ վարդապետաց մերոց, որպէս զի շահաւէտ եւ դիւրընկալ լիցի մանկանց եկեղեցւոյ ուրախութեամբ եւ ցնծութեամբ տանել տանաւ աստուածային բովանդակ տարոյն, որ կատարին ի փառս Աստուծոյ:

Արդ, է սկիզբն եւ պատճառ տանից մերոց Աստուծոյ Յայտնութիւն եւ Մկրտութիւն: Իսկ ի կատարումն փրկութեան եւ ազատութեան մերոյ կիրակեն, որում միաշաբաթ ասի, եւ կոչի ար մի, յորում աւուր եւ լոյսն հաստատեցաւ, եւ լուծաւ խաւարն, եւ ձգեցաւ երկինք, եւ կառուցաւ երկիր, եւ երեւեցան ամենայն զարդք նոցա: Եւ այս ամենայն մեծամեծ գործք Աստուծոյ կոչեցաւ ի միաշաբաթ, վասնզի ոչ գոյր անարար բնութեան Աստուածութեան աշխատութիւն, վասն որոյ շաբաթ անուանեցաւ: Եւ առաջին արն կիրակէ ար տէրութեան, զի ի սմա յայտնեն սքանչելիք Աստուածութեան յառաջինս եւ ի վերջինս. առաջին, որ էսկիզբն արարչութեան եւ ի վերջին, որ է շաբաթ՝ հանգիստ ամենայն աշխատելոց:

Միաշաբաթինյառաջինն ծագեաց լոյս եւ կորեաւ խաւար: Իսկ երկրորդ միաշաբաթին յարեաւ Քրիստոս ի մեռելոց, եւ լուծաւ մոլորութիւն անարէն դիւական կռապաշտութեան: Իսկ յերրորդ միաշաբաթին է այն ինքն գալուստ Որդւոյն Աստուծոյ, որ խափանէ զամենայն իշխանութիւն դիւացն եւ զգործս մեղաւորաց: Արդ, պատուեալ է արս այս լուսով յարարչութեան յԱստուծոյ եւ աւետիւք ի յարութեան, եւ ազատիլ ի գալստեան, պատուէ եկեղեցի Աստուծոյ զյարութիւն Քրիստոսի⁵² զար կիրակէի զպատկեր միւսանգամ գալստեանն Քրիստոսի: Աստ դատարկանալ ասի մեզ եւ փափկանալ կերակրաւք է հանգստեամբ, որպէս ի վերջին կիրակէիբարձեալէ աշխատութիւն մարմնոց եւ կարատութիւն կերակրոց: Այլ աստուածասեր եւ կատարեալ ծառայք զհրա-

մանս տեառն իւրեանց կատարելով պատուեն ինքեանք նովաւ յԱստուծոյ, իսկ անհաւանք եւ մեղաւորք դատին յաւուր կիրակէի եւ դատապարտին յԱստուծոյ:

Վասն որոյ զպատուել յառաքելոց եւ մարգարէից պարտ է ապա եւ մեզ զգուշութեամբ պատուել եւ ոչ որովայնամոլութեան եւ արբեցութեան հատնել, այլ շատանալ մեզ տքնութեամբ եւ յաղաթիւք յար կիրակէին, եւ մխիթարիլ եւ սփոփիլ աստուածային գրաւք եւ երգաւք հոգեւորաւք, զոր եւ բերէ իսկ պատկեր աւուրս զպատկեր գալստեան Որդւոյն Աստուծոյ, յորժամ յառաջաստն մտանէ Թագաւորն երկնաւոր եւ անմահացեալք ընդ նմա փառաւք սկսանին քաղցրաձայն երգել նմա զերգս հոգեկանս. Քեզ վայել է արհմոլութիւն, Աստուած, ի Սիւան, եւ քեզ տայցեն աղաւթք, Երուսաղէմ (Սղմ. ԿԴ 2):

Այս զվերնոյն ասէ զՍիւանէ եւ զԵրուսաղէմէ: Աղաղակէ ապա եւ Նաայի զնախատեսութիւն Հոգւոյն, զոր տեսանէր (տե՛ս Նա. ԺԱ 2-4): Գոչէ եւ Պաւղոս ընդ բոլոր ծագս տիեզերաց զահաւոր եւ զանհրաժեշտ գալուստ Որդւոյն Աստուծոյ (տե՛ս Գաղատ. Դ 4): Ապա եւ ինքն իսկ Բանն Աստուած իբր ի բարձանց ի բեմէ անտի ասի. Որ ոչ էք արժանի հաղորդիլ աստուածային խորհրդոյս, առ դուրս ելեալ արտաքս կացէք: Հատաւ ահա վճիռ դատաստանին անվրէպ ի վերայ արդարոց եւ մեղաւորաց: Վասն զի որ աստ լի քաղցրութեամբ եւ համբերութեամբ ասէ. Որ ոչ էք կարող հաղորդիլ աստուածային խորհրդոյս, արտաքս կացէք եւ աղաւթեցէք: Բայց անդ ոչ այսպէս, այլ Երթայք, ասէ, յիմէն, անիծեալք ի հուրն յաւիտենական (Մտթ. ԻԵ 41): Արդ, առանց քաղցրութեան եւ ողորմութեան են հրամանքն այն եւ ոչ այլոյ ուրուք, այլ նշան ինքեան իսկ են Բանին Աստուծոյ, որ աստ խոնարհութեամբ եւ զթութեամբ խաւսի, եւ անդ զարութեամբ մեծաւ եւ իրաւամբք դատի: Վասն այսորիկ հային մարդիկ ի քաղցրութիւն Բանին Աստուծոյ եւ ոչ երկնչին, այլ երկիւղածք Տեառն, եւ ոչք դողան ի բանից նորա հանապազար զայս յոյս յանձին ունին, եւ զար կիրակէին մեծաւ հսկմամբ եւ ջանիւ անքուն անցուցանեն զարհուրեալ՝ մի՛ գուցէ եկեալ յանկարծակի Տէրն գտանիցէ ի քուն, որպէս եւ

51 Զիք ՆԲՀ

52 տե՛ս Բարսեղ Կեսարացի, Յաղագս Վեցարեայ արարչութեան, աշխտ. Կ. Մուրադեանի, Եր., 1984, Ծառ Բ, էջ 62[20-21].

ասացն իսկ՝ ոչ ումէք գիտել զժամս եւ զժամանակ գալստեան նորա (տե՛ս Մրկ ԺԳ 33):

Այլ ար կիրակէին նշանակէ յայտնապէս զգալուստ երկնաւոր Փեսային, զի որում (յորում) աւուր զլոյսն հաստատեաց, եւ յորում աւուր յարեալ ի մեռելոց եւ հաստատեաց զմեզ հաւատով իւր աստուածային, ի նոյն իսկ աւուր կիրակէի նորոգէ զմեզ փառաւք յանմահութիւն, եւ ընկղմեացի մահկանացու բնութիւնս մեր ի կենացն յայնցանէ, եւ որպէս հաւատամք ի միաշաբաթոջ յոշնչէ առնել Աստուծոյ զարարածս, հաւատամք եւ այսմ, եթէ զարարեալ բնութիւնս մեր վերստին նորոգեացէ, ցուցանի եւ մեզ առաւատ միաշաբաթին մեծամեծ սքանչելեալք եւ լի գիտութեամբ գալ կանանցն ի գերեզման նախ քան զառաքեալսն եւ Բ (2) Աւետարանն Թաղմանն եւ Գալստեանն Տեառն, եւ Մեծացուցեն. «Արի Տէր եւ Թագաւոր Տէր» եւ «Շարժել սուրբ նշանն եւ գալ առ մեռեալքն», որ լի է եւ առաւել քան զայլ աւուրցն կատարին:

Արդ, կանայք, որ յառաջ խաբեացն հեղգացեալք, այժմ զգաստացեալք ի ձեռն յարութեան Քրիստոսի լինին նախատեսք եւ քարոզք յառաջ քան զառաքեալսն, զի ուր առաւել յեղեմ մեղքն, առաւել եւս յաւելան զընդհրքն (Հռոմ. Ե 20): Իսկ Բ (2) Աւետարանն նշանակէ զաստեացս եւ զհանդերձելումն առբերելով զաւրինակ, զի ստուգ ցուցանէ մեզ Աւետարանիչն զյարութիւն Քրիստոսի ի վիմն՝ (վիմին՝, վիմէն՝) ու[ր]՝ եղաւ Տէրն, եւ յամալթ լիցին անհաւատք եւ հերձուածաւդք: Եւ երկրորդ Աւետարանն զմիւսանգամ զալստեանն ունի ցուցումն. զփողոցն հնչումն, զհրեշտակաց բարբառն եւ զգետոցն հրեղինաց զբորբոքումն (տե՛ս Մտթ. ԻԳ 31), զի կարկեսցեն՝ (կարկեսցին՝) բերանք անհաւատիցն, որք ոչ յուսով հաւատան յարութեան մեռելոցն: Իսկ Մեծացուցեն զսրբոյ կուսին Մարիամու ասի գոհութիւն լի ուրախութեամբ, զի զարդարոցն առեալ զպատկեր, որք ուրախանան անճառ խընդութեամբ ասելով. Յնծասցէ հոգի իմ յարքայութեան քում, իսկ Արի Տէր (Սղմ. Գ 8) ասելովն զահաւոր դատաստանին՝ (դատաստանն՝) նշանակէ, զոր միաբան ասելով ի դէմս մարմնացելոյ Բանին ասեմք զյառնել եւ զնստելն: Իսկ Տէր թագաւորեաց յաւիտեան (Սղմ. ՃԽԵ 10) ասելով

յայտ է, եթէ զամենայն ինչ հնազանդ արար ի ներքոյ ոտից նորա, եւ զգննու զվայելչութիւն (Սղմ. ՂԲ. 1), այսինքն՝ զարդարս եւ զսուրբ կուսանս եւ զընտիր⁵³ հաւատացեալս եւ շմարիտ կրանաւորս, զարեամբ սրբեալ նահատակն: Վասն զի զգենուլ ասէ այն, յորժամ միով հոգեով միացեալ ի մի սէր բարերարին Աստուծոյ կապակցին: Իսկ առաւատուն ի գերեզմանաւն գնալն այն իսկ է, զի յորժամ յարեալ Քրիստոս ի մեռելոց առաւատուն, ըստ այնմ՝ Յարեան բազում մարմինք մնջեցելոցն (Մտթ. Իէ 52):

Վասն որոյ եւ մեզ պարտ է ամենայն միաշաբաթու առաւատու աւետիս տալ ինչիւ եւ Աւետարանաւ համարէն բնութեան մերոյ, եթէ՛ ի սոյն աւուր յառնելոց էք յայդմ հողոյ Յիսուսի Քրիստոսի Տերամբ մերով: Վասն զի սոյն ինքն այսու զինու հարեալ ջլահատ⁵⁴ եղեալ մեռեալ եւ աւերեալ է մահ: Իսկ երկշաբթի արարար Աստուած զհաստատութիւն մեծ արարչութիւն, եւ ծածկեաց իբրեւ վարագուրաւ զլուսեղէնն եւ զհրեղէնն, զի առ ստորեւ արարածովքս լիցի գիշեր բաժանեալ ի միմեանց, որ կոչի այժմ տիւ եւ գիշեր, զի անջրպետեաց ջուր ի մէջ երկնի եւ երկրի, եւ ախեաց զլոյսն ի վերուստ աւոյդն ընկալեալ զխաւար եղեւ գիշեր, որպէս ի ծագել լուսոյն պայծառանայ աւդ եւ կոչի տիւ: Եւ գործք աւուրս կոչի «հաստատութիւն», զոր եւ մարգարէն փառաբանէ ասելով. Արհմեալ եւ ի վերայ հաւատաւորեան երկնից (Դան. Գ 56): Եւ «հաստատութիւն» կոչի, զի ոչ ուրեք է հաստատեալ, այլ՝ միայն բանին Աստուծոյ, որպէս եւ ամենայն արարածք կան կառուցեալ ծով եւ ցամաք, լեռինք եւ բլուրք, տեսանելիք եւ աներեւոյթք կան կախեալ զոշնչէ հաստատութեան եւ անշարժ բանին Աստուծոյ, զոր եւ մարգարէն իբրեւ զխորան ասէ ձգեալ գերկինս (տե՛ս Ես. Խ 22): Եւ ձգումն երկնից զանաշխատ հրաման Արարչին յայտ առնէ, զի այս մեծամեծ սքանչելեաց աստի կոչեցաւ շաբաթ հանգիստ եւ ար երկրորդ:

Իսկ յաւուր երեքշաբթի առնէ Տէր այլ եւս սքանչելի արարչութիւն, զոր արէնսդիրն Իսրայէլի Մովսէս ընդ խորս անհասութեան Աստուծոյ անցանէ համառաւտ բանիւ ասելով. Խաւար

53 ձեռ. զընդիր

54 2Իք ՆԲՀ:

է ի վերայ անդնոց, եւ Հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ ջուրց (Մնդ. Ա 2): «Խաւար» զբազմութիւն ջրոց եւ խորութիւն ծովու ասէ, եւ ցնծալ, գրգալ Հոգւոյն ի վերայ ջուրց զարարչակից լինելն Հոգւոյ Հաւր եւ Որդւոյ ցուցանէ յարարածս: Եւ զոր հանդերձեալ էր առնել, յառաջագոյն առնէ յարարչութեան Տէր: Ասի բաժանիլ ջուրցն եւ երեւիլ ցամաք, լերինք եւ բլուրք եւ կղզիք, եւ բղխեալ աղբերաց յամենայն տեղիս, ի ծո[ր]ծորս երկրի եւ յառապարս դաշտաց եւ ի գլուխ լեռանց: Ընդարձակեաց զգետս ի ծագաց մինչեւ ի ծագս ընդ ոլորտս արարածոց գնան զաւրութեամբ անբաւ հրամանին Աստուծոյ, եւ ոչ դադարեն մինչեւ հասանեն ի սիրտս ծովու:

Արդ, բաժանել ջուրցն բազմութեան իմանամբ զթանձրութիւն կռապաշտութեան հեթանոսաց: Իսկ լերինս եւ կղզիս, որ ծածկեալ են ի ջուրցն բազմութենէ, իմանամբ զեկեղեցի Աստուծոյ՝ երեւեալ ի վեր ի զանխութեան բազմութենէ մեղաց, ի գալ ճշմարիտ Հոգւոյն Սրբոյ ի վերայ աւազանի ջուրցն մկրտութեան, յորում եղեւ հրաշափառապէս իմանալի հոգեւոր եւ նոր արարչութիւն: Եւ յարձակումն գետոց յարեւելից յարեւմուտս՝ ընթացք սուրբ առաքելոցն, որք իբրու յարեւելից գոլով զլուսաբեր շնորհս Հոգւոյն եւ զբան սուրբ Աւետարանին յոգիս մարդկան ցաւղեցին: Իսկ աղբերացն առատ եւ յստակ բղխումն, որք ի ծո[ր]ծորս եւ յառապարս երեւեցան՝ այս ճգնաւորք հոգէնկալք եւ վարդապետ եկեղեցւոյ, որ ի քաղաքս եւ յանապատս առատաբար բլղխեն յինքեանց եւ զեղուն ընդհանուր տիեզերս եւ յազգս զշնորհս Հոգւոյն Սրբոյ, յորմէ վերբլղխեալ այսար ի քաղաքի եւ յապառաժի ծառք եւ ծաղիկք իմանալի եւ գեղեցկահամբ⁵⁵ երեւեցան ընդ բացամերժումն եւ ընդ փարատեալ խաւարամած խորոցն: Նաեւ ընդ ծագել Հոգւոյն ի ջուրս մկրտութեա բուսան դարձեալ ծառք պտղալիցք եւ հովանաւորք՝ դասք քահանայից եւ կուսանաց սրբոց՝ տալով զնա եւ ազգի ազգի պտուղս շնորհաց ի սուրբ եւ յառաքելական եկեղեցիս Աստուծոյ շնորհաւք եւ զորմութեամբն Քրիստոսի Աստուծոյ, որում փա՛ռք:

Չորրորդ աւուրն ստեղծումն լուսաւորացն է, վասն զի յարարչութեան նախ լուսաւորեաց

Աստուած զերկնայինսն քան զերկրայինս: Իսկ յերկնի եւ յերկրի զարդարեաց Աստուած նախ զերկիրս քան զերկին, զի այսմ աւուր չորեքշաբաթոջ զլոյսն տարած եւ ցիր ժողովեալ հաւաքեաց յամանսն աւդեղէնս, եւ ուղղեաց ճանապարհս նոցա յարեւմուտս կոյս, եւ որպէս բանաւորք ի ձեռն սգայութեանց եւ անդամոց, այսպէս խառնին ընդ աւդս, եւ խառնեն ոչ լեզուաւ զգայեականաւ, այլ ժամաւք միանգամայն եւ մասամբք: Որպէս եւ գրեալ է. Երկինք պատմեմ զփառս Աստուծոյ (Սղմ. ԺԷ 2). զորպէս մարդ բանին Աստուծոյ ի մի նիւթոյ գոյացեալք եւ ոչ միապէս ամենեքեան ունին զլուսաւորութիւն մտաց եւ գործոց, նոյնպէս եւ նոքա ունին զմի պայծառութիւն եւ ոչ գնացս ուղիղս, եւ հաստատեցան կացին կարգք տունջեան եւ գիշերոյ: Զայս մեծամեծ սքանչելիս տեսեալ Մովսէսի առանց գործոց եւ աշխատութեանց, եւ զսա կոչեցաւ ար չորեքշաբաթ հանգիստ:

Իսկ հինգշաբթի աւուր գործք Արարչին լի են գիտութեամ եւ հոգեւոր իմաստութեամբ, զորս պատմէ մեծն ի մարգարէս ասելով. Հանցեմ ջուրք զեռունս կեանքանիս եւ թշուա թեւաւորս ըստ ազգի իւրեանց (Մնդ Ա 20): Արդ, իմանամբ «ծով» զաշխարհս եւ «գեռունս»՝ զծնունդս Ադամայ, իսկ ի նոցանէ թրուշունս թեւաւորս, որք ջրով եւ Հոգով մաքրեալ թեւաբուսակ⁵⁶ եղեալ յերկինս վերացան: Իսկ որք ոչ եղեն արժանի որդիս լինել ծննդեամբ ի ջրոյ եւի Հոգւոյ Հաւրն երկնաւորի, նոքա ոչ աւժան յաւծումն Հոգւոյն Սրբոյ, այլ ոչ գան զկնի խաւարի, եւ սիրեցին զնա առաւել քան զլոյս, որք եւ իշին, ի խաւար մեղաց խաւարեալք անգիտութեամբ եւ ի միմեանց սատակեալք, որպէս այնոքիկ, որք անդունդս ծովու սուզան:

Բաժանեաց Աստուած զկենդանիս որդեն ի ծովու, բաժանեցան նմանապէս եւ ազգ մարդկան ի պիտանիս եւ յանպիտանս, ի գեղեցիկս եւ ի գարշելիս զատ իմն եւ հեռագոյն բնակեցոյց ի մանտրուց եւ ի տկար կենդանեաց Աստուած զկետս մեծամեծս, որպէս զի մի՛ յափշտակեսցեն զփոքրս եւ զտկարս բազմամարմին եւ զաւրեղ

կենդանիքն⁵⁷: Եւ զոր արինակ մարմին յաղտաղտուկ եւ ի լոյծ բնութիւն ջուրց սնանի, զի նովաւ փառազարդեն թագաւորք երկրի, նոյնպէս եւ մեք յաղտեղի ցանկութիւն եւ ի հեղզ բնութենէս մերմէ զատեալ լինիմք պիտանի Աստուծոյ, որպէս եւ գրեալ է, ասէ. Ուրախ եղիցի Տէր յարաւաճս իւր (Սղմ.ՃԳ 31): Ծնան եւ անաւոր ջուրս ծովու զձկունս բազումս եւ ի գեջէն վայրտեղեաց բուսուցին որդունս ազգի ազգի: Յետ այսր ամի՞ (ամենայնի՞) ապա եւ զմեր բնութիւնս ծնանի ոչ ջրով միայն, այլ եւ՝ Հոգով: Եւ զատեալ վերանամք ոչ աւդս՞ միայն, այլ ի սուրբն եւ յազատն ի մեղաց ի մայրն մեր ի վերին Երուսաղէմ:

Զայս ամենայն ահաւոր եւ զարմանալի արարչութիւնս Արարչին տեսեալ մարգարէին, ասէ. Աւրինեցէք թոշունք երկնից զՏէր (Սղմ. ՃԽԸ 10): Եւ թոշունք ոչ են երկնայինք, որք յերկրէ ելանեն անդըր եւ ի սմին մնան, այլ այն իսկ է, զոր Պաւղոս ասէ վասն արդարոցն, թէ թռչին ամպաւք ընդառաջ Տեառն յաւդս (տե՛ս Ա Թեսաղ. Դ 16) եւ յանապազ միացեալ ի լոյս անճառելի փառացն Քրիստոսի մնամք փառաւք ի փառս շնորհաւք Սրբոյ Երրորդութեան, որ է արհնեալ միշտ եւ փառաւորեալ յաւիտեանս:

Իսկ արն վեցերորդ եւ գործք նորա զարմանալիք եւ աստուածային խորհրդով լցեալ, որ եւ ոչ ըստ այլ աւուրցն դասի անուամբ, այլ որպէս գործք նորա վերագոյն է: Եւ անուն նորա կոչի վերայգոյն յայնմ աւուր փոփոխումն առնուաւրս ոչ միայն գործովք, այլ եւ անուամբ: Գործովք որոշեաց զսա, վասն զի զայլ աւուրցն յոչնչէ առնէ, իսկ զլուսաւոր այս գործ ոչ յաննիւթից, այլ յարարածոց առնէ զմարդն: Եւ յարարածոց առնելով արարչութիւն սքանչելի զմարդն ոչ բանիւ միայն որպէս զայլ արարածս, այլ պատուէ առաւել զնա ձեռամբ Աստուծոյ՝ եւ ըստ պատկերի եւ ըստ մմանութեան մերում (Ծնդ. Ա 27) ասելով: Արդ, նմանել Աստուծոյ եւ պատկեր նմա լինել մարդկան զարհուրելի է: Եւ դարձեալ ձեռս եւ ոտս ասել Աստուծոյ աննման իմն եւ բազմաց

տարակուսելի է, վասն զի արարածոցս նման զարարիչ Աստուած ոչ մարթի ասել, եւ հողոյն պատկեր լինել եւ յաւդուածով ձեռս ունել:

Արդ, ուսուցանէ մեզ Հոգին իմաստութեան եւ գիտութեան (տե՛ս Ես. ԺԱ 2), եւ ասէ զմարդն պատկեր Աստուծոյ, բայց ոչ զձեւ կերպարանացս ասէ, կամ զգիր ոսկերացն, եւ զշարս ջլացն, եւ զառուս երակացն: Այլ «կերպարան» այն է իմանալ զսրբութիւն հոգւոյ եւ «պատկեր» զանախտութիւն մտացն եւ «նմանութիւն»՝ զանազան առաքինութիւնսն, որպէս այն, զի զողորմածն նման Աստուծոյ կոչեն Գիրք, նոյնպէս զհեզս եւ զխոնարհս (հմմտ. Ես. ԿԶ.2), զմարդասէրս եւ զպարկեշտս, որ եւ սակաւ առաքինութեամբն եւ սուղ ժամանակաւ նմանին մարդիկ Աստուծոյ, ըստ այնմ, որ ասէ. «ըստ նմանութեան մերում եւ պատկերի»: Իսկ որ ասէ. Առեալ հող ի ձեռս իւր (տե՛ս Ծնդ. Բ 7). այս զգութն արարչական եւ սէրն ցուցանէր: Իսկ որ ոչն դասեցաւ անուն աւուրս այսորիկ ի թիւ դասու այլ աւուրցն արարչութեան, այլ ասի ուրբաթ: Իսկ «ուրբաթ»ն եբրայեցոց բարբառովն ասի «կազմութիւն»: Եւ կազմութիւն այն ասի, եթէ՝ Փշտաց յերեսս Աորա շունչ կենդանի (Ծնդ.Բ 7): «Կենդանի» ասէ մարդն, վասն զի յետ աստեացս վճարելոյն յառնէ եւ մնա կենդանի, եւ այլ ոչ եւս մեռանի: Այլ ձեռս եւ ոտս ասի անեղ եւ անյաւղ բնութեան Աստուածութեան խորհուրդ Աստուծոյ մարդանալոյն եւ ճշմարիտ մարմնանալոյն Քրիստոսի ակնարկելով, որպէս ասէ մարգարէն. Ծաւեցիմ զձեռս իմ եւ զոտս (Սղմ. ԻԱ 18): Արդ, այսպէս ձեռս եւ ոտս ճշմարտապէս ասեն, զի այն ձեռք, որ յաւուր վեցերորդ ստեղծանէր զմարդն, աստ ի վեցհազարեան դարուն ի վեցերորդ աւուր ի խաչ ելանէ կամաւոր յաւժարութեամբ՝ կամաւորութեամբ Հաւր եւ Հոգւոյն Սրբոյ, որում փա՛ռք յաւիտեանս:

Յաւուրն եաւթներորդի ոչ գործին ի նմայ գործք, այլ կատարումն է գործոցն Աստուծոյ, ըստ այնմ, որ ասէ, եթէ՝ Կատարեցան յերկինք եւ երկիր, եւ աւրինեաց Աստուած զաւրն Է (7) երորդ, զի մմա յանգեաւ յամեմայն գործոյն (Ծնդ.Բ 2): Ո՛ր սքանչելի. մարգարէն, որ զանհասանելոյն Աստուծոյ իբրեւ զի մարդոյ պատմէ ասելով, եթէ՝ Հանգեաւ Աստուած. եւ հանգիստ եւ աշխատութիւն մարմնոյ ասի, զի քաղց[ն]ուլ

57 «Հեռագոյնս քնակեցոյց Աստուած ի մանունց եւ ի տկար կենդանեացն զկէտս մեծամեծս, զի մի՛ յափշտակեցեմ զտկարսն բազմամարմին կենդանիքն». Տօնական. տե՛ս ՆԲՀ, Ա, էջ 411 («բազմամարմին»)

եւ ծարաւիլ եւ աշխատիլ հեռի է ի բնութենէն Աստուծոյ, որպէս ասէ մարգարէն. Աստուածն յաիտեմական ոչ քաղցեացէ, եւ ոչ ծարաւեացի, եւ ոչ վատապէս (եւ. Խ 28): Բայց հանգիստ Աստուածութեան ասի կամացն լրումն, զոր առնէր վասն առնելոյ զարարածս իւր:

Վկայէ Պաւլոս՝ ասելով. Յառաջ քան զլիւնելն աշխարհի լեալ էաք մեք առ Աստուծոյ (Եփես. Ա 4), եւ զայն զկանուխ գիտութեան է Աստուծոյ. ասէ, որ ոչ կա մնա եղելոց իրաց եւ ապա իմանայ: Արդ, զար է (7) երորդ դարձումն հրամայեաց Աստուած, զի հնարի առ ի դադարիլ մարմնոց նոցա առ ի գործոյ եւ ի բանից, զի եւ այնու լոնցեն միտք նոցա եւ գործք առ ի շարութեան անտի որպէս եւ լոնց եւ լեզուք անիրաւաց եւ անխրատից մարդկան: Եւ ի վերջին աւուրն, եւ ի յետին շաբաթին, յորժամ շաբաթանան արարածոց շրջագայութիւնք, որ ի ծովու են եւ ի ցամաքի, յիրաքանչիւր զուր եւ ընդ վայր աշխատութեանց, վասն զի շաբաթն այն կոչի ստուգ շաբաթ եւ ճշմարիտ հանգիստ աշխատելոց սրբոց: Եւ ի դադարել գործոց պղծոց, ուր խառնին եւ միանան արդարք ընդ հրեշտակս ի մի արհնութիւն եւ փառաբանութիւն ամենասուրբ Երրորդութեան յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

ԵՐԶԱՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՎԱՆԱԿԱՆԻ Ի ՃԳ. ՍԱՆՄՈՒՆ. „ԱՅՍ ԾՈՎ ՄԵԾ,,⁵⁸

Արուեստ է⁵⁹ ամենայն, որ բաժանի յարարչական եւ յարարածականն. արարածականն բարժանի⁶⁰ իմանալի եւ ի⁶¹ զգալի. զգալին ի բանականն եւ յանբանն⁶² բաժանի եւ իմանալին՝ ի զգայականն եւ ի բանականն: Զգայականն բաժանի ի տեսականն եւ յիմացականն եւ ի գործնականն: Տեսականն, որ ականք է, իսկ իմացականն,

որ ունկամբ⁶³ եւ ունգամբ, իսկ գործնականն⁶⁴ բերանով եւ ձեռից⁶⁵ եւ ոտից: Ի սոսա է եւ բժշկականն, այսոքիկ ի զգալիս⁶⁶: Իսկ իմանալի բանական տեսանէ միտք, որպէս հրեշտակք⁶⁷ եւ զգա⁶⁸ հոգի մարմնով: Այս տեսութիւն եւ իմաստք⁶⁹ կատարեալ սրբոցն է հաս, որք գիտացին, զոր ոչ է պարտ մարդոյ խաւսել, իսկ մերս՝ իմացապէս՝ ի լրոյ եւ ի հոսոյ: Եւ այս եթէ թեթեւանայցէ ոք⁷⁰ եւ ի բաց կայցէ ի սնոտեացս⁷¹ հաստատուն մտաւք եւ ոչ զաղփաղփուն⁷², որպէս Գաղատացւոցն, զի գրէ⁷³, թէ՝ առաջի աչաց Քրիստոս Յիսուս գրեցաւ ի խաչ ելանել (Գաղատ. Գ 1): Եւ որպէս ոմանց հոտ մահուան է ի մահ, այլ տրամակայի⁷⁴ հաւատարիմ ի⁷⁵ լուրն երանի⁷⁶, որպէս Թումասն ի տեսանելն (տե՛ս Յովհ. Ի 27-28): Եւ եթէ ասիցէ ոք՝ զինչ են⁷⁷ այդոքիկ մեզ քննել, ասացից զպատճառն. զի ոչ է բժշկին ընդ ախտացելումն⁷⁸ ախտանալն, այլ զցաւն ճանաչել եւ աւգնել արուեստին, զի թէ նաւուղեղն⁷⁹ ընկղմեալ⁸⁰ մխրճիցի⁸¹ ջուրն, որպէ՛ս հաւատալի է⁸² զնաւն ողջապէս հասուցանել ի հանգիստն: Այսպէս, որ ձեռնարկէ իմաստասիրել վասն աշխարհի, որ է երկինք եւ երկիր եւ որ ի սոսա⁸³ արարածք, ըստ Պղատոնի արտաքոյ սորին պարտ է⁸⁴ գոլ, զի մարթասցի⁸⁵ հոգեպէս

63 Ա ունգամբ

64 Ա գործականն

65 Ա ձեռաց Բ ձեռից

66 Բ զգալի

67 Գ հրեշտակ

68 ԱԳ սգա

69 Ա իմացք

70 Ա եւ ոք թեթեւանայցէ] եթէ...ոք

71 Ա ի բացեալ կացեալ] ի ...սնոտեացս

72 ԱԳ զաղփաղփու

73 Բ գրեա

74 Գ տրամակաի

75 ԲԳ > ի

76 Ա> երանի

77 Ա է

78 Ա վշտացելումն] ախտացելումն

79 ԲԳ նաւոսք] նաւուղել

80 Բ ընկղմեալ

81 ԲԳ մխրճի

82 ԲԳ > է

83 Գ նոսա

84 ԲԳ պարտին] պարտ է

58 Աղբիւրներ. Ա=ՄՄ, ձեռ. 2273, թ. 54ա-57ա: Բ=ՄՄ, ձեռ. 1398, թ. 335ա-340բ: Գ=ՄՄ, ձեռ. 2195, թ. 316բ-321բ: Դ=ՄՄ, ձեռ. 1267, թ. 324բ-327բ: Խորագիր՝ ԱԳ Վանական վարդապետի ասացեալ (Գ> ասացեալ) ի ՇԳ սաղմոսն, որ ասէ. «Այս ծով մեծ եւ անդոյր...»

59 ԲԳ > է

60 Բ > բարժանի

61 Բ > ի

62 Բ յանբան

քննել⁸⁶: եւ արդ, եթէ ձգեսցի առ մեզ ձեռն բանին եւ զընկղմելութիւն⁸⁷ մտացս աւժանդակիցէ, ըստ արինակին Պետրոսի (տե՛ս Մտթ. ԺԴ. 30-31), եւ ինքն Յիսուս Միածին Բանն, Որդին Մարիամու կուսի Աստուածածնին, որպէս ասէ Ղուկաս ի պրակս Առաքելոցն Հոգւով իւրով համարձակիցէ մեզ ոչ ի Պամփոս (տե՛ս և հմտ Քործք ԺԳ 13, ԺԴ 24), այլ ի բանս Սաղմոսիս, զիշնորհաւք անթաց ոտիւք, անքայլ գնացիւք հասցուք ի նաւահանգիստ ճառիս:

Արդ, տեսցուք զվերագիրս⁸⁸ սորա, որպէս սերմն եւ արմատ եւ տիպ եւ երես կենդանւոյ, զյաղագս արարչութեան է, եւ է սա առաջին ամենայն սաղմոսացն Դաւթի, որպէս բարձր առնեմն զքեզ Աստուած վերջին է: եւ թէ զի՛նչ ասի սաղմոսն. յոչէից սաղմնառութիւն կամ յանգոյից գոյաւորութիւն⁸⁹: եւ է⁹⁰ սա ի Հոգւոյն Աստուծոյ գոյաբար բխեալ ի սիրտս սուրբ մարգարէին, ըստ որում ասէ Բիսեւցէ⁹¹ սիրտ իմ զբան բարի (Սղմ ԽԴ 2): եւ դարձեալ հոգեւոր երգ եւ սուրբ արհնութիւն Աստուծոյ, որպէս ասէ. Պատարագ արհնութեան փառաւոր արասցէ զիս (Սղմ. ԽԹ 23), վասն որոյ յարհնութեան⁹² եղն⁹³ զսկիզբն բանին, եւ ասէ⁹⁴. Արհնեա առնմ իմ զՏէր, Տէր Աստուած իմ, մեծ եղեր⁹⁵ յոյժ (Սղմ ԺԳ 1): եղելութիւն մեծ արարածոցս առնելն ասէ, որով⁹⁶ իմանի եւ ի⁹⁷ Քրիստոս նոր արարածս եւ զլոյս փառաց զգենուլ ասէ, եւ ձգել զերկինս որպէս խորան (հմտ. Սղմ. ԺԳ 2), եւ ըստ կարգի բերէ զարարչութիւն ի լինելութիւն եւ ի ներգործութիւն մարդոյն: եւ զամենայն յիշելով զսա որպէս շաղկապ եւ միջնորդ եւ զլուս եւ որպէս Թագաւոր ի վերայ դնէ, թէ՛ Զամենայն ինչ իմաստու-

թեամբ արարեր (Սղմ. ԺԳ 24), եւ ասէ, թէ՛ Լցաւ արարչութիւն ստեղծմամբ մարդոյն (Սղմ. ԺԳ 24): Զոր այլուր հիացմամբ խոստովանի. Սքանչելի եղել⁹⁸ գիտութիւն քո յինչն (Սղմ. ԺԼԸ 6): եւ ապա ի վերայ հայեցեալ ի բարի խոր իմն անդնդոց անանցանելի ծովու նմանեցուցանէ զարարչական զարուսթիւն եւ տնաւորինական սէրն, զի յորդեաց ուխն եւ ելից զմիտս մարգարէին, որպէս ջուր, որ ծածկէ զծովս, զոր ուսանիմք եւ⁹⁹ յառաքելոյն Պաւլոսէ ասացեալ¹⁰⁰. Ո՛վ խորք մեծութեան եւ իմաստութեան եւ գիտութեան Աստուծոյ (Հռոմ. ԺԱ 33): Իսկ եթէ փոյթ իցէ ումէք¹⁰¹ առանձինն քննել եւ զայլ տարերս ընդ նմա¹⁰² համեմատել, գտանէ զստուգութիւն իրիս.

Այս ծով մեծ է (Սղմ. ԺԳ 25).

Յորժամ ծնաւ յորովայնէ մաւր, եղաւ նմա¹⁰³ սահմանս եւ փականս եւ դրունս ցայն վայր գալ եւ ոչ անցանել: Զի՛արդ եզակի ծով ասի. զի բազումք են¹⁰⁴. զհետ երթայ մարգարէին Մովսէսի¹⁰⁵, որ թէպէտ եւ գրեալ է յարինակս ուրէք, թէ՛ Ժողովեացին ջուրք ի ժողովս իւրեանց (Մնդ. Ա 9), որպէս սուրբն Բարսեղ ստուգէ զբանս Մովսէսի, թէ՛ ի ժողով մի ոչ միայն, զի մի է բնութիւն ջրոյ ի ներքոյ հաստատութեան եւ ի վերոյ, եւ զի մի Արարչի արարած է եւ ի միմեանս երակք են ընդ բուն ծովուն ի միասին¹⁰⁶, իսկ զչափն նսայի ասէ ափով Աստուծոյ գոլ, որպէս երկին թզաւ եւ երկիր՝ քլաւ (ես. Խ 12): Արդ, ոչ եթէ մարգարէս զբնութիւն արարածոցս քննէ, այլ զխնամոցն Աստուծոյ¹⁰⁷ գոհանայ եւ փառս տայ, զի ոչ ոք մարդ եղ ի մտի երթալ յակն ծովու եւ ընդ հետս¹⁰⁸ անդնդոց շրջել¹⁰⁹ եւ զի այս ինքեան Տէրն վկայի. «Որոյ շա-

85 ԲԳ մարթասցին

86 Գ քննեալ

87 ԲԳ ընկղմութիւն

88 ԲԳ վերնագիր

89 ԲԳ գոյացութիւն

90 Գ ե

91 ԱԲ քիսեաց

92 Բ արհնութեան Գ արհնութեանէն

93 ԲԳ դնէ

94 ԲԳ > եւ ասէ

95 Գ եղել

96 Գ որով եւ

97 ԲԳ > ի

98 Ա սքանչացաւ] սքանչելի եղել

99 Ա > եւ

100 Ա արարեալ Գ բարբառեալ] ասացեալ

101 Գ > ումէք

102 Ա միմն

103 ԲԳ > մմա

104 Ա > Զիարդ...են

105 Գ Մուսիսի

106 Տե՛ս Բարսեղ Կեսարացի, Թաղագս Վեցարեայ արարչութեան, էջ 106-111:

107 ԲԳ > Աստուծոյ

108 Ա զհետս] ընդ հետս

109 Գ շրջեալ

ւեղք իւր ի ջուրս բազումս եւ հետք իւր¹¹⁰ ոչեւս երեւի» (Սղմ. ՀՁ 20): Եւ շնորհեցաւ¹¹¹ եւ ի¹¹² մասնաւոր ինչ Յունանու յաւրինակ Տեառն Աստուծոյ¹¹³, զի մի զրկիցին ազգ¹¹⁴ մարդկան յայսմ գիտութենէ: Եւ թէ մի տարրս¹¹⁵ այսքան անհասանելի է ըստ չափոյ եւ դրի¹¹⁶ ո՛չ այնքան յանդուգն իցէ մինչ մատակարարութիւն¹¹⁷ Աստուծոյ քննել ձեռնարկէ թող թէ զբնութիւն:

Եւ անդոյրր. «Յորժամ ելանէ լեռնանա եւ իջանէ դաշտանա» (Սղմ. ՃԳ 8). դառնա մրրիկն յաւդս եւ ընդ դրացոյն իւրում¹¹⁸ հաշտի եւ ընդ եզերսն դաշնաւորի անաւսրս քող¹¹⁹ յերեսացն վետս վետս սղոխաբար¹²⁰ ծածանի¹²¹, յայնժամ բարի եւ գեղեցիկ է¹²² ծովն ոչ միայն, զի շահեկան է աշաց ի վերայ հայել, որպէս ասէ. Աչք քո աղաւնիք¹²³ ի վերայ լիութեան ջուրցն (Երգ Ե 12), այլ ի յուսմ¹²⁴ կանանց իւրոց զնան ակաղ-ձունսն ուղերձել¹²⁵ սաղախեալս¹²⁶ յուղարկէ երկուորեակ բարով լնուլ զպէտս մարդկան:

Ի սմա սողունք անթիւք, գազանք մեծամեծք եւ մանուկք (Սղմ. ՃԳ 25).

Անթիւք ոչ եթէ զանհասիցն¹²⁷ անձանց¹²⁸ ասէ, այլ զազգս¹²⁹ սեռիցն տարբերէ¹³⁰, զոր ոմանք շորս հարիւր եւ այլք հազար¹³¹ եւ այլք

վեց հազար ասեն¹³² թող զայն, որոց գոյութիւն զգայութիւն ոչ անկանի, թողից զայն, որոց գոյութիւն¹³³ մակամտածութիւն մեր է, եւ չեն ենթակայացեալ, զի անեղանելիքն անանուանելիք¹³⁴ են: Սոքա թռչին եւ լուղան¹³⁵ աւրինակ իմն ի ջուրս որպէս թռչունք՝ յաւդս, եւ ձգեն յինքեանս զխոնաւ աւդն եւ ի մերումս¹³⁶ վտանգին, որպէս մեք՝ ի նոցայն: Ո՛ր արձանագիր սահմանական¹³⁷ նոցա¹³⁸ ի լոյծ եւ յանկայուն¹³⁹ բնութեան, զի ոմանք ետեղականք են, որպէս վիճակաւորք լեւրամբք¹⁴⁰ եւ ձորաւք բաժանեալ եւ ոմանք ընդդէմ նոցին¹⁴¹ է տեղափոխք գարնանի եւ աշնանի ո՛չ բաւական է ասել զզանազանութիւն նոցա թէ եւ զգիրսն¹⁴² Արիստոտելի ի ձեռն առեալ ընթերցի եւ զայլ բնակարան արանցն. ոմանք կերպափոխ լինին եւ այլք գիրկ արկեալք արանցն նմանեալք խարդախելով որսան զայլս¹⁴³: Էքենէս ձկնիկ փոքրիկ նաւակալ¹⁴⁴ եւ դլփին՝ մարդասէր, հազագասփիւռ¹⁴⁵. թէ զիա՛րդ սակրոս ձուկն որոճող, եւ դակոս՝ խայթոցաւոր, զիա՛րդ ոստրէոս մարգարտածին եւ կարկինոսն զնա որսա¹⁴⁶, թէ որպէս պիննայն¹⁴⁷ զպիննա սպասեակ հաւասարէ ի կերակուր, եւ տրիքոլոս՝ զամենայն կենդանի, որ պատահի¹⁴⁸ նմանապէս, որպէ՛ս ակլիմոն¹⁴⁹ հաւն հաւաստիոնն¹⁵⁰ ի¹⁵¹ հայելով

110 ԲԳ > իւր

111 Գ շնորհեցաւ

112 ԲԳ > ի

113 ԱԲ > Աստուծոյ

114 Բ > ազգ

115 ԲԳ տարր

116 ԲԳ գրի] դրի

117 Ա զի մատակարարութիւն] զմատակարարութիւն

118 ԲԳ իւրոյ

119 Բ քով

120 Ա սղոխաբար վետս վետս

121 ԱԲԳ ծածանի (ուղղում եմ ըստ իմաստի)

122 Գ բարի է ծովն

123 ԲԳ աղաւնի

124 Ա նուսմ . 2իք ՆԲՀ

125 ԲԳ ուղերձեալ

126 2իք ՆԲՀ

127 ԱԳ զանհասիցն] զանհասիցն

128 Բ անձինս

129 Ա զազգ

130 ԲԳ արտաբերէ

131 Ա > հազար

132 Ա > ասեն

133 ԲԳ > զգայութիւն...գոյութիւն

134 Գ անանուանիք

135 Ա լուղին

136 Ա մերում

137 Գ սահմանականի

138 Գ > նոցա

139 ԱԳ յանկայուն

140 Ա լեւրամբ

141 Գ նոցա

142 ԲԳ զգիրս

143 ԲԳ ի ձեռն առեալ խարդախելով որսան զայլս] ի ձեռն առեալ ընթերցի ... որսան զայլս

144 Տե՛ս Բարսեղ Կեսարացի, Յաղագս Վեցօրեայ, էջ 245 [3-4]:

145 Ա հազագասփիո

146 Տե՛ս Բարսեղ Կեսարացի Յաղագս Վեցօրեայ, էջ 228 [8-9]:

147 ԲԳ պիննա

148 Ա պատահէ

149 ԲԳ ակլիմ

150 Բ հաւաստուն:

թխեալ հանէ զձագ ի ձուոյ աւուրս եւթ եւ ի¹⁵² նոյնքան սնուցանէ խաղաղութեամբ¹⁵³ արինակ առաջնորդաց եւ պատարագող քահանայից: Ոմանք ծծդասերք որպէս փոկքն¹⁵⁴, որ¹⁵⁵ զմիանգամ ծնեալսն առնու յորովայն եւ պահէ ի ժամ երկիրդի¹⁵⁶, ոմանք դաժանահոտք եւ մահաբեր, որպէս նապաստակքն¹⁵⁷ ծովային, եւ ոմանք անուշահոտ եւ հոտոտողք որպէս թոնձք¹⁵⁸ ջրակեացք: Եւ զիս¹⁵⁹ կրակակեր եւ¹⁵⁹ անկիզանող է պենեսն ասրաբեր եւ ծիրաներանգ¹⁶⁰, խըխնջիւն, որ է կոնքիւն¹⁶¹, ոմանք խեցեմորթք, որպէս կր[ե]այք եւ ոմանք ասրատունկք¹⁶² որպէս ձկունք եւ նապաստակք, ոմանք ողջախոհք եւ ոմանք վաւաշք, որպէս զմոնեսն¹⁶³, թէ որպէս սալամինդրն հրասուն կայծանայ եւ բորբոքի եւ ոչ ծախի: Ո՛վ սքանչելեացս. լեւիաթան միեղէն եւ մի է սկիզբն¹⁶⁴ ջրայնոց. ոչ ծնաւ¹⁶⁵ եւ ոչ ծնանի, կա եւ տեւէ մինչեւ ի վախճան¹⁶⁶, եւ ի ցամաքել¹⁶⁷ ծովուն հիացուցանէ զտեսողսն, թէպէտ եւ¹⁶⁸ յանձնապաստան բազմեալ է յակն ծովուն¹⁶⁹ եւ գնդակաւքն¹⁷⁰ ընդդէմ կա կոհակաց ովկիանոսի¹⁷¹ շրուշակաւք¹⁷² քարշի ռընգանց: Եւ խաղան նովաւ հրեշտակք¹⁷³ որպէս ձագու ոմանք մեծա-

մեծք, որպէս կէտք եւ կտէնք¹⁷⁴ եւ այլք մանունք, որպէս իպէք¹⁷⁵ եւ տելթիպէքն¹⁷⁶ եւ այլք ծառաձեւք, որպէս կառաբոյսք: Ո՛վ ո՛վ, զի սքանչելի եղեն զբաւսանք ծովու,¹⁷⁷ զի եւ¹⁷⁸ եւ նմանեցից այնոցիկ, որ ի լեզուսն պանծացեալ¹⁷⁹ են փախեայց ի,¹⁸⁰ սքանչելեացս ծովու, որպէս ձկունք վերաբերին կլանել զկաթիլս¹⁸¹ անձրեւաց, զի մի՛ ընկղմիցիմք ի խորս անդնդոց, որ ոչ գոյ մեզ հանգիստ¹⁸² ծանր է տկար բանիս մերոյ լաւղել¹⁸³ յերեսս ջուրց:

Նաւք գնաց (Սղմ. ՃԳ 26).

Զասէ «նաւ» եզակի, այլ՝ յոգնակի,¹⁸⁴ զի բազմատեսակ է նաւ. պատերազմի եւ վաճառու, ձիաձեւ եւ աւձաձեւ, այծեմնաձեւ, ճարագաձեւ, թողից ասել զարջառուց եւ զկովուց զանազան՝ ռազաստով եւ խարսխով. ոմն երթաւ եւ ոմն գա, եւ այլ ոմն շրջանակի շրջի յոր կոյս եւ միտք ուղղչին¹⁸⁵ կամիցին: Զայս ամենայն բաժանէ միեւնոյն հողմն ծովուն, որ թէպէտ ցանկութիւն շահիցն հնարեցաւ եւ ճարտարապետն իմաստութեամբ կազմեաց, սակայն հաւրն վարէ¹⁸⁶ տեսչութիւն:

Եւ վիշապն, զոր ստեղծեալ խաղալ նովաւ. Որպէս վերագոյնն ասացաւ վասն լեւիաթանայ, եւ թէ այլք են ի ծովու երկակենցաղք, ընդ որս դիւաց խառնակիլ ասէ Կիպրիանոսի¹⁸⁷ խոստովանութեան իւրում, ուստի եւ յաւդտ ժանդական¹⁸⁸ ախտի շարժմունք են: Իսկ հրեշտակք վերակացու ծովու եւ ցամաք խնամ տարեալ¹⁸⁹ խաղ առնեն սատանա դիւաւքն իւրովք:

151 Ա> հաւաստիոնն ի

152 ԲԳ > եւ ի

153 Տե՛ս Բարսեղ Կեսարացի, Յաղագս Վեցօրեայ, էջ 270-271 [15-9]:

154 Գ փոկն

155 Ա > որ

156 Տե՛ս Բարսեղ Կեսարացի, Յաղագս Վեցօրեայ, էջ 224 [7-11]:

157 Գ նապաստակն

158 Ա թոնցն

159 Բ > եւ

160 Գ ծիրաներանկ

161 Զիք ՆԲՀ

162 Բ աստրատուք . Զիք ՆԲՀ

163 Զիք ՆԲՀ

164 Գ սկիսքն

165 Ա ծնեալ

166 Ա վաղճան

167 Ա ցամաքեալ

168 Ա > եւ

169 Ա ծովու

170 Ա > գնդակաւքն Գ գնտակաւքն

171 Ա ովկիանոս

172 Գ շրուշակաւք. Զիք ՆԲՀ

173 ԲԳ հրեշտակաւք

174 Զիք ՆԲՀ

175 ԲԳ սիպէք

176 ԲԳ տիւթիք. Զիք ՆԲՀ

177 ԲԳ > զի սքանչելի...ծովու

178 Բ > եւ

179 Բ պանծացեալ

180 Ա փախիցուք (> ի)

181 Ա կաթինս

182 Ա > շար.

183 Բ լուղել

184 ԲԳ յոգնակի

185 Գ ուղչին

186 Գ հաւր վարի

187 Գ > ի

188 Բ յաւդաժանդական

189 Բ խնամատարեալ

Դարձեալ ծով առակի երկիր, ըստ Դանիէլի մարգարէի, եւ ըստ Յոբայ¹⁹⁰։ Ոչ, ասէ, յէ՞ր վերայ հաստատեցան ախք դորա, ո՞ր արկ զվէմն անկեան ի դմա, կամ ո՞վ եղ զչափ դորա, կամ արկեալ ի վերայ դորա լար (հմմտ. Յովբ ԼԳ 5-6), այլ թէ՛ չորք հողմք բախեցին զծովն մեծ եւ չորք գազանք մեծամեծք ելանէին՝ (Դան. է 2) թագաւորք Ասորւոց եւ Քաղդէացւոց եւ Պարսից եւ արեւմտից եւ իշխանք նման ծովու կենդանեաց (տե՛ս Դան. է 3)։

Եւ անդոյրր. Անդոյրր է եւ հեշտ, զի մայր է եւ դայեակ է աննայն կենդանեաց, տեղի ծննդեան եւ սննդեան եւ գերեզման հանգստեան, ոմանք գիր եւ հեշտ ի վերայ առաքինութեան, որպէս Պաւլոս Կալ, մնալ ի մարմնի կարեւոր համարիմ, զի այս ինձ պտուղ գործոյ է, զի հաճեալ եմ ընդ վիշտս եւ ընդ անդոյրիս (Փիլիպ. Ա 22)։ Եւ այլք որպէս վրիպեցան ի հաւատս, եւասեն. Կերիցուք, արքցուք, քանզի վաղիւ մեռանիմք¹⁹¹ (Ա Կորնթ. Ժե 32)։

Եւ նաք գնան. Տապանն Նոյի, խորանն Աբրահամու, վրայնն Մովսիսի, տաճարն Սողոմոնի¹⁹², եկեղեցի, որ ի Փրկչէն շինեցաւ, իսկ «Վիշապն»՝ փարաւոն, ըստ այնմ, թէ՛ Վիշապն, որ նաւի ի մէջ գետոց (եզեկ. ԻԹ 3), եւ Սենեքերիմ, որպէս ասէ Նաայի. Անցուցից շրուշակ ընդ քիթս նորա, եւ դարձուցից յերկիր իւր, եւ անդ մեռցի (հմմտ. Նա. Լէ 37-38)։ Եւ դարձեալ ինքն՝ բանսարկու, ասէ Նոյն Նաայի. «Ածից զսուր ի վերայ աւձին փախուցելոյ եւ ի վերայ վիշապ աւձին կամակորի» (Նա. Իէ 1)։ «Սուր», որ է Բանն Աստուծոյ, որ է ինքն՝ Տէրն, արար զնա կոխան գարշապարաց իւրոց ի ջուրն Յորդանանու եւ վայր ընկեց¹⁹³ յանապատին ասելով. Երթ յետս իմ, սատանա, (Մտթ. Դ 10, ԺԶ 23, Մրկ. Ը 33)։ Եւ հրաման ետ աշակերտացն կոխել զաւձս եւ զկարիճս (տե՛ս Դուկ. Ժ 19), ընդ նմին՝ զառիւծն եւ զվիշապն։

«Դարձեալ այս ծով, ասէ, զաւր» լայն եւ մեծ, ընդարձակ, զմիջոցս երկնի եւ երկրի լցեալ հասարակաց փարթամութիւն, անհատ կերակուր՝ ոչ տեղով փակեալ եւ ոչ ըստ բախտի բաժանեալ,

այլ ըստ կարի բնութեան եւ ոչ չափով, որպէս մանանայն։

«Ի սմա է սողունք մեծամեծք եւ մանունք»։ «Մեծամեծք» որպէս առիւծ եւ արջ եւ շուն, եւ «մանունք» որպէս խեցգետի եւ ձուկն, զոր ոմանք կենդանակերպք կոչեն եւ ոմանք՝ բիրք¹⁹⁴։ Այս դարաստան եւ ի սմա աստեղք, որպէս ծաղիկ դաշտի եւ բուրաստան եւ հոտ անոյշ ի սմա, որպէս հոտ անոյշ լիոյ, զոր արհմեաց Տէր (Մնդ. Իէ 27) միշտ շարժի եւ շրջի հանդերձ աստեղաւք շարունակ քանակ գոլով, որպէս փրփուր ի վերայ ջրոյ եւ տերեւ եւ ծաղիկ յոստս ծառոց, եղեն գունք իմաստունս մարդոյ, այլ ոչ յայտոսիկ այլայլի, որպէս երկին երկիր շարժուն գոլով անյեղ կա, զի որ ոչն են, յեղեսցին, զի արուեստ Արարչին ցուցցի եւ կարծիս Աստուածութեան մի՛ տացի։

«Ի սմա եւ նաք գնան»։ Արեգակ եւ լուսին՝ ի ամենայն բարութեամբ, շահաբեր, արգասաւոր, բազմաբեղուն, յոգնաւորինակ¹⁹⁵ յաջ եւ յահեակ մանելով եւ ի թ-ռիչս աւղ առեալս ձգելովթեւաքանդակ¹⁹⁶ կկել կկոցաւ ամենահնար արուեստ վերարկու հասարակաց։

«Եւ վիշապն, զոր ստեղծ խաղալ նովաւ»։ Որ է ինքն՝ բանսարկուն անմարմին եւ անարի, ընդ որում պատերազմի եկեղեցի թագաւորելով Տէրն մերոյ, զաւրավարք հրեշտակապետք ընդդէմ աշխարհակալին խաւարի այսորիկ իշխանին, ըստ իշխանութեան աւղոյս այսու, որպէս ծաղր առնէր սուրբն Անտոն վասն տկարութեան նոցա, զի քսան հազարաւ ոչ կարէ յաղթել տասն հազարաւ պատերազմողն¹⁹⁷։ Եւ զի՞նչ է զայս ասել, զի Մակար եւս ծիծաղէր, զի երեք հարիւրն ի նոցանէ ոչ կարէին հանել զմրջին մի ի ճանապարհէ իւրմէ։

«Այս ծով մեծ եւ անդոյրր»։

Ջջուրն, որ ի վերայ երկնից ասէ, թէ՛ որքան մեծ, զի վերին եւ ներքին ջուրքն ափովն Աստուծոյ չափեալ է։ Եւ յայտ է, զի կէս ափովն Աստուծոյ է։ Եւ դու մի՛ զարմանար, զի ոչ միայն ջուրք, այլեւ ամենայն արարածք ի ձեռին նորա են։ Իսկ

190 Գ > եւ ըստ Յոբայ

191 Գ մեռանիմք

192 Բ Սաղոմոնի

193 Բ ընգեց

194 Բ բուրք

195 Գ յոքնաւորինակ

196 Զիք ՆԲՀ

197 Հմմտ. Վարք սրբոց հարանց եւ քաղաքավարութիւն նոցին, հտ. Ա, Վեմետիկ, 1855, էջ 26։

վասն աշոյն եւ ձեռին դու մի՛ հարցաքններ եւ ոչ այլ ինչ ունիմ քեզասել, բայց միայն զբան Գրոյն, թէ՛ կրէ զամենայն բանի զարութեան իւրոյ (Եբր. Ա 3): Զի թէ յանսկզբանց առնել Աստուծոյ զարարածս գո մեզ ուսանելի զազիր կենդանւոյ անտի¹⁹⁸ ի¹⁹⁹ սարդէ, քանզի եւս աւելի զպնդելն²⁰⁰ եւ զպահելն տեսանեմք յաղամանդ²⁰¹ եւ յերկաթ: Եւ զի մեծ է ծով, վկայէ սքանչելի մարգարէն Նզեկիէլ, Զուր յորդութենէ բխեալ վայրագ աւթացն՝ ունել յինքեանս²⁰² ձկունս բարի²⁰³ իբրեւ զծովու մեծ (հմմտ. Եզեկ. Խէ 9-10):

«Եւ անդոյր»²⁰⁴. Զի ոչ է ի նմա ընդդէմ հողմոյ շնչումն եւ ոչ ամբոխեալ եւ կոծեալ ալեաւք²⁰⁵ եւ ոչ աղտաղտ եւ լորձնացեալ, զի ոչ խառնակին ի նմա դեւք ընդ վիշապս:

«Ի սմա սողունք մեծամեծք եւ մանունք».
Զի ի նմանութիւն առիծու եւ զուարակի քերովբէն տեսանիւր, եւ էր ի վարաց²⁰⁶ եւ արծուեաց, այլեւ արջոյ եւ յովազոյ եւ ընծի²⁰⁷: Ոչ եթէ մազեղ թեւաբուսութեան²⁰⁸ կռաշուրթն կենդանի իցէ յերկինս, այլ զզարուութիւն²⁰⁹ ներգործութեան յայտոսիկ ձեւակերպեն աստուածաբանքն²¹⁰:

«Եւ մաւք գնան».
Որ են ընթացք երկնաւորացն, որպէս ասէ, երկու թեւաւք թռչէին,²¹¹ զի հոգիք են հարկաւորք՝ առաքեալք ի սպասաւորութիւն (հմմտ. Եբր. Ա 14), որպէս տեսանէր Իսրայէլ ի սանդուխքն ելանել եւ իջանել (տե՛ս Ծնդ. ԻԸ 12): Իսկ թէ զի՞նչ բերեն շահաբեր նաւք այսոքիկ. զհանդերձանս հարսին եկեղեցւոյ, զոր ուսանիմք ի գրոց առաքելոց եւ մարգարէից: Իսկ

թէ²¹² զժամանակն հայցես ի ձգիլ մտաց քոց յերկինս հասանին նոքա առ քեզ եւ ի յիշելն քո զԱստուած գտանին բարէխաւս՝ ասելով. Մինչեւ յե՞րբ ոչ ողորմեցիս ի վերայ Երուսաղէմի (Զաք. Ա 12), եւ թէ՛ Ողորմեա, դու ստեղծեր, մի՛ կորուսաներ (Սղմ. Իե 9):

«Զվիշապն խաղալ նովաւ».
Այն է, զի առաջի Տեառն ամենակալի ընդվզեաց վիշապն ապստամբ,²¹³ յորժամ կամեցաւ աստուածանալ, արկ զվահան իւր զերեսաւք ի բաց փախեաւ²¹⁴ ծածկեալ զերեսս իւր ամաւթով, զերրորդ բաժին դասու իւրոյ ընդ իւր քարշեաց տտամբն Թ (9) տիւ եւ Թ (9) գիշեր ի վայր հոսեալ ի Տիբբեսն²¹⁵:

«Այս ծով մեծ».
Զմարդս է իմանալ, զոր աստուածաբանութեան հայրն մեծ աշխարհ զսա²¹⁶ ասէ, ոչ որպէս հինքն կոկովանաւք փոքր կոչեցին²¹⁷:

Եւ անդոյր²¹⁸. Զի պատկեր եւ փառք Աստուծոյ է:

Ի սմա սողուն որ ոչ գոյ թիւ. Բարկութիւն եւ սրտմտութիւն եւ ցասումն:

Եւ մանունք. Երկիւղ եւ ահ:

Նաւք գնան. Բան եւ ընթացք ճառից:

Եւ վիշապն [զոր ստեղծ] խաղ.

198 Գ անդի

199 Գ > ի

200 Գ պնդեալն

201 Բ յաղամանտ

202 Բ յինքեան

203 Գ բարի բարի

204 Գ անդիւր

205 Բ ալեւք

206 Բ վարաց

207 Գ ընծի

208 Գ թաւաբուսութեան

209 Գ զարութիւն

210 Դիոնիսիոս Արիսպագացի, Յաղագս երկնային քահանայապետութեան, Ներսէս Շնորհալի, Ներքող հրեշտակապետաց. տե՛ս ՆԲՀ, Ա, էջ 808 («թեւաբուսութիւն»), էջ 1127 («կռաշուրթն»):

211 Գ թռչիմ

212 Գ եթէ

213 Գ ապստամբն

214 Գ փախ

215 Միտքը քաղուած է Մեթոքիոս Պատարացու (Օլիմպիացի) Տեսիլքի մեզ անյայտ մի տարբերակից. տե՛ս և հմմտ. Ա. Թոփչեան, «Բանբեր Մատենադարանի», թիւ 23, էջ 344-378: Այն բանից անցնութեամբ կիրառուած է Գրիգոր Տաթեւացու Հարցմանց գրքում (Կ. Պոլիս, 1729, էջ 151):

216 Գ գայս

217 Գ կոչեցին: Նկատի ունի Հերմես Եռամեծի. «Արդ է փոքրիկ աշխարհ մարդ ըստ անձին եւ շնչոյ» միտքը. տե՛ս Հերմեայ Եռամեծի առ Ասկղեպիոս Սահմանք.- Բանբեր Մատենադարանի, 3, էջ 299 [1-2] հմմտ. «Ասացին (արտաքինքն), թէ փոքրիկ աշխարհ է մարդն».
Գրիգոր Նիսացի, Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն. տե՛ս ՆԲՀ, Ա, 260 («աշխարհ»), «ի մարդում իբր ի փոքր աշխարհում, ըստ Դիոնիսիոսի».
Սահմանք իմաստ. Ժ. Դաւիթ Անյաղթ, Երկասիրութիւնք փիլիսոփայականք, աշխտ. Ս. Արեւշատեանի, Եր., 1980, էջ 71:

218 Գ անդիւր

Միտք՝ «գատաւոր»²¹⁹ ուրեմն ի քաղաքի, յԱստուծոյ ոչ երկնչէր» (Ղուկ. ԺԸ 2). յորժամ խլէ զսամեաւս լծոյ պատուիրանին, բնակեալն յերկինս ծիծաղեսցէ զնովաւ, զի ինքն զինքն արհամարհելի արար:

Այս ծով մեծ. Ժամանակս:

Եւ անդոյրր. Որպէս ննջեն²²⁰ ի նաւի, ոչ գիտեն մինչեւ հասանէ նաւն ի հանգիստն: Այսպէս եւ մարդիկ յարգանդէ մինչեւ հասանեն ի գերեզմանն²²¹:

Եւ ի սմա սողունք մեծամեծք եւ մանունք. Մարկիոն, Սիմոն եւ Արիոս եւ Մարկիանոս:

Եւ մանունք. Թէոդորիտոն եւ Ժողովն-Քաղկեդոնի, եւ Փլաբիանոս եւ Բարծումա²²²:

Եւ նաք գնան. Առաքելական եկեղեցիք ուղղափառաց, ջուր՝ աւազանն, հեծան արմիւնին՝ հաւատն, առաքաւստ՝ խոստովանութիւն, հողմն՝ Հոգին, խարխիս՝ յոյսն, լար՝ անխզելի սերն, թեւ ուղղիչ՝ ինչն, քանոն հաւատոյ, հացն՝ մարմինն տէրունական, գինի ուրախարար՝ արիւնն, նաւավար, որ ի վերայ նստի, Հայր, որ զղեկն ունի՝ Որդի, աւգ քաղցրասիւք՝ ամենասուրբ Հոգին: Գնաց մարդ ի տուն իւր յաւիտենից (Ժող.ԺԲ 5):

«Եւ վիշապն, զոր ստեղծ[եր] խաղալ նովալ»։ Նեռն՝ մարդն անարէնութեան, որդին կորստեան²²³ (հմմտ Բ Թեսաղ. Բ 3), հակառակորդն ճշմարտութեան, որ պատրաստեալ է պատերազմել ընդ Աստուծոյն աստուածոց, զոր ինքն Տէր Յիսուս Քրիստոս²²⁴ աստակեսցէ հոգով

բերանոյ իւրոյ (Բ Թեսաղ. Բ 8) եւ այրմամբ շրթանց իւրոց²²⁵:

225 ՄՄ, ձեռ. 1267 (տարբերակ) Ադդ, ի յասել Արարչին. «Անցեք եւ բազմացարուք եւ լցեք զջուրսդ, որ ի ծովս»։ Քանզի հրաման Բանին Աստուծոյ բնութիւն, որ ունէր սերմն ի սիրել բխեցոյց, եւ բազմութիւնը նոցա լետոյ յորդեցին ծննդեամբք ի միմեանց այլ եւ այլ ազգ, զի եւ խեցեմորթք, այսինքն՝ կոքն եւ կտիւնք եկողկոյիք եւ ստոմէք եւ այլազգ կերպ, որ կոչին ուստիք եւ այլազգ ողորկապատեանք, այսինքն՝ կարքք եւ խեցգետիւնք եւ այլք։ Դարձեալ այլազգ, որ կոչին թուլատարք, քանզի թոյլ մարմին առնին, այսինքն՝ պողիպորտք եւ սպիւք եւ այլն։ Եւ դարձեալ այլակերպք, որ կոչին դրապկոնդէս եւ մեռնենէս եւ եմբեղոյս եւ որ ի սկս(°) գետոց եւ յատակս ծովակաց եւ ցամաք աւձից մմանեն, եւ այլազգ են, որ ձուս արկանեն, եւ այլազգ են, որ ընդ իւր մմանութեան ծնանին կենդանիս, որ կոչին գեղաղք եւ շնչիւք եւ սելաքաղք եւ գետք բլրոց մմանք եւ լերանք։ Եւ դելփինք են մարդասէրք եւ փոկք եւ մինչ ծնունդ փոկոցն մատաղք են յանկարծ պատուհաս եւ ժամն յորովայն ընդունին զծնունդս իրեանց մինչ անցէ երկիւղն։ Եւ այս դժուարալիւր հմարս աստուածեղեն իմաստութիւն կազմեաց արարածոյն, զոր արար եւ բազումք պատմեն, թէ արդարեւ այդ այդպէս է։ Որսորդք, որ ի Հնդէ ծովուն միշտ ատեանս ձկանցն եւ զայլազգ կերպարանաց յայտ առնեն, որսորդք, որ լեզիպ-տացոց ծովուն աշխատին զպէս պէս մմանութիւն ձկանց տան զրոյց։ Մարիսացիքն, որ լինին ի ծովուն եւ ի կղզիս պատմեն զամենայն, թէ իւրաքանչիւր ամենեցուն ձկանց առանց խառնակութեան են, կան մնան ըստ ազգի իրեանց բնութեան, եւ ոչ որպէս աստ առ մեզ լինի խառնակութեամբ, կորուսանեն զազգս իրեանց որպէս կէսէշք, այսինքն՝ ջորիք եւ տան հաւք նոյնպէս։

Այլ իւրաքանչիւր ազգ ձկան այլ եւ այլ բարս եւ բնութիւնս ունին։ Ազգ ձկանց, որ կոչին սակրոս, ասպամունունի, եւ որոճան, կէսք զմամուս ջորցն ուտեն, եւ կէսք զսիկս, եւ կէսք՝ զայլ գազանս եւ միմեանս, որպէս առ մեզ աղքատն՝ առ փարթամսն։ Կարկինոս թարգմանի խեցգետին, ցանկայ ուտել զմիս գեղնոյ, որ կոչի ուսարիոս, երթայ ընդդէմ արեւու բանա զպատեան եւ ջեռնու։ Իսկ խեցգետինն անգութեամբ երթայ քար ընկենու ի ներս եւ դիւրաւ ուտել, զի պատեան անհմարին ողորկ է։ Եւ զի այս են զարմանք, զի անգութիւն յանխաւառ գտանեն, որպէս ի մարդիք. պախաւապատողիպոյ (°) պէս, զի ամենայն քար եւ յայլ ինչ, ուր եւ հասանէ ի մէջ ծովուն զնորոյն զգոյն առնու եւ ձգունք, որ լաւդան եւ համարին զնա քար, եւ ապահով անգութեամբ ըմբոնէ եւ ուտէ։

219 «Դատաւոր - միտք» խորհրդաբանութիւնը համապատասխանում է Յովհան Ոսկեբերանի՝ Ղուկասու Աւետարանի համապատասխան տեղիի մեկնութեանը. տե՛ս Ս. Յովհան Ոսկեբերան, Ծառք, Նշխարք ի մեկնութեանց Սուրբ Գրոց, աշխ. Հ. Քէօսէեանի. Ս. Էջմիածին, 2008, էջ 398:

220 Գ մնջեան

221 Գ գերեզման

222 ԲԳ Բարծովայ

223 Բ խորստեան

224 Գ > Քրիստոս

Դարձեալ միւս այլ կենդանի աստղ անուն, ունի հրոյ զարոյթիւն. զինչ գտանէ ի մէջ ծովուն, յարձակի ի վերայ՝ թէ՛ մեծ է եւ թէ՛ փոքր, շնչալովն խորովէ եւ ապալ ուտէ:

Եւ սալամասն ոմանք եպենէս ասեն, որ ի կրակն մտանէ եւ ոչ այրի զբորդն, առնուն եւ թագաւորի [հ]անդերձ շինեն. երբ աղտոտի, հրով մաքրեն եւ ոչ այրի, այլ առաւել պայծառանայ: Վաքրն, որ է անանկն, զինչ որ կենդանի տեսանէ. թէ՛ մեծ է թէ՛ փոքր իբր զնետ թափանցիկ պատառէ: Իսկ կոկորդիլոս գազանն, որ չար է քան զամենայն գազանս, յորժամ գոյզն ի յալ գազան խառնակի, գայ այրին եւ ճանաչէ եղեալն, պատառէ զորովայն եւ լակէ, որ կենդանի բանական կամ անբան զայս բնութիւն ոչ ունի: Եւ զի՞արդ ակոս եւ տրիքոն ձուկն խայթոցաւոր: Իսկ էկսէնէստ ձկնիկ նաւակալ զմեծամեծ նաւսն արգելոյ բազում ժամս կծկեալ ի վերայ ջուրցն, եւ դլփի՜ն՝ մարդասէր:

Արդ, է եւ յամենայն կենդանիսն լաւ եւ յոռի. զի են ազգ ձկանց, որ կոչի պիննայք. զինչ որսան ի մի վայր գան եւ ճաշակեն, եւ տրիքոյոս զամենայն կենդանի, որ պատահի՜ մմանապէս: Եկսի՜նոտ անուն զետուն մի փոքրիկ լինի մեծ ծովուն, որ զարդ լինի նաւաւարացն, զի գուշակ իմն կանխաւ լինի խոռվութեան ծովուն, երթա խթի ընդ քարի եւ մածնո մինչ անցանէ խոռվութիւն: Իսկ նաւաւարացն զայն տեսեալ սարսեն, դողան զինքեանս ամբացուցանելով: Նոյնպէս եւ այլկինոն հաւ, որ առ ծովեզերքն բնակէ եւ առ ափն ծովուն դնէ զբոյն յաւորս ձմերպանոյ, եւ յորժամ թխէ ալիք ծովուն դադարին աւորս ելթն մինչ հանէ զձագս եւ աւորս ելթն այլ դադարէ մինչ զարգանան յարինակ առաջնորդաց եւ պատարագող քահանայից, եւ ուտիցէ ասրն ոսկեղէն, զոր եպինէս գազանք սնուցանեն, զո ոչ նարատան ներկ կարասցէ այնպէս ներկել: Եւ կամ ուստի՞ իցէ խղճնուցաց տալ զծիրանիս թագաւորութենէ, որ առաւելան պայծառութեամբ քան զամենայն ծաղիկս:

Եւ արդ, կամիմ յաւելուած լսողաց խաւսել, որք ախորժելով եւ ուրախութեամբ կամին լսել զհրաշակերտ զարմանալիսն զպատուական մարգարիտն, զոր ոստրէոսն յղացեալ ծնանի եւ զակն ծանրագին եւ պայծառ, որ անուանեալ կոչի կորողիսն(= կորաղիոն. տե՛ս Բարսեղ, Վեգորեայ, էջ 243 [1]), զի սկիզբն իբրեւ զդալար կակաչագեղ (չիք ՆԲՀ) բուսանի ի մէջ ծովուն, եւ իբրեւ մեկնի ի տեղոյ անտի, ընդունի զաւղն քաղցրաշունչ, սկսանի խստանալ, եւ լինի իբրեւ զքար հաստատուն: Դարձեալ, ուստի՞ իցէ նարդէս ծառն, որ ունի հոյզն եւ կաթն, որ լինի ի մմանակն պատուական, եւ ունի զլատկութիւն. ամառն ցրտացուցանէ զմարդն թէ եւ ի բաղանիսն է, եւ ձմեռն ջեռուցանէ թէ եւ միով հանդեր-

ձիւ է: Եւ լինի սալ յեգիպոսս եւ ի Լիբիայ աշխարհին: Եւ յորժամ ելանէ խիծն, զշիղսն եւ զետունսն ի յինքն ընդունի ի շնչել հողմոցն եւ ի կարծրանալ վկայեն շիղք եւ մծղութիւն: Եւ զկերպարանս խոնարութեան ջրոյ ունի եւ զլուսաւորութիւն, եւ անուանեալ կոչի զեկտրոն (=ելեկտրիոն. տե՛ս Բարսեղ, Վեգորեայ, էջ 157 [10]):

Ուստի՞ իցէ այս ամենայն, եթէ ոչ ի միոջէն միայն յԱրարչէն, որ կազմեաց եւ եղ ի բնութիւնս նոցա, զի յորժամ ասաց Աստուած. «Բղխեսցեն ջուրք». եւ որ զարմանալի իրք էին, որ ոչ եղեն այսու պատգամաւ եւ որ ծանրագին էին, որ ոչ տուան աշխարհիս մերում այսու հրամանաւ, զի կէսք ի նոցանէն, որ հաստատեցան ի ծովու, ի պաշտան մարդկան տուան ի սպաս, եւ կէսքն ի տեսիլ սքանչելի եւ յառ եւ յերկիւղ մերոյ խրատո: Ո՛վ սքանչելեացս, զի լեւիաթանն (մեկ բառ անընթեռնելի) եւ մի է սկիզբն ջրեղէն կենդանեաց, ոչ ծնաւ եւ ոչ ծնանի կայ [եւ տե՛ւ մինչ ի վախճան, եւ ի ցամաքել ծովուն հիացուցանէ զտեսողսն, թէ պէտ եւ յանձնապատան բազմեալ է յակն ծովուն, եւ զնդական ամ ընդդէմ կայ կոհակացն ովկիանոսի շրաշակաւք քարշի ողնկանց, եւ խաղան նովաւ հրեշտակք որպէս ձագո: Ոմանք մեծամեծ կէտս ոչ քան զկարիդոս եւ զմեռնոս մեծս են, այլ վասն զի լերանց մման են. փոքր մասն ինչ է[րեւ]եցուցանեն, կղզեաց մման են եւ այլք մանուկք որպիսի պէտք եւ տիւթիւք, եւ այլք որպէս ծառքաձեւք կառաքուսոց նման:

Եւ զի եւ ես մմանցից այնցիկ, որ ի լեզուս պանծացեալ են: Փախեաց ի սքանչելեաց ծովու, որպէս ձկունք վերաբերին կլանել զկաթիլս անձրեաց, զի մի՛ ընկղմիցիմք ի խորս անդնդոց, որ ոչ գոյ հանգիստ. ծանր է տկար բանիս մերոյ լաւել ի վերայ ջուրց:

«Նաւք գնան». չասէ եզակի, այլ՝ յոգնակի: Յոգնակին բազմատեսակ է. պատերազմի եւ վաճառու, ձիաձեւ եւ աւձաձեւ, այծեմնաձեւ, ճրագաձեւ, թողից եւ (ձեռ. թողիցաւ) զա[ր]ջառոց եւ զկովոց, եւ զանազան առագաստով եւ խարսխով. ոմն երթայ եւ ոմն գայ եւ այլ ոմն շրջանակի շրջի յոր կոյս եւ միտք ուղղչին կամիցին: Ջայս ամենայն բաժանէ մի եւ նոյն հողմովն, որ թէպէտ ցանկութիւն շահիցն հնարեցաւ եւ ճարտարապետ իմաստութեամբ կազմեաց, սակայն Հաւրն վարէ տեսչութիւն:

«Եւ վիշապն, զոր ստեղծեք խաղալ նովաւ». Որպէս վերագոյն ասացաւ վասն լեւիաթանայ: Եւ թէ այլք են ի ծովուն երկակեցաւք, ընդ որս դիւաց խառնակիլ ասէ Կիպրիանոս ի Խոստովանութեան իւրում, ուստի եւ յաւ ծանդական (ձեռ. Յաւաժանդական) ախտի շարժուն են, իսկ հրեշտակ վերակացու ծովու եւ ցամաքի խնամ տարեալ խաղ առնեն զսատանա դիւաւքն իւրովք:

եւ զարինակ հանդերձին առն եւ կնոջ, հողագործի եւ զինուորի եւ այլն ամենայն ըստ կարգի: Եւ ասէ. Արա սպաս պաշտաման պատմութեանի ի պատիւ եւ ի փառս Ահարոնի եղբար քում (Ելք ԻԸ 4): Զի քահանայն առանձինն երեւելով քարոզիցէ զաւետիս կենացն յաւիտէնից, բայց մի՛ գուցէ, թէ զանազանեալ է պատիւ ի փառաց, պատիւն աստուածային եւ փառքն մարդկան, զի յայտ լիցի, թէ քահանայն աստուածազգեաց է եւ ի մարդկանէ փառաւորեալ:

Արդ, պճղնաւորին արինակ կրկին կապուտակ յաւանքն մինչեւ ի պճղունսն, զի աւդտ յարփոյն մինչեւ յերկիր ըստ որն անկ է, իսկ ծիրանին՝ ջրոյ, իսկ կարմիրն՝ հրոյ, իսկ սպիտակն՝ վուշն՝ երկրի, իսկ քուղն՝ անմոռաց յիշատակութիւն ժողովրդեանն: Իսկ ծաղկեան դարձեալ երկրի, իսկ նուռն՝ դարձեալ ջրոյ, իսկ զանգակն՝ հնչակցութիւն եւ հաղորդելով ընդ միմեանս տարերցս եւ ի լինելութիւն մասնաւորելոցս: Իսկ լանջանոցն երկոտասան ակն երկոտասան որդոցն Յակոբայ գրեալ ի վերայ միոյ միականն անունն եւ մի որդոյն Յակոբայ, որ է այսպէս. սարդիոն՝ Ռոբէն, տպագիոն՝ Շմաւոն, նոյնպէս եւ այլքն, որ ի կարգին: Իսկ երկորորդն զմրուխտն, որ ի յուսն, վեց կենդակն եւ վեց նահապետն ի մինն գրած, եւ վեցն ի մինն գրած կրկնակ երկու կիսագնդացն: Իսկ այն վակասակն, որ յանդիմանութիւն եւ ճշմարտութեան, սպիտակ աղամանդ, որ ի վերայ խաշածեւ եւ հիւսկենին, որ ի վերայ սրտին՝ արինակ Աստուծոյ Բանին, որ արուեստի միջի կալով՝ խաշել ընդ արարածս, արուեստաբար պնդեալ ունի, զոր հեթանոսք հարկ կոչեն եւ հրեայքն եւ եկեղեցի՝ բան եւ զարուրթիւն, ըստ Պաւլոսի ի վերայ ականս այս երեւէր առաջիկա ամին, զոր ինչ գալոց էր, թէ սուր փայլուն երեւէր, թէ սով՝ կապոյտ, թէ մահա:

Եւ հաշտէ Աստուած պարզ զայն զգենոյր քահանայապետն, որպէս թէ զարարածքս զամենայն զերկինս եւ զերկիր առաջի Արարչին նուիրէր որպէս Որդի առաջի Հաւր: Եւ զի ինքն քահանայն զարուրթեամբ եւ զթով եւ հայր աշխարհի ամենեցուն աղաւթէ ըստ Պաւլոսի նախ քան զամենայն առնել աղաւթս վասն ամենայն մարդկան (տե՛ս Ա Տիմ. Բ 1), որպէս երգէ եկեղեցի. Ողորմեա, Տէր, ի վերայ ամենայն աշխարհի, թէ

զգենու եւ ի պատերազմ ելանէ որպէս զրահ եւ վահան եւ այլ պատրաստութիւն: Իսկ վասն պատուոյ եւ փառաց այնմ հանդիպիլ ոչ վրիպէ, որպէս ասէ զՄակեդոնացոյն Աղեքսանդրի, թէ մինչ դիմել երթալ ի Պարս, քահանայապետն հրէից, որ էր յաւուրս յերուսաղէմ, եւ ընդ առաջ նորա պճղնաւոր վակասովն, եւ նայ տեսեալ անդէն, փութով իջանէր յերկարէն՝ յողջոյն նմայ:

Եւ տեսեալ զայն մաւտաւոր ի խորհրդակցացն, մեղադիր լինէին ընդ կարի խոնարհիլն: Եւ նայ ասէ. Դիտէք, թէ այն ով է, որ զգեցալն է, որպէս թէ ասիցէ, թէ զերկինս եւ զերկիր զգեցեալ է, որով ճանաչի Աստուած, եւ պատուեալ խնամէ Աստուած: Իսկ ի նորում պատմութիւնս Բագարատա ուսուցանէ, զի տեսաներ Վանիփատոս լոյս փառաց զգեցեալ, ոչ իշխեր մաւտել: Ասացից զայս, որ ընտանի է մեզ, եւ եղեւ յաւուրս մեր. զի մի ոմն դեւ ունէր հարցուկ, որ մաւտէին, ստիպէին զնայ խաւսեալ եւ ելանել, եւ նայ ասէ. Եկեսցէ այս անունն արեղայ: Եւ յանձն առնոյր ի գալն նորայ ելանել: Եկն արեղայն, եւ ստիպեր ելանել: Ասէ դեւն. Թէ զփիլոնդ²²⁸ հանես, ելանեմ, եւ նայ խաբեալ մերկաց զփիլոնն, եւ նոյնժամայն ի նայ եմուտ դեւն: Հազիւ ուրեմն բժշկեցաւ²²⁹: Այլ ըստ ճառի պատմագրաբար, բայց զի զամենայնքն ստուեր²³⁰ հաւնդերձելոց բարեացն նա քան զմեզ Պաւլոս որպէս ասեն մարմին Քրիստոս է (Կողոս. Բ 17).» զի արիւն է Կուսին չորէքհիւթեայ²³¹ մարմին եռամասնեայ հոգիով, քառեակ առաքինութեամբ ստեղծեալ ոչ փոխարկեալ, այլ փոխատրելով²³², զգեցաւ զեկեղեցի զգեցեալ այսպէս. փոխանակ կրկին կապուտակի հոգի եւ մարմին կատարեալ մտաւ:

228 ձեռ. զփիլոնոս

229 Վկայաբանութիւն սրբոյն Բագարատայ Տոռոմենոյ եպիսկոպոսի. տե՛ս Վարք և վկայաբանութիւնք սրբոց հատընտիր քաղեալք ի ճառընտրաց, հտ. Ա, Վեմետիկ, 1874, էջ 170-171:

230 ձեռ. ըստուեր

231 Ձիք՝ ՆԲՀ

232 «Եւ զի՞նչ արինակ ի մարմնում աստուածութիւնն՝ որպէս հուր յերկաթում, ոչ փոխարկաբար, այլ փոխատրաբար». տե՛ս Ս. Բարսեղ Կեսարացի, Գիրք Պահոց, աշխ. Կ. Մուրադեանի, Ս. Էջմիածին, 2008, էջ 270, Ա սիւնակ:

Եւ երկոտասան ական՝ երկոտասան տիրագոյն անդամքն՝ առաքեալքն. ոչ կենդանակերպքն լուսընկալք, այլ լոյս կենդանի, եւ հիւսկէն ոչ կերպասէն, այլ ամենեւին առաքինութիւն: Եւ խոյր՝ Հոգին Սուրբ, եւ թիթեղն ոչ ոսկի խաշածեւ, այն նոյն խաշն: Այսպէս եւ զայլսն. զի զգեցաւ զեկեղեցի եւ նստաւ ընդ աջմէ Հաւր, եւ բարեխաւս իսկ է վասն մեր: Զայսն նոյնգունակ հրաման ետ ի լերինն, յաւուր յոր պատուիրեր մկրտել զաշակերտեալսն: Արդ, որ ի Քրիստոս մկրտեցան՝ զՔրիստոս զգեցեալ են (Գաղատ. Գ 27), եւ մարմին Քրիստոսի (Ա Կորնթ. ԺԲ 27) անուանեցան: Եւ թէ զինչ է Քրիստոս. Աստուած եւ Մարդ, որպէս բան եւ ձայն: Իսկ մարմին Քրիստոսի՝ գործք արդարութեան: Այսպէս զգեցեալ լինի Քրիստոս:

Խոյր՝ շնորհքն, եւզ զուարթարար՝ փշումն Հոգոյն: Կապուտակ գոյնք՝ երկնային վարքն, պատուական ական՝ պատուիրանին պահպանութիւն, բանակ՝ ճշմարիտ դատաստան, կրծանոց՝ սրտի հաւատալ, ճաշակ՝ բերանով խոստովանիլ, հիւսկէն ոսկէթել՝ սէր անախտ, քղանցն՝ անմոռյաց յիշումն Աստուծոյ, նռնածեւ՝ ծածուկ քաղցր յոյս հանդերձելոցն, շուշան ծաղիկ՝ ողջախոհութիւն, ոսկի զանգակ՝ կուսութիւն, արծաթոյն՝ ընտրեալ բան (հմմտ. Սղմ. ԺԱ 7): Զայսաւրինակ զգենու քահանայն, այսպէս զարդարի պաշտոնեայն: Եւ արդ, զի՞նչ. քահանայք միայն զգենուն. ո՛չ. մանաւանդ զգեստութեան, եւ կամ աղտեղի հանդերձիւ մտանել՝ սպրդեալ յառազաստ Փեսային (տեսն Մտթ. ԻԲ 11): Երկեւզ է, մի՛ գուցէ կալեալ ոտիւք եւ կապեալ ձեռաւք արտաքս անկցուք, զի զամենեսեան կոչեալ է կոչողն: Զի՞նչ է քահանայն. զգուշանալ գիտութիւն եւ բանն (Մաղ. Բ 7), որ ի բերանէն գայ աւրինաւոր, եւ քաւել եւ սրբել, եւ պատարագել վասն իւր եւ վասն ժողովրդեանն:

Ապա եթէ այսպէս է, եւ մեր զգուշացուք եւ քաւեսցուք ոչ այլ ոք, այլ՝ զմեզ ինքն, զմեզ իսկ բժշկեսցուք, ըստ այնմ, թէ՛ Բժիշկ, բժշկեալ զԱմձն քոյ (Դուկ. Դ 23): Պատարագ մատուցուք վասն մեր: Պատարագ է աղաւթքն, պատարագ է պահք, ողորմութիւն, աւրհնեալ զԱստուած փառաւորեալն եւ այլն ամենայն: Պատարագ է ինչ առաւել, պատարագ է ոչ ինչ գլնել, զի թէպէտ հայրապետութեամբ բարգաւաճի Աբրահամ

եւ Իսահակ, եղիայ եւ Յովաննէս՝ ոչ են ընկեցիկ, ընդէ՞ր զրկեմք զմեզ կամաւք մերովք ի սուրբ քահանայութենէս, զոր շնորհեաց Քրիստոս: Զգեցարուք ամենեքեան իշխանաց իշխան զողորմած եւ հաւասարհաճեցութիւն²³³, իշխանք ոչ յաւելորդաբար ծանրանալ իշխեցելոյն: Զգեցարուք քահանայապետք զգիտութիւն, զգեցարուք, քահանայք, զսրբութիւն եւ ոչ զզարդարումն ընտանեաց, զգեցարուք կրանաւորք զժուժկալութիւն, զգեցարուք դատաւորք զարդար եւ իրաւ տալ վճիռ, զգեցարուք ծերք յաղթել սրտի եւ խորհրդոց, զի խորհուրդք ծերոց զբարինս պատառեն: Զգեցարուք երիտասարդք յաղթել կշտի, զգեցարուք մանկունք զհնազանդութիւն եւ զուսումնասիրութիւն, զի մանուկ անուսումն անմիտ է (Առակ է 7), ըստ Սաղովմոնի: Զգեցարուք վաճառականք զհաւասարութիւն ի տալ եւ յառնուլ, ոչ առնուլ չափ կրկին կշիռ, զի պեղծ են առաջի Տեառն ինքեանք, եւ ոչք առնեն զնոսայ (Առակ. Ի 23): Զգեցարուք կանայք զարդ խոնարհութիւն, զողջախոհութիւն, զայրասիրութիւն, զտնարարութիւն եւ զմանկասնոյցութիւն²³⁴: Զգեցարուք կուսանք զսրբութիւն սրտի եւ զպարկեշտութիւն:

Այսպէս ամենեքեան զամենայն, զի ամենայն վասն ամենայնի սահմանեալ է Արարիչն ամենայնի ամենարարն, ամենատէրն, ամենա[...]²³⁵ ամենասուրբ երրորդութեան, որ յաղաւթս եւ ի բարեխաւսութիւն ամենայն սրբոց ողորմեսցի ամենայն աշխարհի եւ եկեղեցոյ սրբոյ, ամենակալն Աստուած արժանի արասցէ զմեզ քահանայանալ սրբութեամբ: Մի՛ ցնցուտուն հանդերձիւ, ըստ Զաքարիայ, այսինքն է՝ զմեզս ժողովրդեանն, այլ սպիտակազգեստութեամբ, որով եւ ընդ հրեշտակս բնակիլ, ասէ. Տաց քեզ, որ շրջիմդ ի մէջ դոցայ, ցնծալ եւ ուրախանալ ի տաճարի Տեառն (Զաք. Գ 7), որ նախատիպ էին հանդերձեալ բարեացն, որպէս ասէ. Զգեցարուք զգէնն լուսոյ, որով եւ ի դիմի հարկանիջիք չարիմ (Հռոմ. ԺԳ 12), եւ Ուրախ լերուք յամենայն ժամ եւ յամենայնի ուրախ եւ մի՛ գնդութիւն, ի գանս (Փիլիպ. Բ 4): Եւ ասէ Տէր. Յնծացէք եւ ուրախ լերուք (Մտթ. Ե 12), զի այս ամենայն առակ

233 Զիք՝ ՆԲՀ:

234 Զիք ՆԲՀ (բայց մանկասնութիւն)

235 մի քանի տառ անընթեռնելի

աւրինակի, որ յեկեղեցի հոգեւոր շնորհ, եւ մարմին եւ արին տէրունական առ հաւատչեալ յաւիտենական կենացն, որով զուարճանան մանկունք եկեղեցւոյ յուսո հանդերձելոց բարեացն:

Բայց կատարեալ փրկութիւն ոչ եմք առեալ, ըստ առաքելոյ. «Ակն ունիմք փրկութիւն մարմնոյ մերոյ» (Հռոմ.Ը 23), եւ «ի մասնէ գիտեմք եւ ի մասնէ մարգարէանամք» (Ա Կորնթ. ԺԳ 9): Վասն որոյ ցնծասցեն սուրբքն, մանաւանդ, եթէ ցնծալով ցնծասցեն, վասն զի փրկին հոգիով եւ մարմնով, ըստ Յովաննու. Քսան ե չորք իրիցունքն սպիտակագգեստք առաջի Աթոռոյն Աստուծոյ (տե՛ս Յայտ.Գ 4) երգէին զերգս յարազուարճ ուրախութեամբ կենդանոյն յաւիտենից ապրեալք ի գազանէն եւ ի մահաշունչ վիշապէն, արժանաւորք եղեալ երկնաւոր առագաստին գերապաղատ²³⁶ պողոտային, մարգարտապատ քաղաքին երգեն զերգս, որում փա՛ռք եւ պատիւ յաւիտեանս. Ամէն:

ՎԱՐԴԱՊԵՏԻ ՎԱՆԱԿԱՆԻ ՅԱՐՄԱՐՈՒՄ Ի ՍԱՂՄՈՍԱՑ ՄԵԿՆՈՒԹԵՆԷ²³⁷

Ինձ յոյժ մեծարոյ եղեմ բարեկամք քո, Աստուած, եւ յոյժ զաւրացամ իշխանք մոցայ: Թուեցի զնոսա եւ բազմացամ զարթեալ: Եւ արդ, ընդ քեզ եմ, թէ սպանանես զմեղաւորս, Աստուած արք արեւմահեղք եւ նեմգաւորք ի բաց եղիցիմ ի քէն (ՃԼԸ 17-19):

Ախորժումեղբարց խնդիր արկեալ խորհուրդ յաւժարեալ արար մեզ: Եւ այս ոչ մարդկային շնչայարձակ²³⁸ մտածական շարժութեան, այլ յուսով հեզ, մարդասէր եւ քաղցր Տեառն: Եւ Տէր Հոգին է, ըստ Մովսիսի եւ ըստ Պաւլոսի, որ մաւտ կա տիրաբար եւ բաշխէ առատապէս եւ ոչ նախատէ (հմմտ. Գաղատ. Գ 5): Սաղմոսս այս ի Դաւիթ, որ անվերագիր ասի յեբրայեցւոցն, ունի յարմար տեսութիւն առ Յովսիա բարեպաշտ, եւ որ կարեն հաւասարել լաւականութեան նոա ի գերութիւն եւ ի բնութիւնս, զոր Տէր փորձ գիտէ ծանուցանել զնստելն եւ զառնելն մտառութեամբ խորհրդոց զշաւեղս եւ զվիճակս քննողութեամբ

ամենայն վարուց կենաց որպէս ճանապարհ ի կարգաւոր տեսաւդէ, որ ահա ճանաչող է յետնոցն ընդ առաջինսն հաւաստի, որ եւ ընդ ստեղծանելն ձեռնադրէ, որպէս դրոշմ մատանոյ զիրաքանչիւր ոք յանցնիւրսն, որպէս զԱդամն առաջին պատկերաւ, ըստ Գրոյն բանի, զՀաբէլ պատարագաւ նոյն Հոգով, զնոյ՝ արդարութեամբ ի նոյն Հոգի, իսկ զԱբրահամ՝ հաւատով: Այսպէս եւ զայլսն, որ ի կարգին, եւ զՈվսիա՝ բարեպաշտութեամբ, բայց զՈրդին՝ զնորն Ադամ զՏէր մեր. ի Յորդանան ձայնին եւ Հոգւոյն իջմամբ կնքեաց, եթէ Աստուած ճշմարիտ է, որ ոչ միայն սքանչելիանուն եւ սքանչելի արար, այլ եւ զարմանալի է գիտել առ ի ստեղծութեան մերոյ կազմած հայելով, թէ զհարդ զանմահ եւ զարմարմին հոգի կապեալ է ի թանձր եւ ի մահկանացու մարմին շնչոյ միջնորդելով, թէ որով պարանով²³⁹ կապեալ է զմանրախիտ²⁴⁰ եւ կարծր ոսկերս ի խաւարին եւ ի խոնաւ տեղոջն, թէ ընդ որ ի ներքս մածեալ շունչ, որոյ հոգոյ ոչ ոք կարէ երթալ յերկինս կամ իջանել ի դժոխս եւ ոչ յեզր ծովու թռչել, զի առաջնորդ եւ մաւտ գիտակ ինքն է, նմանապէս եւ յոգոյ իմոյ անթաքելի է ինքն, այսինքն՝ ի բանական եւ ի հոգեւոր իմաստից եկեղեցւոյ:

Ձի աւետարանական ուսմամբն, տնաւրինական տեղաւքն դաւանի Որդի, ըստ այնմ, թէ՛ «ՅԵզիպտոսէ կոչեցից զՈրդի իմ» (Մտթ. Բ 15): Եւ ըստ Յովելայ, զՀոգի նախաւետեալն²⁴¹ եւ յետին աւուրս հեղեալ ի մարմին եկեղեցւոյ (տե՛ս Յովէլ Բ 28): Եւ որպէս յՈրդի եւ ի Հոգի հաւատոյ տեսութեամբ գտանեմք զՀայր պատճառ միումն ծննդեան եւ միումն ելողութեան, որպէս լոյս փառաց եւ նկարագիր Էութեան (Եբր. Ա 3), որպէս հուր ջերմութեան եւ երեւման եւ արմատ բուսոյ եւ բողբոջոյ: Թէ ասիցէ ոք, թէ խաւար ծածկէ զիս եւ գիշեր (հմմտ. Սղմ. ՃԼԸ 11), այսինքն՝ հեշտ եւ փափուկ կեանք: Մեծատունն ոչ կարաց թաքել, վասն զի Աստուծոյ խաւարն, որպէս Աստուծոյ լոյսն է՝ մարդոյ աշաց անմատելի²⁴²: Ասէ զԱստուած ստացաւ երիկամաց²⁴³ եւ

236 2Իք ՆԲՀ

237 Աղբիւր.

ՄՄ, ձեռ. 2273, Թ. 9ա - 14ա

238 2Իք ՆԲՀ

239 ձեռ. կարանով

240 2Իք ՆԲՀ

241 2Իք ՆԲՀ

242 2Իք ՆԲՀ

243 ձեռ. երիկամաց

սրտից մարդկան (տե՛ս Սղմ. ՃԼԸ 13), այսինքն՝ Արարիչ ըստ Աթանասի եւ այլոց աստուածաբանից, որում հոգով սիրել եւ լեզուով խոստովանել պարտիմք, վասն ահեղ եւ սքանչելի գործոցն, զի ի նմանէ ոչ թաքչի եւ ոչ ներգործութիւն գուզնաքեա ոսկեր միոյ, վասն զի եւ զանգործսն տեսանէ, որպէս եւ ի տուունջեան²⁴⁴ լուսոյ անմոլար ընթեռնու (տե՛ս Սղմ. ՃԼԸ 16):

Ինձ յոյժ մեծարոյ եղեմ բարեկամք քո, Աստուած.

Ասաց վասն հասարակաց բնութեանս քննութիւն: Դարձեալ ասէ առանձինն վասն ե-բ-րանցոց ժողովրդեանն, զի աբրահամեան եւ մովսիսեա իշխանքն յոյժ էին մեծարոյ եւ բարեկամ: Վկայէ Գիրս այսոցիկ. Հաւատաց Աբրահամ յԱստուած եւ համարեցաւ նմա արդարութիւն (Մնդ. ԺԵ 6, Հռոմ. Դ 3), եւ կոչեցաւ բարեկամ Աստուծոյ (Յակ. Բ 23): Եւ Մովսէս բերան ի բերան խաւեցաւ, որ բարեկամի է:

Եւ յոյժ զաւրացաւ[ն] իշխանք նոցա.

Յայտնի է, զի աստուածք անուանեցան, որպէս Մովսէս՝ փարաւոնի (տե՛ս ելք է 1), եւ ասացեալքն աստուած որպէս զմարդիկ մեռան, զի ճոխաբար հրաման ետուն ծովու եւ աւդոյ եւ վիմի, ի ճանապարհ եւ ի հաց անձրեւել եւ յաղբիւրանալ, այլ եւ ի վերայ [Յ]որդանանու եւ լուսաւորեաց, թողում ասել ի վերայ քանանացւոց եւ այլոց հեթանոսաց:

Ինձ յոյժ մեծարոյ եղեմ բարեկամք քո, Աստուած.

Զառաքեալսն, ասէ, ըստ այնմ, թէ՛ Զձեզ կոչեցից բարեկամս, եւ դուք բարեկամք իմ էք, զի զամենայն, զոր լուայ ի Հարե իմմէ, ծանուցի ձեզ (Յովհ. ԺԵ 15): Եւ բարեկամսն յայն էր եւ է, որ ասէրն Պետրոս. Դու եւ Քրիստոս Որդի Աստուծոյ կենդանույ (Մտթ. ԺԶ 16), եւ թէ՛ Բանս յափտեմականս ունիս (Յով. Զ 69), եւ թէ՛ Թէ մեռանել լինի ընդ քեզ զքեզ ոչ ուրացայց (Մրկ. ԺԴ 31), զոր ասաց եւ արար իսկ, զի վասն սիրոյ եւ բարեկամաց նորայ ի Հոռոմ ընդ Խաչ բեւեռեցաւ գլխիվայր²⁴⁵: Որք եւ յոյժ զաւրաւոր իշխանք

են կոխել զաւճս եւ գնալ ի վերայ իժի (տե՛ս Դուկ. Ժ 19, Սղմ. Դ 13), զոր եւ ի հուրն թաւթափէր՝ ոչ ինչ վնասեալ ինքն Պաւղոս (տե՛ս Գործք ԻԸ 3), այլ եւ զառեւծն եւ զվիշապն, որք աշակերտեալ ուսուցին զամենայն տիեզերս, ըստասացելումն, թէ՛ «Կացուցեր զնոսա իշխանս ընդ ամենայն երկիր» (Սղմ. ԽԴ 17), եւ Յիշեացի անուն քո յամենայն ազգս (Սղմ. ԽԴ 18) ի նոցա իշխանական նշանացն եւ ի ճոխաբար բանիցն անթիւ զարթուցեալք յարբեցութենէ կենցաղոյս եւ ի թմրութեն մեղաց եղեն հաղորդք Քրիստոսի Աստուծոյ մերոյ ընդ Հար եւ Հոգւոյն Սրբոյ: Այս յաշխարհի եւ ի մարմնաւոր բարեկամացս Աստուծոյ ինձ յոյժ մեծ է:

Բայց արդ, յաղագս երկնաւոր եւ անմարմին բարեկամացն, արդ, ասելի է որքան ժամուս պատշաճ տացէ Ինքն Տէր Հոգին բարեկամ զհրեշտակական էութիւնսն եւ զերկնայինսն կոչէ, եւ ասէ, եթէ եղականք են նոքայ: Զայս ասէ եւ Ամով. Որոյ ձեռք հաստատեցին զգաւրս երկնից (Ովս. ԺԳ 4), զորոց սա ասէ. Արար զհրշտակս իւր հոգիս եւ զպաշտաւնեայս ի քոց հրոյ (Սղմ. ԺԳ 4): Իսկ զհուրն աննիւթ եւ անայրեցող եւ զլոյսն թափանց եւ զհողմն անվայրափակ՝ զմտաւ ածել եւ իմանալ, ըստ Աստուածաբանի, ընդդէմ²⁴⁶ երկուց աղանդիցն հանդիսանա մարգարէս. մելեսիոնոսացն²⁴⁷, որ ասացին՝ առաջին երրեակ դասք անեղք գոլով ի ներքոյ ինքեանց հաստատեն, այլ եւ երիս կարծր տերութիւնսն ի վեր ունել զիրեանս որպէս կարաւտս եղեալ պնդողի, զորս ըմբերանէ Սաղովմոն ասելով, թէ՛ Զբարձունս ի վերայ բարձանց պահէ (Ժող. Ե), եւ առաքեալ ասելով, թէ՛ Կրէ զամենայն բանիս զաւրութեան իւրոյ (Եբր. Ա 3): Այլ եւ զպաւղիանոսն²⁴⁸, որք ասացին՝ զաշխարհս ի հրշտակաց եղեալ: Սայ ասէ արարածք եւ ոչ արարիչք են, զոր եւ Պաւղոս վկայէ, թէ՛ Հոգիք եմ հարկաւորք՝ առաքեալ ի սպասաւորութիւն (Եբր. Ա 14): Եւ զի բարեկամք են՝ բազում ուստեք յայտ է. նախ այն, որ զստամ-

Թանգարան Հին եւ Նոր դարերու. Անկանոն գիրք առաքելականք, Վենետիկ, 1904, էջ 54:

246 ձեռ. ընտղէմ

247 Թերևս աղաւաղումն է լուսն. massalianoi; (= մեսալեան, մծղնեական) անուան:

248 Նկատի ունի պապիկեան աղանդը:

244 ձեռ. տուլնջեան

245 տե՛ս Եւսեբիոս Կեսարացի, Պատմութիւն եկեղեցական, դպ. Գ, ա (Վենետիկ, 1877, էջ 145),

բակեալ ծառայն ընկեաց վարսաւոր քերոբէն, որ պահէ զճանապարհ ծառոյն կենաց (հմմտ. Եզեկ. ԻԸ 16): Եւ զի կերան առաջի Տեառն ի սեղանն Աբրահամու: Այդպէս ըստ կարգի տես զփրկելն Ղովտայ եւ զպահելն Յակոբայ: Եւ զայլն ամենայն, որ ի կարգին. եւ իշխանաբար զարուսթիւնսն ձիոյն ի կառան փարաւոնի, եւ զհրկիզելն Սողոմայ, եւ սատակելն ասորոցն եւ այլ բազումս ի հնումն եւ ի նորումս:

Թուեցի զնոսա եւ քան զաւագ բազմացան.

Տասնապետքն եւ յիսնապետքն, հարիւրապետքն, հազարապետքն եւ միապետքն, զոր կարգեաց Մուսէս խրատու Յոթորայ: Վկայեն սոքա, թէ անթիւ ի բազմութենէ էին եւ յաւուրսն Դաւթի, ըստ խոստմանն Աբրահամու (տե՛ս Ծնդ. ԺԳ 16), որ թէպէտ սակաւ թուէին ի Բաբելոն, այլ Դանիելի եւ երեք մանկամբքն (տե՛ս Դան. Գ) լցեալ լինէր բանն, որ գրեալ էր վասն նոցա, զի մի՛ սասցից, թէ յաւժարելով եւ յաղթութեամբ կոտորածոյն Զարաբաբելի լի եղեւ ամենայն:

Թուեցի զնոսայ եւ բազմացան.

Եւ զի անթիւ են ի բազմութենէ ոչ միայն քան զաստեղս, այլ եւ քան զաւագ ծովու, բայց Տեառն եւ Արարչին իւրեանց թուեալք եւ անուանեալք են, որում եւ շիթք անձրեւաց եւ ցաւղ առաւատու թուով են, եւ գործք մարդկան թուով կնքեալ պահին ի քսակի (հմմտ. Յոբ ԺԴ 17):

Զարթեա եւ արդ ընդ քեզ եմ.

Զարթնուլ ասի եւ Աստուծոյ՝ ոչ ի քնոյ, այլ որպէս ի քնոյ ի ներելոյ ի վրէժխնդրութիւն: Զայս արինակ աս եւ Զաքարիա մարգարէն. Զարթոյց զիս հրեշտակն զոր արինակ զարթնուցու մարդ ի քնոյ իւրմէ (Զաք. Դ 1): Եւ յայտ է, թէ յայն տեսնէն, որում էրն յայլ տեսիլ ասէ, այնպէս եւ սա յայն իմաստիցն, որ վասն հրեշտակաց լինելութեան եւ բարեկամութեան եւ զարուսթեան եւ բազմութեան. յայս իմաստս զարթեալ ի մեծութեան փառաց քոց եւ ի քաղցրութեան մարդասէր կամաց քոց:

Զարթեալ եւ արդ ընդ քեզ եմ.

Թէ պաշտաւնեայք քո ստեղծեալ հոգիք մեզ բանաբերք եւ վերակացուք այնքան մաքուր եւ նուրբ եւ ահաւոր են: Դու թէ սպանանես զմեղա-

ւորս, Աստուած, ապա արք արեան ահեղք եւ նենգաւորք ի բաց եղիցին ի քէն (հմմտ. Սղմ ԾԴ 24): Այս ուժովս վարէր Եսայի մինչդեռ զսէրոբէսն չէր տեսեալ թեւ սքողեալ եւ այնքան ա[ր]հ[ն]եալք ի սրբասացութիւնն համաձակ ասէր. Սերմն՝ Ժանդ, որդիք՝ անարեւոյ, թողէք զՏէր, երկիր ձեր աներակ, քաղաք ձեր հրձիք (Ես. Ա 4, 7): Իսկ յետ այնորի[կ] ոչ նոյնպէս, այլ աւաղականս բարբառի. Վա՛յ ինձ տառապեալ, ասելով, եւ պղծաշուրթն (Ես. 2 5): Այնպէս եւ Պաւլոս շունս եւ կրճատեալս մշակս նենգաւորս կոչէր, եւ զինքն ըստ արդարութեան արինացն լեալ անարատ (հմմտ. Բ Կորնթ. ԺԱ 13, Փիլիպ. Գ 2): Եւ ապայ առեալ ի խորս մարդասիրութեան Քրիստոսի ասէ. Յիսուս Քրիստոս եկն յաշխարհս՝ փրկել զմեղաւորս, որոց գլուխն ես եմ (Ա Տիմ. Ա 15): Զնոյնս տեսանեմք աստ. ի մարգարէս ասէր վատահաբար. «Կորուսանէ Տէր զամենիսեան, որ խաւսին սուտ» (Սղմ. Ե 7), թէ՛ Միհչէն յե՞րբ մեղաւորք, Տէր (Սղմ. ԴԳ 3), եւ թէ՛ Հատոյ զհատուցումն ամպարտաւանից (Սղմ. ԴԳ 2): Եւ որ այլ այսպիսի բանից կարգք են: Իսկ աստ, յորժամ յայտնել իմացաւ զխորս անբաւ իմաստից մարդասիրութեանն, ասէ, թէ՛ Սպանանա զմեղաւորս. ոչ ասէ սպանանել եւ ոչ ոչ սպանանել. երկու դիմաց զեթայն յաւել. մի, զի զանձնիշխան է մարդ՝ զոր կամի գտանէ, ըստ Սաղովմոնի, թէ՛ Առաջի քո կա հուր եւ ջուր. յոր կամիս՝ թաց: Եւ միւս եւս, զի մարդասէր է Տէր եւ ողորմած. Ես Աստուած, ասէ, ոչ կամիմ զմահ մեղաւորին, այլ զդառնալն եւ ի գիտութիւն գալ (Եզեկ. ԺԸ 23), եւ թէ՛ Դարձարութ առ իս եւ ես դարձաց առ ձեզ (Զաք. Ա 3), եւ թէ՛ Յորժամ դարձցիս եւ յոգոց հանցես, լուայց (Ես. Լ 15): Եւ արդ, որովհետեւ այսպիսի քաղցր եւ մարդասէր է Աստուած եւ Դատաւոր մեր ստուած է (Ես. Լ 18), որպէս ասէ Եսայի: Եւ բարեկամք նորա հրշտակքն. բարեկամք եւ վերակացու եւ պահապան եւ ձեռնկալու են մեր, որպէս լսեմք, որ արարին Ղովտայ, այլ եւ՝ Եզեկիէլի եւ Դանիէլի: Եւ զարթուցիչ եւ խոթիչ են մեր, որպէս զարթուցին զԶաքարիայ եւ զՊետրոս (տե՛ս Զաք. Դ 1, Գործք ԺԲ 7), եւ խթեցին եւս զկողսն այնքան թանձր մինչ զգաւտին եւ զհողաթափն պնդել եւ ագանել: Ըն-

դէ՞ր մեռամիմք տունդ Իսրայելի գոլով (Եզեկ. ԺԸ 31):

Ով է մեր հակառակ. Աստուած, որ յիւր Որդին ոչ խնայեաց, այլ վաս մեր ամենեցուն մատնեաց զնայ, թէ ինքն Որդի եւ բարեխաւս իսկ է վասն մեր, եւ Հոգին բարեխաւս է ի հեծութիւնս անմոռնչս, (Հռոմ. Ը 26): Իսկ հրեշտակքն մատնեկեալ ջեռուցանեն զմեզ սէրն Աստուծոյ եւ զեղջ քաղցր եւ յարտասուս յորդորեն յանկարծակի, եւ սուրբքն ամենայն սրբութեամբ եւ հեղմամբ արեամբն իրեանց սրբեն եւ լուանան զմեզ: Զայս ամենայն գիտելով՝ հաստատեսցուք զսիրտս մեր յԱստուած եւ ի սուրբս նորայ խնդրեսցուք հաւատով, զոր կամիմքն եւ լինիցի մեզ. նախ աշխարհի խաղաղութիւն եւ եկեղեցոյ հաստատութիւն, աւդոց տացէ Տէր բարէխառնութիւն, անդիոց՝ պտղաբերութիւն, ախտացելոց եւ հիւանդացելոց ի պէս պէս ցաւ՝ ձեռնտուութիւն եւ ննջեցելոցն՝ քաւութիւն եւ թողութիւն մեղաց: Եւ բաշխիչն այսպիսի շնորհիս արհնեալ եղիցի յաւիտեանս. ամէն:

ՎԱՍՆ ՀՈԳՈ՝ Ի ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐՄԱՊԵՏԷ ՀՈՒՅՏԵԱԼ²⁴⁹

Հոգի մի է, զի Աստուած մի է: Իսկ զայս Պաւղոս չորս ասէ. երկայնութիւն եւ լայնութիւն, խորութիւն եւ բարձրութիւն: Ի չորիցն Ա (1) զաւրութիւն է, որ ի բազում տեսական իմանի, որպէս ի հրեշտակականն եւ յերկնայինսն էութիւնսն որպէս մարգարէնասէ. Որ էստեղծ զակ՝ ինքն ո՞չ տեսանէ, եւ որ ստեղծ զունկն՝ ինքն ո՞չ լուիցէ (Սղմ. ԶԳ 9): Այսպէս հոգի մի է եւ երեք. հոգի, միտք, բան, եւ բնութիւն՝ Ա (1) զաւրութիւն, Գ (3) ունակական, զոր քարն ունի: Եւ որպէս քար զանազանէ, նոյնպէս եւ հոգի բազմատեսակ ունի զայս զաւրութիւն. բուսականն, ո է տնկականն եւ ներբուսական. տնկականն ունի զկերակրականն, զսննդականն եւ զաճողականն երեք զաւրութիւն: Զգայականն, որ ի Ե (5) բաժանի. տնկականն զունակականն ունի, եւ զգայականն²⁵⁰՝ զտնկականն: Այս Բ (2) ի սկզբան Գ (3), որ զսոսա պարունակէ զայս, Մովսէս եցոյց ի պատմելն նախ զլինելութեան բուսոց եւ տնկոց եւ զանասնոց, ապա՝ մարդոյս: Եւ Պաւղոս առ Եփեսացիսն

գրեալ է. Զձեր հոգի, զշունչ եւ զմարմին (Եփես. Դ 4). հոգի՝ բանականն, շունչ՝ զգայականն, մարմին՝ տնկականն: Ի մեռանել մարմնոյն ոչ մեռանին այս զաւրութիւնքս, զի Դիոնեսիոս եռակի շարժիլ ասէ Աստուծոյ եւ հրեշտակաց եւ հոգւոց ուղական, շրջագա, զորաննուգաբար²⁵¹ ասէ, եւ գնդաձեւ այն է, զի յետ մեկնելոյն ի մարմնոյն է Ե(5) այս ունակական, եւ որպէս ի մարմնի ումամբ կերակրի եւ յետ մահու՝ յիշատակաւ, եւ աճէ գիտութեամբ եւ փառաւք. այս տնկականն: Եւ Աստուածաբան ասէ վասն Թաթէոսի առաքելոյն, թէ՝ Հաւանիմ իմաստնոյ բանի, եթէ հոգի յորժամ մեկնի ի մարմնոյ, ասի՝ ի զգայութենէ. այս զգայականն: Իսկ խաւք եւ բանք ցուցանէ յետ մահու մանաւանդ զբանականն, զի, զոր ունիցի, տացի եւ յաւելցի (Մտթ. ԻԵ 29), զի փոքր ի շատէ գիտեմք (Ա Կորնթ. ԺԳ 9), որ ծածկի, որպէս յարեգակնէ՝ լոյս աստեղաց: Այս հոգի երեք սեռական եւ բազմատեսակ զաւրութեամբ եւ անուամբ եւ բնութեամբ մեզ անգիտելի է: Սա թափանց անցանէ ընդ 34 (360) մասունս մարմնոյ որպէս լոյս ընդ աւդ, եւ հուր՝ յերկաթ, եւ Աստուած՝ ընդ արարածս, եւ կարծէ նոքաւք որքան առողջք գոն: Եւ զի իմացական է՝ ոչ բակձածի ի մարմնի միում մասին, այլ ջայլմամբ յաւուր ներգործէ, ասեմք, թէ անդ է միջնորդ, եւ շաղկապ²⁵² է Աստուծոյ եւ երկնաւորացն. երկրի եւ անասնոց արմանագործեաց Արարիչն պատկեր երկրիմի. միովն ի վեր հայիլ եւ նմանիլ եւ միւսովն՝ ի վայր, եւ խոնարհիլ. արու եւ էգ էմ(՞) դս (՞): Եւ այս յԱստուած ոչ է, զոր ունէր, ետ զանմարմնութիւն եւ զանմահութիւն, եւ զայլսն, զոր ոչ ունէր, աննախանձ ետ. Դաւիթ յարգանդ ասել է Հաւր վասն ծնաւորութեան (հմմտ. Սղմ. ԻԱ 11, Հ 6): Զայն Դիոնեսիոս որովայն յանուանել է, նիւսացի՝ փոխեալ եւ սէր յասել զմայր անունն. դու մի՛ խոռվիր, զի իմաստունք զթիւ արու եւ էգ ասեն վասն գործականութեան եւ հոգւոյն եւ մտացն՝ որովայն, վասն ընդունարան լինելոյն եւ ընտրողական²⁵³ վերագրութեան: Պաւղոս թէ՛ մարմնով եւ թէ՛ անմարմին Աստուած գիտէ: Իմաստունքն ասացեալ են կենդանութիւն ի հոգին է, հան-

251 ձեռ. աննուագաբար

252 ձեռ. շաղկապ

253 ձեռ. ընդորդական

249 Աղբիւր. ՄՄ, ձեռ. 1770, թ. 398ա-399ա:

250 ձեռ. զգայականն

ճարն եւ իմաստութիւն՝ ի միտքն. յայտ է, թէ միտքն յափշտակեցաւ, յորժամ մարմինն կենդանի էր (տե՛ս Բ Կորնթ. ԺԲ 2-4):

Ի ՍՈՒՐԲ ԽԱՉՆ ՓՐԿԱԿԱՆ՝ ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱԴԵՏԻ. ՉԱՂԵՂՆ ԻՄ ԵՂԻՑ ՅԱՄՊՍ, ԵՒ ԵՂԻՑԻ Ի ՆՇԱՆԱԿ ՅԱԽՏԵՆԱԿԱՆ ՈՒՄՏԻՆ ԸՆԴ ԻՍ ԵՒ ԸՆԴ ԱՄԵՆԱՅՆ ԵՐԿԻՐ . ԾՆԴ. 9. 9254

Եւ կանգնեաց Մովսէս զգաւազաննի վերայ ծովուն քառակերպի տպաւք, եւ բանայր առաջի նորա [յ]ատակ ծովուն:

Եւ յանցուցանելն ընդ նա զորդիսն Իսրայէլի ձեւացուցանէր զխորհուրդ աւագանին: Եկեալ նոցա ի Մեռայն, եւ գտին զջուրն դառն: Եւ արկանէր Մովսէս փայտ եղեւնեայ, եւ քաղցրանայր ջուրն յարինակ այնոցիկ, որ խաշին բարձրացուցանելոց էր զբնութիւնս՝ հանելով ի բաց զդառնութիւն մահու թագաւորեալ ի վերայ մեր:

Էհար Մովսէս զվէմն կատարատաշ գաւազանան, եւ ել ի նմանէ վտակ երկոտասան (տե՛ս Ելք ԺԷ 6)՝ նշանակելով զվէմն ճշմարիտ զՔրիստոս, որ ել ի նմանէ ջուրն կենաց երկոտասան վտակաւք սրբոց առաքելոցն:

Էջ մանանայ ի յամպոյ կերակուր ժողովրդեանն Իսրայէլի (տե՛ս Ելք ԺԶ 35) եւ ուսոյց զաշխարհս, թէ հացն կենաց յերկնից իջանէ, եւ կեանք տա աշխարհի:

Էջ Իսրայէլ ի վերայ երկոտասան աղբերացն յԱղիմայ (տե՛ս Ելք ԺԵ 27), որ արինակէր զնորս Իսրայէլ հանգուցեալ յերկոտասան առաքելոցն վարդապետութեան:

Էջ բանակն եբրայեցոց ի հովանի Հ (70) եւ Բ (2) արմաւենեաց (տե՛ս Թիւք ԼԳ 9) առ ի գուշակել զՀ (70) եւ Բ (2) աշակերտսն Քրիստոսի՝ լինել հովանի տապացեալ ազգի մարդկան:

Կազմեաց Մովսէս որդւոց Աբրահամու խորան ժամանակեայ (տե՛ս Ելք, ԻԶ 1), զի ուսցի աշխարհ, թէ փոփոխէ զժամանակս Որդին Աստուծոյ:

Արիւն զոհիցն սրսկեալ ի վերայ ժողովրդեանն (տե՛ս Դեւտ. Զ 27), ի թողութիւն մեղաց աշխարհի՝ մեծագոյ արեամբ Որդւոյ Աստուծոյ:

Արիւն կարմիր երնջացն եւ ձագուց աղաւնեացն մաքրելով զյանցաւորսն (տե՛ս Դեւտ. Ա 14) պատկերագրէր զքաւութիւնն, զոր արար Տէրն խաշին արիւնահեղ ազգացն:

Փայտ մայր խառնեալ ի զոհ հրէիցն նկարագրէր զփայտ խաշին, որ ներկեցաւ արեամբն Յիսուսի. հացն նկարեն եւ գառն խորովեալ հանապազորդ ի սեղան երեսացն (տե՛ս Բ Օր. ԺԶ 1-8) թարգմանէր զանսպառն կերակուր ի սուրբ եկեղեցւոյ:

Քահանայապետ մեծ, յորժամ ձեռնադրէր, արեամբ լինէր դրոշմեալ առ ի ցուցանել, թէ մեծ քահանայապետն Քրիստոս գայ կամաւ ի զենումն մահու:

Աղն խառնեալ ի պատարագահրէիցն նշանակէր զհաւատն, որ խառնելոց էր յամենայն գործս առաքինութեան:

Ջուրն փորձութեան որոշէր զմաքուրսն ի պոռնկաց²⁵⁵, յայտնէր զջուրն սուրբ աւագանին, որ բաժանէ զհաւատացեալսն յանհաւատիցն:

Տարածումն ձեռացն Մովսէսի յաջ եւ յահեակ զարն ողջոյն (տե՛ս Ելք ԺԷ 11-12) քարոզէր զտարածումն ձեռաց Որդոյն Աստուծոյ ի վերայ խաշին լրմամբ աւուրն ուրբաթու²⁵⁶: Ովր եւ Ահարոն յաջմէ եւ յահեակէ կացեալ Մովսէսի ի ժամ վերացման բազկացն նկարէին զերկու աւագակսն, ուստի եւ անտի խաշեալ ընդ Յիսուսի:

Խստովանութիւն ժողովրդեանն ի վերայ գլխոյն կենդանոյն նուիրեալ (տե՛ս Դեւտ. Գ 13) նշանակէր զկենդանին Աստուած, որ մեռաւ մարմնով եւ եբարձ զմեղս աշխարհի:

Քահանայքն, որ սպանանէի զերինջսն եւ այրէին զնայ՝ ընդէ՞ր պղծէին, եթէ ոչ առ ի նշանակել զխաշողսն Քրիստոսի զքահանայսն, որ պղծեցան սպանանելովն զնայ:

Առնէր զքահանայ զթողութիւն մեղաց ժողովրդեան եւ ինքն պղծեալ լինէր՝ յայտ արարեալ, թէ պատարագաւն այն, զոր արարին հրեայքն ի վերայ խաշին, սրբեցին զաշխարհս եւ ինքեանք պիղծք եղեն եւ գարշելիք:

255 Գիրք տղայութեանն Քրիստոսի. տե՛ս Թանգարան հին եւ նոր դպրութեանց. Անկառն գիրք Նոր Կտակարանաց, Վեմստիկ, 1898, էջ 30-34:

256 Տե՛ս Բառնաբասի Ամսակ, ԺԲ 2-4:

ի ճանապարհս Մովսէս ճանապարհորդս քարոզէր եւ ընդ ստուերն Մովսէսի ճշմարտութիւնք հաստատէր:

Արիւն ի ձեռն Մովսէսի զայրիւն Յիսուսի զգուէր եւ պատարագ նոր զպատարագն երկնաւոր նշանակէր, եւ ամենայն խորհուրդն Տեառն ի նա ստուերագրէր, եւ վասն այսորիկ ասէր. Մարգարէ յարուցէ զձեզ Տէր Աստուած (Բ Օր. ԺԸ 15): Եւ համարձակեցաւ եւ կոշեաց զնա մարգարէ, զի իբրեւ զնա գործէր զամենայն ինչ:

Յեսու որդի նաւեայ անուամբն Յիսուսի էր զարդարեալ²⁵⁷, վասն այսորիկ գետն Որդանան պատկառէր ի նմանէ եւ դառնայր յետ (տե՛ս Յեսու Գ) որպէս յաղթեցաւ յորդուոյն Աստուծոյ եւ դարձաւ յետս:

Բարձեալ էր ի տապանակն զխորհուրդ Որդուոյն Աստուծոյ, եւ զնա տեսեալ բարձր պարսպացն երիքովի անկանէին (տե՛ս Յեսու Զ): Անուն Տեառն մերոյ էտ յաղթութիւն եւ զարուսթիւն, քանզի պնդեաց եւ զգունդս երկնից հանդերձ ամենայն լուսաւորաւքն ի խոնարհել աւուրն. նմանութիւն մեծ էր կապիլ արեգականն ի մեծի աւուր խաչելութեան Տեառն մերոյ: Եւ վասն այսորիկ լուան որդուոյ նաւեա բարձունք, զի անուն նորա Յիսուս էր, զլուսաւորսդ զտեղի կացոյց Յեսու, դողացոյց զնոսա, եւ եդ զգլուխ իւր ի մահ խոնարհեցուցեալ ընդդէմ թշնամեացն (տե՛ս Յեսու Ժ 12-13), որ ցուցանէր զՈրդին Աստուծոյ, որ խաւարեցոյց զլուսաւորսդ եւ խոնարհեցոյց զգլուխ իւր հակառակ սատանայի:

Երեսուն եւ Բ (երկու) թագաւորս կոտորեաց Յեսու եւ ետ զերկիրս նոցա որդուոյն Իսրայէլի՝ նշանակեալ զՅիսուս, որ զթագաւորութիւն մահու էսպան հանդերձ դիւացն չարութեամբ:

Ոչ են գիրք եւ ոչ մատեանք, որ զարդարին առանց անուան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Եցոյց զկերպարանն նորա Գեղեղմն յաղթաւրն ի յասր, եւ ի ցաւըն, եւ յարեւն, եւ ի մարտ պատերազմին Մադիանացւոց փորձեաց զգաւրս ի ջուրսն, եւ ընտրեաց զքաջսն ի վատեացն (տե՛ս Դատ. Զ, է), եւ տպաւորեաց զխորհուրդ աւագանին, որ նա ցուցանէ զգաւրութիւնսն հաւատով ի տկարացանհաւատիցն:

Ահարոն քահանայն ի խունկ բուրուառին (տե՛ս Թիւք ԺԶ 47) նշանակեաց զՈրդին Աստուծոյ՝ քաւելով զյանցաւորս եւ արգելով զհրեշտակն մահաբեր:

Փէնէհեա քահանան, որ սպան զՔաղբի եւ զԱմրի (տե՛ս Թիւք ԻԵ), եցոյց զՈրդին Աստուծոյ, որ ծննդեամբ իւրով խաբանեաց զախտ պոռնկութեան:

Դաւիթ թագաւոր, որ վասն գառանցն էսպան զառուծն եւ զարջն, յայտնեաց, թէ Տէրն նորա սպանանելոց է զսատանայ սակս Ադամայ եւ գառանց եկեղեցւոյ: Յայտնապէս ուսոյց Դաւիթ զամենայն խորհուրդս Տեառն իւրոյ եւ ասաց. Յարիցէ Աստուած եւ ցրուեցին ամենայն թշնամիք անորա (Սղմ. Կէ 2), քանզի յարեաւ Տէր նորա եւ ցրուեցան որդիք նորա ապստամբ[ը]ք:

Եղիա մարգարէն, որ պարզեցաւ ի վերայ մեռելոյն (Գ Թագ. Ժէ 17-24)՝ զխաչն քարոզեաց կանգնեալ ի վերայ մեռելոյն Ադամայ Յիսուսի, եւ ետ նմա կեանս: Վերանալ նորա զհամբարձումն Տեառն իւրոյ յայտնեաց, եւ մաշկեակն, զոր ետ հոգւովն աշակերտին իւրոյ, քարոզեաց զհանդերձ աւագանին, զոր ետ Տէրն առաքելոցն Հոգւովն Սրբով եւ նոքաւ՝ ամենայն հաւատացելոց: Եւ սրբութեամբ կուսութեան զվարս Տեառն իւրոյ նշանակէր նա:

Արգելումն անձրեւին Եղիայի ի վերայ մեղուցելոցն (տե՛ս Գ Թագ. Ժէ 1-7) նշանակէր զարգելումն երկնաւոր շնորհին Յիսուսի յանհաւատից հրէիցն:

Անիծանելն զթագաւորն հրէիցն (տե՛ս Դ Թագ. Ա) ցուցանէր, թէ Յիսուս առնու զթագաւորութիւն հրէից:

Եղիսէէ սափորն նոր եւ ալիւրն²⁵⁸, զոր արկ ի վտակս ջուրցն (տե՛ս Դ Թագ. Բ 19-22), եցոյց զհամեմէն Յիսուսի զբնութիւնս խորհրդով Կուսին, եբարձ զանազանութիւն եւ զամլութիւն եւ արար զնա բազմաձնունդ²⁵⁹:

Յարուցանելն նորա զմեռեալս ի կենդանութեան իւրում, քարոզէր զմեռեալն, զոր յարոյց Տէրն ի կենդանութիւն իւրում, եւ որ յետ մահուն

258 Բնագրում՝ «աղ»:

259 Նկատի ունի Մարիամ Աստուածածնի խորհրդապատկերը հանդիսացող Մայր եկեղեցու զաւակների բազմությունը:

յարոյց՝ նշանակեաց զմեռեալն, որ զկնի մահուան Տեառն յառնեն յետ յարութեան նորա:

Ետես եզեկիէլ ի վերայ կառաց զՈրդին Աստուծոյ՝ խորհուրդ հաշին, եւ զմայր գուշակէր դուռն փակեալ:

Տեսանէր Դանիէլ ընդ ամպս երկնից եկեալ իբրեւ Որդի մարդոյ եւ վէմ հատեալ ի լեռնէն առանց ձեռիմ (Դան. Բ 34), այսինքն՝ զծնունդն ի Կուսէն առանց ամուսնութեան:

Եղեւ նշանթաղման եւ յարութեան սքանչելին ի մարգարէս Յովնան, որ էջ յորովայն կիտին եւ ել անտի անապական երէքարեայ (տե՛ս Յովն. Բ 1):

Գիտաց զանունն մարգարէն Զաքարիայ եւ կոչեաց զանուն նորա՝ ծագումն լուսոյ արեւու (Զաք. 2 12), եւ անուանեաց թագաւոր՝ յեծեալ յէջ եւ յաւանակ (տե՛ս Զաք. Թ 9) անճառ խոնարհութեամբ:

Հարցանէր իմաստունն Սողոմոն, թէ՛ Որ ժողովէ զհողմ ի գոգ իւր եւ զջուրս՝ ի ծոց իւր, եւ ունի զծագս երկնի՝ զի՞նչ անուն է նորա (Առակ. Լ 4): Եւ ուսաւ աշխարհ, թէ Տէրն է ամենայնի, որ ջրով աւազանին ժողովէ զհողմ Հոգւոյն յեկեղեցի իւր, որպէս ինքն ի ջուրն ծրարեցաւ ի գոգն Մարիամու:

Ծերն Յակոբ ի ժամ մահուն իւրոյ ետ զնշանն, որ գալոց էր յաշխարհ. Կապեացէ, ասէ, զորթոյ զյաւանակ իւր եւ զորթոյ գնդակէ զորդի իշոյ իւրոյ (Ծնդ. ԽԹ 11), քանզի կապեացն զնմանէ առաքեալքն եւ ի բանս նոցա՝ որդիք հեթանոսաց:

Լուսացէ զհնուով զպատմութեան իւր եւ արեամբ խաղողոյ՝ զհաւնդերծս իւր, (Ծնդ. ԽԹ 11), այսինքն՝ զեկեղեցի նշանակելով՝ արեամբ Յիսուսի սրբեալ ի մեղաց:

Մարգարէն Ամովս ետես զնա ի վերայ պարսպին, եւ վէմ աղամանդեայ²⁶⁰ ձեռս նորա (տե՛ս Ամովս է (7), զի հանդերձեալ էր հաստատել զեկեղեցի իւր սուրբ:

Ի զլուխս աճմանաշխարհին կայր արդարն եւ քահանայն առաջին պատարագին Հաբէլ, որ ընդ պատարագելն իւրում եւ ինքն ընդ նմին պատարագեցաւ ի խորհուրդ Միածնին:

Սէթն գեղեցիկ, որ նման էր պատկերին Ադամայ, նշանակէր զՈրդին Աստուծոյ, որ ամենեւիմբ նման է Հաւր իւրում Բարձրելոյ:

Ենովս, որ ուսոյց աշխարհի կանչել²⁶¹ զանունն Տեառն Աստուծոյ (տե՛ս Ծնդ. Դ 26), զՏէրն իւր գուշակեաց, որ զարթոյր զարարածս ի յուսումն եւ ի փառս Հաւր եւ Հոգւոյ Սրբոյ:

Յակովբ նահապետն խայտանկար գաւազանաւ եւ ճակմակէն²⁶² զառամբն (տե՛ս Ծնդ. Լ32) նշանակեաց զզանազանութիւն որդւոց իւրոց, այլ եւ զորդւոց աւազանին ի պէս պէս շնորհս: Եսայի հայեցեալ ի կոյսն Մարիամ, եւ որպէս առաջի աշաց նկատեալ զնա ասաց. Ահա կոյս յղացի եւ ծնցի որդի (Ես. է 14):

Երեմիա մարգարէն անկաւ ի գուր անջրդի (տե՛ս Երեմ ԼԶ 6) եւ եցոյց զՏէրն ի սրդ (՝) էջ ի գերեզման ցամաքեալ ի հեղեղաբեր²⁶³ խճոյ:

Պատմութեան Յովսեփայ, որ ներկեալ էր արեամբ (տե՛ս Ծնդ. Լէ 31), գուշակեաց զարիւնաթաթաւ մարմինն տէրունական, յորժամ տարածեալ կայր ի վերայ հաշին:

Զնա աստուածաբանէր Մաղաքեայ արեգակն արդարութեան բժշկութեան թելաք (Մաղ. Դ 2) երեւեալ:

Զարմանալին Ամպակում զնա տեսանէր ի մէջ երկու գազանացն (տե՛ս Ամբ. Գ 2). գաւազակքն ստորագրելով յաջմէ եւ յահեկէ Տեառն դատապարտել, այլ ոչ թագեալ Աստուածութիւն նորա ի մէջ վնասակարացն:

Զձայն նորա լուեալ Յովէլ երանելին, զոր արձակեաց ի վերայ հաշին ուժգին գոչմամբ զԷլի, զԷլիմ (Մտթ. Իէ 46, Մրկ. Ժե 34) կարգաւով առ Հայր, որ ասաց. Տէր ի Սիովնէ գոչեացէ եւ յԵրուսաղէմ տացէ զձայն իւր (Յովէլ Գ 16):

Այլ ոչ թուին ալիք ծովու ի նաւորդաց եւ ոչ խորհուրդքՈրդւոյն Աստուծոյ վարդապետաց: Արդ, հա՛ն նշան նորա յայտնի է ի մարգարէիցն, եւ ամենայն ճանապարհք եւ գործք նորա՝ ի գիտնականաց, զի խոստովանին ամենեքեան, թէ անթարքմանելի է զյայտնելն իւր նոցա, խաւսեցան եւ զծածուկն նորա ոչ քննեցին, եւ որ քան ոչ էր

261 ձեռ. կէջել

262 Զիք ՆԲՀ. թերևս՝ խայտախարիւ, խայտաբղետ

263 Զիք ՆԲՀ

260 ձեռ. անդամանդեայ

եկեալ Որդին Աստուծոյ, պէտք էր մարգարէից հորդել նմայ ճանապարհ հաւատով ի սիրտս մարդկան: Եւ յորժամ եկն եւ բացաւ խորհուրդ տնարէնութեան իւրոյ, այնուհետեւ ոչ են պէտք մարգարէիցն եւ ամենայն խորհրդոյ կատարումն. մարգարէքն ասացեն զնա՝ Լոյս ի լուսոյ²⁶⁴, եւ առաքեալքն գիտացեն զնա՝ Բանդ²⁶⁵ ի Հաւրէ, որով փառաւորի Հայր ի Որդոյ եւ ընդ Սուրբ Հոգւոյն յամենայն գոյիցս այժմ եւ միշտ եւ յաւիտեան:

ՀԱՐՏՈՒՄՆ ՎԱՅՐԱՄԱՅ ԻՇԽԱՆԱՅ ԻՇԽԱՆԻ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԻ ՎԱՆԱԿԱՆ ԳԵՐԱԼՈՅՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ²⁶⁶

Հարցումն. Երկու աղան ի մի երկանս. մինն առցի եւ միւսն թողցի (Մտթ. ԻԴ 41):

Պատասխանի. Յառաջնոցն յայտնի է սրբոցն բանք, զի Բ (2) իցեն աղքատ՝ ոմն որպէս Ղազարոս եւ ոմն թողեալ որպէս այն, որ հանդերձ հարսանեաց ոչ ունէր, եւ որպէս այն, որ ոչ զեւղն բաւական ունէր ճրագին: Բ (2) աղան. որպէս մի անգամ խաւեցաւ Աստուած եւ երկու զայս լուաք: Եւ որպէս տուաւ նշան ի հովուէ միոջէ ումեմն որպէս²⁶⁷ բեւեռ եւ ումեմն որպէս²⁶⁸ խթան եզին: Բ (2) աղան ի մի երկան. թեփ եւ ալիւր. թեփ՝ արէնքն եւ նաշիհ՝ Աւետարանն, ըստ այնմ, թէ՛ „նախ խոտն եւ հասկն եւ ապա ծաղիկն, եւ ցորեանն ատոք հասկին,, (Մրկ. Դ 28): Վասն որոյ ցորեանն անկեալ յերկիր, եւ մեռեալ բազում բազում արդին առնէ (տե՛ս Յովհ.ԺԲ 24): Երկան է բերանն. Բ (2) աղան, այսինքն՝ տղայոց ի Քրիստոս կաթն եւ կատարելոցն՝ հաստատուն կերակուր՝ զիմաստս. մին բերան խաւսի զաստուածային եւ զմարդկային գիտութիւն: Բ (2) աղան, այսինքն՝ Բ (2) բերան խաւսին զմինն եւ հաղորդին ի մի սեղան. մինն ընդունելի եւ միւսն՝ ոչ, որպէս Պետրոս եւ Յուդաս: Բ (2) աղան. մինն որպէս սմինտր. նախ՝

կորկոտն եւ ապա՝ նաշիհ: Արէնքն անգործ որայ, Աւետարանն սուրբ՝ ցորեանն, առաքեալքն՝ կորկոտիչք, Յոհան եւ այլքն՝ աղալ ի նաշիհ իսկ ժամանակին՝ վարդապետքն սեղանակազմ:

Հարցումն. Աբրահամու եւ Յոբայ գրեալ է, թէ՛ մեռաւ ալեւորեալ եւ լի աւուրքք (տե՛ս Ծնդ. ԻԵ 8, Յոբ. ԽԲ 16), իսկ Ադամայ եւ Նոյի՝ ոչ, այլ պարգաբար, թէ՛ մեռաւ (տե՛ս Ծնդ. Ե 5, Թ 28):

Պատասխանի. Ադամ թէ՛ ալեւորեալ չէր. կարծիս էին առեալ, թէ՛ ալեւորեալ էր՝ աստուածացեալ էր, ալեւորեցաւ, բայց լի աւուրքք չէր մի վասն այն, որ Ռ (1000) ամն յաչս Տեառն որպէս ար մի է (Սղմ ԶԹ 4), իսկ Ռ (1000) ամ չապրեցաւ, եւ վասն այն, զի թէպէտ շատ ապրեցաւ՝ ար մի, եւ արն լոյս թարգմանի եւ իմանալի լոյս՝ առաքինութիւն: Նա ի դրախտին ընդ մինԳ (3) մեղաւ: Իսկ Նոյ թէպէտ արգար եւ կատարեալ, այլ յազգն համեմատեալ, որպէս վկայէ Փիլոն իմաստասէր²⁶⁹: Իսկ Աբրահամ եւ Յոբ ի սակաւուն լցին զարն Աստուծոյ առաքինութեամբ:

Հարցումն. Զի՞նչ է, որ Հայր Որդի չասի եւ ոչ Որդի՝ Հայր եւ ոչ Հոգի՝ Հայր կամ Որդի:

Պատասխանի. Զի եզր եւ միջոց ոչ է հնար մտաց, որ ի ներս բան գտանէ կամ բաժանումն փոփոխէ. վասն զի Աստուածութիւն փոփոխի ոչ եւ ոչ այլայլի:

Հարցումն. Ո՞ր է անուն Աստուծոյ ի վեր քան զամենայն անուն (Փիլիպ. Բ 9):

Պատասխանի. Հարն՝ Հայր եւ Որդւոյն՝ Որդի, Հոգւոյն՝ Հոգի Սուրբ:

Հարցումն. Ո՞ր են, որ մարգարէացան եւ մարգարէացեալ տեսին:

Պատասխանի. Յովհաննէս եւ Ժերունին²⁷⁰, եւ Մովսէս եւ Նոյիս ի Թաբաւր:

Հարցումն. Ո՞վ են, որ տեսին եւ ապա այլ մարգարէացան:

Պատասխանի. Ծերունին ասէ. Սա կա ի գլորումն եւ ի կանգնումն բազմաց եւ ի մշան հակառակութեան (Ղուկ. Բ 34) եւ Ընդ քո իսկ անձդ անցցէ սուր (Ղուկ. Բ 35): Եւ Յովհաննէս ասէ. Սա է մա, որ զկնի ի գայ (Յովհ. Ա 30), եւ

264 Տե՛ս Խորհրդատետր սրբազան Պատարագի, ըստ արարողութեան եկեղեցեացս Հայաստանեայց, Կ. Պօլիս, 1787, էջ 14:

265 ձեռ. Բանդ

266 Աղբիւր. ՄՄ, ձեռ. 1764, ր. 377 ա– 379ա

267 բառս լուսանցից

268 բառս լուսանցից

269 Տե՛ս Փիլոնի Երրայեցոյ Մեկնութիւն Ծննդոց, ՂԶ-ՂԷ (էջ 68-69):

270 Նկատի ունի Յովհաննէս Մկրտչիւն ու Սիմէոն Ժերունուն:

թէ՛ Դու առ ի՞նչ գաս (Մտթ. Գ 14): եւ Մովսէս եւ եղիայ խաւսէին վասն ելիցն ի Խաշին, եւ նախավկայն հոգւոյ ակամբ ընդ աջմէ Հաւր նստեալ ետես (տե՛ս Գործք է 55):

Հարցումն. Աւետարանչացն անմիաբան գրելոյն պատճառ ի՞նչ էր:

Պատասխանի. Կարի աւգուտ արար Հոգին, զի մի՛ կարծիս առցեն, թէ բան եղեալ ընդ միմեանս ակն առեալ վարդապետին իւրեանց գրեցին:

Հարցումն. Այն բանն, որ Փրկիչն գրեաց առաջի փարիսեցւոցն, որ ածին զշնացաւոյ կինն առաջի նորա (տե՛ս Յովհ. Ը 1-11)²⁷¹:

Պատասխանի. Զայս մին բան ասեն. թէ որ սիրտն սուրբ է՝ ի խղճէ մտաց նա դատեցի զնա, այն բանն ամենեցուն հասարակացէ, որպէս մանանայն յանապատին:

Հարցումն. Մեռայն (տե՛ս Ելք ԺԵ 23):

Պատասխանի. Զուր էր դառն, մահաբեր. է(7) ակն, որ յառաջն էառ, ասաց. Վա՛յ մեռա. Մեռա անուանեցաւ:

Հարցումն. Մանանայն (տե՛ս Ելք ԺԶ 13-31)

Պատասխանի. Յորժամ իջաւ այլ չէին տեսել բոլոր որպէս գինձ սպիտակ, որպէս սառն, պարարտ որպէս ձէթ, քաղցր որպէս մեղր: Յիրար ձայն տային. Ի՞նչ է սա հարցանէին. նոցա լեզուովն ինչ անուանեցաւ:

Հարցումն. Ո՞ր ցեղ լինէր:

Պատասխանի. Զինչ ի հացէ առնէին, ամէն լինէր:

Հարցումն. Ուստի՞ է մեղու:

Պատասխանի. Ոչ յարարչութենէ, այլ յայսկոյս ջրհեղեղին մեղուշ երինջ եւ թէ արջառ մորթեալ քարով ծածկեցին, որդնեցաւ եւ մեղու դարձաւ Աստուծոյ նախախնամութեամբն: Պարսիկ առասպելն Զրուանա ասէ, թէ նա արար:

Հարցումն. Ուստի՞ է բուրուառն:

Պատասխանի. Սրբութիւնք սրբոցն ամենայն կահն ոսկի էր, եւ այն այլ ոմանք ասեն, թէ որպէս գաւազանին ծաղկիլն նշա նեղեւ (տե՛ս

Թիւք Ժէ), նոյնպէս եւ այն ընդդէմ հակառակողացն:

Հարցումն. Արիւնն, որ ի քաւութիւն դնի:

Պատասխանի. Անյայտ լինէր, որպէս արիւնն Գրիստոսի ի վայր երկիր չհեղաւ:

Հարցումն. Աղեքսանդր:

Պատասխանի. Երեք մասին եւ կիսոյ տիրեալ աշխարհիս, ասէ:

Հարցումն. Ուստի՞ է սկիզբն աբեղայու թեան:

Պատասխանի. Յենովքայ, որ սկսաւ ապաշխարել, արար այսու աւրինակաւ ինքեան հանդերձ սգոյ, եւ ստացաւ վարս պարկեշտս զայն ձեւ, եւ փոխեցին ի հնումն, եւ ի նորումս քահանայիցն եւ կրօնաւորաց զարդ, եւ պատերազմողաց զէն եւ ի պճնումն աբեղայից, որպէս սուգ սգաւորաց:

Հարցումն. Ալէլուա, ալէլուա:

Պատասխանի. Բարի է սաղմոսերն, կամ Աւրինեցէք զՏէր, կամ, Գովեցէք զոր Էմն, եւ ասորերէն՝ Փառք Աստուծոյ:

Հարցում. Որչա՞փ խաւսեցաւ Աստուած ընդ առաջինսն՝:

Պատասխանի. Ընդ Ադամայ եւ Եւայի Ե (5) անգամ, ընդ Կայենի՝ Դ (4), ընդ Նոյի՝ Զ (6), որդւոց՝ Բ (2), Աբրահամու՝ Ը (8), Սահակայ՝ Գ (3), Յակոբայ՝ Ե (5), Ղաբանու ի տեսլեանն Ա (1), ընդ Մովսէսի՝ ԺԿԴ (164), Ահարոնի առանձինն է (7), Մովսէսի եւ Ահարոնի Ժէ (17), Մովսէսի եւ Ահարոնի եւ Մարիամու եւ Եղիազարու՝ ԻԴ (24), Մովսէսի եւ Ահարոնի եւ Մարիամու Ա (1), Մովսէսի եւ Եղիազարու Բ (2), Հագարու Դ (4), Բաղամու Զ (6). հրեշտակովն՝ Բ (2), իշովն՝ Ա (1). միանգամայն բովանդակ՝ ՄԿԱ (261):

Հարցումն. Աւազակն, որ յաջմէն

Պատասխանի. Դեմաս:

Հարցումն. Ազգաւ:

Պատասխանի. Հեթանոս էր, բայց խոստովանութիւն՝ բուն հրէի աբրահամեան²⁷²:

Հարցումն. Որ յահեկէն:

Պատասխանի. Թէպէտ հրէայ է, այլ տրտունջն անհաւատ հեթանոսի. անունն՝ Կեստաս:

Հարցումն. Ո՞ր ապտակեաց:

271 Աւետարանական այս դրուագը, որ Աւետարան պարունակող ոչ բոլոր ձեռագրերում է առկա, յայտնի է «Իրք կնոջն շնացելոյ» խորագրով:

272 ձեռ. ամբրահամեան

Պատասխանի. Մաղքոս:

Հարցումն. Ո՞րքա:

Պատասխանի. Ոչքոր:

Հարցումն. Ո՞ր զլեղին եբեր:

Պատասխանի. Ռոաքոս:

Հարցումն. Ո՞ր խոցեաց (տե՛ս Յովհ. ԺԹ 34)

Պատասխանի. Ղունկիանոս: Ասեն, թէ մի ակն կոյր էր: Հրամայեաց խոցել, թէ սուտամեռուկ չլինի: Ասացին, թէ ել արիւն եւ ջուր: Նա խնդրեաց զտէգն եւ շաւափեաց, եւ զարիւն յակն հասոյց եւ ի լոյս երեկ, որպէս եւ գրեալ է, ետես եւ հաւատաց (հմմտ. Յովհ. Ի 29):

Հարցումն. Սամարհուոյն անունն, յորմէ զջուրն խնդրեաց զՏէրն (տե՛ս Յովհ. Դ 7-9):

Պատասխանի. Լուսինա:

Հարցումն. Տեռատեսին (տե՛ս Մտթ. Թ 20):

Պատասխանի. Փոտինա:

Հարցումն. Քանանուհուոյն (տե՛ս Մտթ. ԺԵ 22-28):

Պատասխանի. Վերինէ:

Հարցումն. Դպիրն, որ հարց. Ո՞ր պատուիրան մեծ է (տե՛ս Մտթ. ԻԲ 36):

Պատասխանի. Նիկոմիկոս, զոր պէտս կոչեն, որ է փիլիսոփա, որ թարգմանի էակաց, իսկից դիտող: ԺԱ (11) արուեստ է. բանական, քերական եւ քերթող եւ ճարտասան եւ այլքն: Իսկ փիլիսոփայն ամենայնի գլուխ:

ԺԲ հարցումն. Կա պահած յերկրի:

Պատասխանի. Կա ի լեղոյն եւ ի փշոյն եւ ի հացէն, զոր աճեցոյց:

Հարցումն. Փշեղէն պսակն որպէ՛ս:

Պատասխանի. ԿԵ (65) մոլորեցին եւ յամենայն ազգ փշոյ ի ներս հարին, եւ զայդ, որ ի ջրավայրի է, ի լինել կոծոծ թագաձեւ, ի վերայ դրին:

Հարցումն. Քանի՞ աճեցոյց հաց:

Պատասխանի. Գ (3) անգամ. Բ (2) ցորենոյ եւ Ա (1) գարոյ, զոր Յովհաննէս ասէ (տե՛ս Յովհ. Զ 11-13):

Հարցումն. Որպէ՛ս արար զգինին (տե՛ս Յովհ. Բ, Դ 46):

Պատասխանի. Գոյնն ջրոյ, եւ համն եւ ուժն՝ գինոյ:

Հարցումն. Է՞ր էր այն:

Պատասխանի. Իւր աւրինակ, զի կերպով մարդ, եւ Բանին միութեամբն՝ Աստուած:

Հարցումն. Փուշդ որպէ՛ս բուսան:

Պատասխանի. Արմաւի եւ ունապի, այլ այսպիսիքս ի բնէ են, խոտոյ եւ բանջարոյ եւ մանր թփոյ, եւ այլ այսպիսիքս յետո բուսան: Քեզ վկայ, որ թէ զկեղեւն հանես, փուշն ի մորթն է եւ ոչ ի բնումն:

Հարցումն. Եղեգան հարեալ:

Պատասխանի. Ծոթաւորն միշտ կանաչ է, տրցակ եղէգն ատուցին եւ զամայն լեղով եւ քացախով լցին եւ ի տրցակին մէջն դրին, ի վեր ի բերանն ի մաւտ տարան:

Հարցումն. Ի վէրս ցաւոց իմոց յաւելին (Սղմ. ԿԸ 27):

Պատասխանի. Լեղի, գրեալ է, նոքա Բ (2) անգամ ետուն, եւ այլ ասեն, թէ լեղի ասեն դառն քան զլեղի:

Հարցումն. Քանի՞ ժողովեաց զվկայսն Մարութայ ի նփրկերտ:

Պատասխանի. ՄՁՈ²⁷³ (1280):

Հարցումն. Որպէ՛ս երթա արեգակն:

Պատասխանի. Դլորմամբ, որ է հոլովմամբ:

Հարցումն. Որպէ՛ս գիտացին:

Պատասխանի. Առաջնոցն զգայութիւնքն սուրբք էին, այլ աստուածուսոյցք:

Հարցումն. Որչա՞փ ասի նա մեծ:

Պատասխանի. Ոմանք բազմապատիկ ասացին մեծ քան զցամաք երկիր, բայց որ ստուգեալ են Շ (500) ասպարեզ ասեն:

Հարցումն. Յովհաննէս զի՞նչ ասէր ի մկրտելն զՔրիստոս, կամ զայլ մարդիկն:

Պատասխանի. ԶՔրիստոս այսպէս ասէ. Որդի Աստուծոյ մկրտի եկեալ յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, եւ մարդոյն՝ այլ. Ես մկրտեմ ձեզ ջրով, որ զկնի իմ գայ, նա մկրտեսցէ ձեզ հրով եւ Հոգւովն Սրբով (Մտթ. Գ 11), առաքեալքն, եթէ՛ ես մկրտեմ յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:

Հարցումն. Ծեր:

Պատասխանի. Մեռեալ գեռուն:

Հարցումն. Քանի՞ տար յետ, եւ այք ի կուպաշտութիւն մտին:

Պատասխանի. Պ (800):

Հարցումն. Զառաջին պատարագն Յակոբոս եղբայր Տեառն ու՞մ արար:

Պատասխանի. Զի այլ քրիստոնեայ ոչ գոյր մեռեալ. ասեն, թէ Աղամայ արար:

Հարցումն. Քանի՞ ար կոտորած մանկանցն:

Պատասխանի. Յունվարի 2 (6)-էն մինչեւ ի մայիսին ի մինն:

Հարցումն. Աղաւթքն, որ Յովհաննէս ուսոյց աշակերտաց իւրոց:

Պատասխանի. Ասեն, թէ այսէր. Հայր սուրբ, ուսո մեզ զբան քո, Որդի սուրբ ցոյց մեզ զերեսս քո, Հոգի Սուրբ, սրբեա զմեզ սրբութեամբ քո: Եփրեմի ներբողեանն այլ ցոյց զայս ի տալ, թէ դահիճ ետես ի բանտին, զի այսպէս աղաւթէր:

Հարցումն. Վասն Զատիկին շաբաթուն, որ մենք ի լուծանել ենք, եւ այլք զմեզ ի հայհոյել:

Պատասխանի. Ի Գրոց է ճշմարիտ, զի մեծն Կիրեղ Ալեքսանդրացի առ Թէոդոս թղթին, որ վասն Զատիկին, Ինն եւ Ժ (10)-երեակն յիշէ, ասէ, թէ՝ Վասն այն լուծանեմք յերեկորեա, որ ի վաղին տաւնեմք²⁷⁴: Եւ եւագր՝ Բարսեղի եւ Աստուածաբանի աշակեր է, ասէ, թէ՝ Պահքն քո մինչեւ ի Ժ (10) ժամն եղիցի²⁷⁵: Եւ յընթերցուածին ասէ. Ի Ժ (10) ժամն մտանէ եպիսկոպոսն եւ լուցանէ զկանթեղն, յայտ է, զի յայն ժամն յիշանել է լոյսն:

Հարցումն. Պոռնիկն, որ աւծ զՏէրն:

Պատասխանի. Հերովդի դայեակն են յասել:

Հարցումն. Սողոմոն զդեւն ծառայեցոյց:

Պատասխանի. Որպէս այլ շատ առասպել եւ մին զայս ասեն, թէ ի Մովսէսի եւ Աստուած

անուն ի վերայ, զայն մատանի արար եւ այնով կնքեալ արգել: Բայց մեք ի մեր վարդապետացն զայս լուաք, թէ երկիրն ի վայր կլաւ զայն բեկորն:

Հարցումն. Գաւազանն Մովսէսի:

Պատասխանի. Ընդ իւրեանն ի հետ ծածկեցաւ, որպէս եղիայի մաշկեակն ընդ եղիսէի:

Հարցումն. Սուրբն Գրիգոր հասակաւ որպէ՞ս:

Պատասխանի. Ինն թիզ երկայն, կորովի, պարկեշտ, Տրդատ՝ Ժ(10) թիզ, Հռիփսիմէ՝ ԺԱ(11) թիզ՝ չքնաղագեղ:

Հարցումն. Տէր ողորմեա ի՞նչ սահմանաւ է:

Պատասխանի. ՃԾԳ (153). Տէր եթէ շրթանցն է, որ է կատարեալ թիւ, եւ հաւատ՝ Սուրբ Երրորդութեան փրկութիւն: Իսկ կանոնագլուխն յոբէլական փողոյն խորհուրդ, ըստ երիքովական կորուստ (տե՛ս Յեսու 20)՝ յարինակ դժոխոց աստ²⁷⁶: ԾԳ (53) Տէր ողորմեա նոյն խորհրդովն յոբէլին եւ հաւատոյն:

Հարցումն. Ուստի՞ է Սամոսատցին²⁷⁷:

Պատասխանի. Ասորի է ազգաւ²⁷⁸:

Հարցումն. Նեստոր²⁷⁹:

Պատասխանի. Ֆռանգ:

Հարցումն. Փլաբիանոս եւ Դիողորոս²⁸⁰:

Պատասխանի. Հռոմ:

Հարցումն. Կատարումն Լուսնի:

276 Եղիշէ, Մեկնութիւն Յեսուայ եւ Դատաւորաց. տե՛ս Մատենագիրք Հայոց, Ա, էջ 939 [17], նաև աշխարհաբար թարգմ. հետեւեալ հրատ. մէջ. Աւանդութիւններ, Մեկնութիւններ, Շատեր, աշխատ. Յ. Քէօսէեանի, Եր., 2017, էջ 27:

277 Նկատի ունի քրիստոսաբանական հերձուածի պարագլուխ Պօղոս Սամոսատցուն (Գ դար):

278 ձեռ. ազգ ազգաւ:

279 Նեստոր. Կ.Պոլսի եպիսկոպոս (428-431, մահ. 451/452), որի քրիստոսաբանութիւնը հիմքը դարձաւ Քաղկեդոնի ժողովի ընդունած վարդապետական դրոյթների:

280 Փլաբիանոս. Անտիոքի եպիսկոպոս (մահ. 404), հակաարիոսեան հոսանքի առաջամարտիկներից մեկը, եղել է Յովհան Ոսկեբերանի ու Թէոդորոս Մոփսուեստացու ուսուցիչը: Դիողորոս Տարսուցի (մահ. 391/39). աստուածաբանութեան անտիոքեան դպրոցի երևելի ներկայացուցիչ, որին շատ բարձր է գնահատել Յովհան Ոսկեբերանը:

274 Տե՛ս Կիրողի՝ ի Պարապմանց գրոց, ի Թէոդոսի, զի պարտ է ուտել երեկուն ճրագալուցին, տե՛ս Վարդան Այգեկցի, Գիրք հաստատութեան եւ Արմատ հաւատոյ, աշխ. Տ. Ծ. քնն. Հայրապետեանի, Եր., 1998, էջ 225:

275 Տե՛ս Սրբոյ Բորն մերոյ Եւագրի Պոմոսացու վարք եւ մատենագրութիւնք, աշխ. Հ. Բարսեղ վրդ. Սարգիսեան, Վեմետիկ, 1907, էջ 139, ուր սակայն Թ է Ժ-ի փոխարէն:

Պատասխանի. Պհ2 (846) թվականին կատարումն ասեն իրանի եւ այլ ոչ բերանալ:

Հարցումն. Փողն զի՞նչ գոչէ:

Պատասխանի. Ահա փեսա գա, արիք ելէք ընդառաջ նորա (Մտթ. Ին 6):

Հարցումն. Նոյի տապանն ինչ արինակ է:

Պատասխանի. Երկրիս արինակ է եւ մարդոյս մարմնոյս:

Հարցումն. Ձափն քանի՞ է:

Պատասխանի. 3 (300) կանգուն երկայնք եւ 5 (50) լայնքն, եւ 1 (30) բարձր, եւ մի կանգուն վերի ծայրքն:

Հարցումն. Կանգունն որչա՞փ է:

Պատասխանի. Մինն կանգունն մին գիրկ²⁸¹ է, բայց մեր կանգունովս թուի, թէ 2 (6) կանգուն²⁸² եւ թիզ մի, որպէս եզեկիէլ տեսանէր եղէզն է (7) չափ, որով զտաճարն չափէր հրեշտակն (տե՛ս եզեկ. Խ 5-10):

281 ձեռ. կիրկ:

282 ձեռ. կանկուն